

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ - 2007

Հեղինակների կողմից

Հայաստանում, արդեն մի քանի տարի, մանկական աշխատանքը մասնագետների մտահոգության առարկա է: Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների հիմնախնդիրներով զբաղվող զանազան պետական և ոչ պետական կառույցներ, հասարակական կազմակերպություններ, իրենց փորձից ելնելով, երևոյթի վերաբերյալ տարբեր պատկերացումներ ունեն: Մանկական աշխատանքի երևոյթի մասին գիտական և ամբողջական պատկերացում ունենալու անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացած խնդիր է երկրում:

Շնորհիվ ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի տրամադրած միջոցների, այդ խնդրի լուծումը հնարավոր դարձավ սույն հետազոտության տեսքով: Այդ կապակցությամբ հեղինակներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Հիմնադրամին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում հետազոտության կազմակերպման համար ստեղծված աշխատանքային խմբի բոլոր անդամներին, հատկապես տիկ. Նաիրա Ավետիսյանին (ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամ)` ցուցաբերած բազմաբնույթ աջակցության և արժեքավոր խորհուրդների համար:

Երախտիքի խոսք

Մանկական աշխատանքի երևույթը տարածված է ողջ աշխարհում: Գրեթե բոլոր երկրներում այն համարվում է անընդունելի, քանի որ հակասում է երեխաների և ամբողջ հասարակության շահերին: Ուստի ամենուրեք ջանքեր են գործադրվում երևույթը՝ եթե ոչ վերացնելու, ապա գոնե մեղմելու համար: Բարեխախտաբար, Հայաստանն այն երկրների թվում չէ, որոնք մանկական աշխատանքի տարածվածության տեսակետից բարձր ցուցանիշներ ունեն, սակայն, այնուամենայնիվ երևույթն առկա է նաև մեր երկրում: Անչափահաս անդամներ ունեցող ընտանիքների սոցիալական անապահովությունը, աղքատությունը և այլ գործոններ ստիպում են շատ երեխաների աշխատանքի անցնել ավելի վաղ տարիքում (հաճախ օրենքին հակասող պայմաններով), քան ընդունված է հասարակության մեջ:

Երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ստեղծումը յուրաքանչյուր երկրի համար առաջնահերթ խնդիր է: Հայաստանում, երեխաների պաշտպանության ոլորտում ընթացող արդի բուռն բարեփոխումների շրջանում երեխաների աշխատանքի հիմնախնդիր ուսումնասիրությունը շատ արդիական է, որովհետև անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպիսի՝ տարածվածություն և դրսնորման ձևեր ունի մանկական աշխատանքը մեր երկրում, ինչպիսի՞ն է աշխատող երեխաների «պատկերը» սերի, տարիքի, բնակավայրի, ընտանիքի կարգավիճակի, կրթության և առանցքային այլ փոփոխականների տեսանկյունից: Վերջապես, որո՞նք են երեխաների վաղ աշխատելու դրդապատճառները, և ինչպե՞ս է ազդում երեխայի աշխատելու փաստը իր մանկության և հետագա կյանքի վրա:

Վերջնական գեկույցը, որն, ըստ էության, ամփոփում է վերը նշված և մի շարք այլ երևույթների միջև պատճառահետևանքային կապերի վերլուծությունը, պարունակում է երևույթի կանխարգելման, վաղ միջամտության և ազդեցության մեղմնան համար անհրաժեշտ օրենսդրական, ընթացակարգային, ինչպես նաև հասարակական ընկալման փոփոխությունների վերաբերյալ մի շարք առաջարկություններ: Կարծում են, որ սա շատ արժեքավոր նյութ է բարեփոխումների այն բուռն գործընթացների շրջանում, որոնք երեխաների պաշտպանության ոլորտում որդեգրել է մեր պետությունը: Մանկական աշխատանքի երևույթի և նրա միտումների վերաբերյալ հավաստի տվյալների տիրապետումը հնարավորություն կտա կառավարելի դարձնել իրավիճակը, մեղմել դրա բացասական ազդեցությունը երեխաների կյանքի որակի վրա:

Ցանկանում եմ խորին շնորհակալություն հայտնել բոլոր այն մասնագետներին, մարդկանց, կազմակերպություններին, ովքեր աջակցել են այս կարևոր հետազոտության իրականացմանը:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար՝ Ա. Վարդանյան

Օգտագործված հապավումներ

1. **ԴԿ-** Դասարակական կազմակերպություն
2. **ԵԻՊԲ-** Երեխայի իրավունքի պաշտպանության բաժին
3. **ԱՏ-** Աշխատանքի տեսչություն
4. **ԶՏԿ-** Զբաղվածության տարածքային կենտրոն
5. **ԱՄՀՆ-** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6. **ՏԻՄ-** Տեղական ինքնակառավարման մարմին
7. **ԽՀՀ-** Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով
8. **ԱԳԲ-** Անչափահասների գործերով բաժանմունք
9. **ՍԾՏԳ-Սոցիալական ծառայության տարածքային գործակալություն**
10. **ԱՎԾ-** Ազգային վիճակագրական ծառայություն

Համառոտ ամփոփում

Հետազոտության նպատակը. Երեխաների աշխատանքային

շահագործման խնդիրը, թեև ոչ այնքան ցայտուն, սակայն գոյություն ուներ նաև խորհրդային տարիներին: Հետխորհրդային Հայաստանում այն հատկապես սրվեց զանգվածային աղքատության ու թշվառության, ինչպես նաև տնտեսվարման ձևի փոփոխության հետևանքով: Յոդի սեփականաշնորհումը գյուղական ընտանիքներին ստիպեց նորից վերստանձնել արտադրական գործառությը, որի հրագործումը դրամական կապիտալի բացակայության պայմաններում նրանց ստիպեց անխնա ներգրավել ընտանիքի բոլոր անդամներին, այդ թվում և երեխաներին:

Երեխաներն արագորեն ներառվեցին աշխատաշուկա՝ կարիքից դրդված, և սկսեցին շահագործվել որպես էժան աշխատուժ, սակայն երևույթի բնույթի և տարածվածության վերաբերյալ տեղեկատվությունը շատ աղքատիկ է. նախ՝ աշխատանքների հաշվառման գործող ընթացակարգը չի ներառում անչափահասմերին, երկրորդ՝ աշխատաշուկայում հաշվառումը, դժվարացած է ստվերային երևույթների պատճառով, և երրորդը՝ երեխաների դեպքում գործատուներն աշխատում են թաքցնել երևույթը՝ խուսափելով այն լրացուցիչ պարտավորություններից, որոնք նախատեսված են գործատուների համար երեխաների աշխատուժը շահագործելու դեպքում:

Սույն հետազոտությունը մի փորձ է՝ ուսումնասիրելու երեխաների աշխատանքային շահագործման երևույթը Հայաստանում, գնահատելու դրա տարածվածության աստիճանը և զարգացման միտումները:

Հետազոտության արդյունքները

Երեխաների աշխատանքը: Ուսումնասիրվել են 1066 տնային տնտեսություններ, որոնցից 65-ում հայտնաբերվել է առնվազն 1 աշխատող երեխա, որոշ տնտեսություններում՝ մեկից ավելին, աշխատող երեխաների ընդհանուր թիվը կազմել է 71: Այսպիսով, ընտրանքային համախմբության (1066 տնտեսություն) մեջ գտնվող բոլոր երեխաների (2032) խնբում հետազոտման օրվան նախորդող շաբաթվա ընթացքում աշխատանք ունեցողների թիվը կազմել է 3.6%, վերջին մեկ տարվա ընթացքում աշխատանք է ունեցել բոլոր երեխաների 4.7%-ը: Այսպիսով, 5% սխալվելու

հավանականությամբ կարելի է պնդել, որ մեկ տարվա կտրվածքով 7-18 տարեկան (18-ը չլրացած) երեխաների 4,7%-ը վարձու աշխատանք է կատարում կամ այդ տարիքի երեխաներ ունեցող տնտեսությունների 6,1%-ում կարելի է հանդիպել վարձու աշխատող առնվազն 1 երեխայի: Ընդ որում, աշխատող երեխաների 1,4%-ը կազմում են 7-10 տարեկան (չլրացած) երեխաները, 28.2% -ը՝ 10-14 (չլրացած) և 70.4%-ը՝ 14-18 (չլրացած) տարեկանները: Սա նշանակում է, որ աշխատող երեխաների մոտ մեկ երրորդը աշխատանքային օրենսդրությամբ թույլատրելի տարիքից ցածր տարիքի է:

Աշխատող երեխաներն ըստ սեռի բաշխվում են այսպես՝ տղաներ 84.5%, աղջիկներ՝ 15.5%: Դրանք միայն այն երեխաներն են, ովքեր ունեն գործառու կամ աշխատանքի դիմաց վճարվել են: Այս թվի մեջ չեն մտնում այն երեխաները, ովքեր աշխատում են տնային տնտեսության սեփական տնտեսությունում (ֆերմա, հողանաս և այլն) և կամ զբաղված են մեծերի հետ միասին (կամ առանց) տնայնագործությամբ: Երեխաների մոտավորապես 73,7%-ն ամեն օր մասնակցում է տնային տնտեսության աշխատանքներին, նրանց կեսը արտադրական բնույթի գործողություններ է իրականացնում, մնացածը՝ հաճախակի. Նրանք օրվա ընթացքում փոխարինում են չափահասներին վաճառասեղանի հետևում, նրանց հետ մթերքը տանում են շուկա, մասնակցում աշխատանքների, որոնց վերջնական նպատակը դրանի ստացումն է: Որոշ վերապահումներով տնային տնտեսությունում երեխաների զբաղվածությունը նույնպես կարելի է դասել վարձու աշխատանքների թվին: Մանավանդ, եթե երեխաների մոտ 17 %-ն ամբողջ օրն է զբաղված, 24 %-ն առավոտյան, եթե դպրոցի ժամանակն է: Հարցվողների ճնշող մեծամասնության կարծիքով, աշխատանքը տնային տնտեսությունում կարևոր դաստիարակչական նշանակություն ունի:

Երեխաների 2,6 %-ը կրթությունից դուրս է մնացել աշխատանքի պատճառով, իսկ երեխաների 5,1 %-ն ունի մեկ ամիս և ավելի բացակայություններ:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղված երեխաների թիվը կազմել է աշխատող երեխաների 31.9%, որից տղաներ՝ 67.1% և աղջիկներ՝ 32.9%, դրան հաջորդում են առևտուրը և շինարարությունը: Ըստ հարցման արդյունքների, աշխատող երեխաների 1/3-ը նոր է սկսել իր աշխատանքային գործունեությունը, նույնքան էլ մեկ տարուց ավելի աշխատանքային փորձ ունի: Աշխատող երեխաների ընդամենը 19,7 % ունի մշտական աշխատանք, մնացածի աշխատանքը սեղմային է կամ՝ պատահական:

Հարցմանը նախորդող շաբաթվա ընթացքում վարձու աշխատանք

կատարած Երեխաների 93 %-ը նման աշխատանք կատարել է նաև վերջին 12 ամիսների ընթացքում: Դա նշանակում է, որ աշխատաշուկա ներառված Երեխաների ճնշող մեծամասնության համար աշխատանքը հիմնական զբաղմունք է: Ավելին, հարցման պահին չաշխատող Երեխաների մի մասը՝ 1,3%-ը, վերջին մեկ տարվա կտրվածքով նույնպես ունեցել է աշխատանք:

Ըստ մարզերի, աշխատող Երեխաները առավել մեծ թիվ են կազմում Շիրակում՝ 15.6, Արմավիրում՝ 12.8%-ը, Սյունիքում՝ 11.8%-ը և Արարատում՝ 9.7%-ը, իսկ մնացած մարզերում 5-5,5 %: Երևանում այդ թիվը կազմել է 3 %:

Աշխատանքի ոլորտները: Երեխաների վարձու աշխատանքն իրականանում է տարբեր ոլորտներում: Այդ ոլորտներն են՝ գյուղատնտեսություն, անասնապահություն, շինարարություն, արդյունաբերություն, առևտուր, սպասարկում և այլն: Նրանք աշխատում են տարբեր միջավայրերում՝ սկսած սեփական բնակարանից (որը ռիսկի տեսանկյունից ամենապահովն է թվում), վերջացրած փողոցով (որն ամենառիսկայինն է): Երեխաների աշխատանքը կատարվում է ֆորմալացված (արտադրանասում, շինարարության մեջ և այլն) և ոչ ֆորմալացված միջավայրերում (իրենց կամ ուրիշի տանը, դաշտում, այգում, փողոցում և այլն): Եթե ֆորմալացվածը ենթադրում է որոշակի ստանդարտացում ու վերահսկողություն, ապա ոչ ֆորմալացվածները ստվերային բնույթ ունեն (հետևաբար, աշխատող Երեխաների թիվը իրականում հնարավոր է, որ շատ ավելի մեծ կարող է լինել), բացառում են որևէ վերահսկողություն և երբեմն՝ խիստ կասկածելի են (անվտանգության ապահովումը թողնված է աշխատանքային իրադրության այլ մասնակիցների հայեցողությանը և հմտությանը):

Քաղաքային փոքր բնակավայրերում Երեխաների համար ավելի շատ են աշխատանք գտնելու հնարավորությունները: Ավելի հաճախ նրանք ներառվում են կարճատև աշխատանքներում և փոքր ձեռնարկություններում՝ ավտոսպասարկման կետեր, տրանսպորտային միջոցների շահագործում, շինարարություն, առևտուր և այլն: Հաճախ են զբաղվում նաև մետաղի ջարդոն և շիշ հավաքելով (առկա են նաև «ոչ ստանդարտ» զբաղմունքներ. օրինակ, Շիրակի մարզում նկատելի են երթուղային տաքսիներում աշխատող Երեխաները): Գյուղական և, հատկապես, ավանային-քաղաքային, նախկին շրջկենտրոններ համարվող կամ արդյունաբերական բնակավայրերի լնտանիքների մի ստվար մասը չունի սեփական հողանաս և, որպես կանոն, աշխատում է հողի սեփականատերերի մոտ, հատկապես՝ խոշոր: Այդ

աշխատանքին հավասարապես մասնակցում են նաև երեխաները՝ անկախ եղանակային պայմաններից: Ըստ ոլորտների, երեխաների գյուղատնտեսական աշխատանքը ամենատարածվածն է և դրանում ներգրավված են գյուղաբնակ երեխաներ:

Աշխատանք գտնելու ուղիները: Աշխատող երեխաների 31. 8 %-ն անձամբ է գտել աշխատանքը: Աշխատող երեխաների մի փոքր մասին (9%) հայտնաբերում է ինքը՝ գործատուն¹ որպես էժան աշխատուժի, սակայն հետազոտության ընթացքում զգացվեց, որ շատերը խուսափում են այդպես վարվել, աշխատանքային տեսչության հնարավոր միջամտության պատճառով: Անչափահասմերի աշխատանքից խուսափելու մյուս պատճառը այդ աշխատուժի մոտ հնտությունների պակասն է և աշխատանքի համեմատաբար ցածր որակը: 59.2 %-ի դեպքում երեխաներին հիմնականում օգնում են ծնողները, հարազատները և ծանոթները տարբեր շարժառիթներով՝ ընտանիքներին օգնելու, երեխային փողոցից կտրելու և այլն: Հատկանշական է, որ 14 և ավելի փոքր տարիքում վարձու աշխատանքներում ներգրավված երեխաները հաճախ աշխատանք են գտնում ինքնուրույն, առանց ծնողի միջամտության:

Գործատուի հետ հարաբերությունները: Աշխատող երեխաների 80 %-ն աշխատում է՝ գործատուի հետ ունենալով միայն բանավոր պայմանավորվածություն: Կան միայն առանձին դեպքեր, երբ երեխաների աշխատանքը գրանցված է ընթացակարգով և պահանջվող նորմերին համապատասխան. Երեխաները վճարվում են ժամանակին, անգամ գործատուների կողմից հատուկ ուշադրության են արժանանում: Մեծ մասամբ՝ 23.3%, երեխաները վճարվում են օրավարձով, միայն 16.9%-ը՝ ամսական, նույնքանը՝ շաբաթական և 7.7%-ը՝ բնամթերքով, ապրանքով: Ընդ որում՝ միայն 6.2 %-ն է աշխատավարձի ցուցակում ստորագրում իր անվան դիմաց: Հարցման արդյունքները վկայում են դեպքեր, երբ երեխան բոլորովին չի վճարվում (9,2%), դրան հակառակ, երեխայի աշխատանքի պաշտոնապես գրանցված չլինելու պարագայում, վճարումները կատարվում են առանց ուշացումների և համաձայն պայմանավորվածության (մեծ մասամբ՝ չափահաս միջնորդ լինելու պարագայում):

Աշխատող երեխաների ընդամենը 8,5 %-ն ունեն աշխատանքային պայմանագիր, պայմանագրով աշխատող երեխաների տարիքը 83,3 %-ի համար 14-ից բարձր է, միայն 16,7%-ը 10-ից 14 տարեկան են: Այսպիսով,

¹ Վերջին տարիներին քաղաքային բնակավայրերում ծևավորված ոչ ֆորմալ աշխատանքային բորսաներում գործազրկության տղամարդկանցից բացի հավաքվում են երեխաներ՝ օրավարձով տարբեր աշխատանքներ ստանալու ակնկալիքով, հատկապես զանգվածային բերքահավաքի շրջանում:

Երեխաների աշխատանքը կիրառող գործատումների մեջ մասը չի պահպանում աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կանոններն ու պայմանները:

Աշխատանքի տևողությունը: Երեխաների աշխատանքը հիմնականում նորմավորված չէ: Տարբեր երեխաների համար աշխատանքային շաբաթը տարբեր տևողություն ունի. մոտավորապես կեսի համար աշխատանքային շաբաթը տևում է 7 օր: Մնացածը ավելի քիչ են զբաղված՝ հիմնականում պատահական աշխատանք կատարելու պատճառով: Նրանց կեսից ավելին աշխատում է առավոտից մինչ երեկո, մի մեծ մասն էլ՝ ըստ անհրաժեշտության, ոմանք՝ նաև գիշերները: Աշխատող երեխաների համար շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 40 ժամ է: Հաճախ գործատում կանչում է նաև արտաժամյա աշխատանքի, որի համար երեխան հիմնականում վճարվում է սովորականի նման:

Աշխատող երեխաների 91.1%-ը դժգոհել է աշխատանքի անբարենպաստ պայմաններից:

Աշխատող երեխաների կրթական հիմնախնդիրները: Երեխաների 58.7%-ը համատեղում են կրթությունը և աշխատանքը: Աշխատող երեխաների 41.4%-ը չի սովորում: Որոշ համայնքներում հանրակրթությունը (մասնավորապես միջնակարգ) դժվարամատչելի է դարձել երեխաների համար. համայնքում դպրոցի բացակայություն, համապատասխան դասարանի համալրման հետ կապված դժվարություններ, լրացուցիչ տրանսպորտային և այլ ծախսեր:

Աշխատող երեխաների 2/3-ը պատկանում է 14-17 տարեկանների խմբին: Այդ տարիքում ավարտվում է ութամյա կրթություն ստանալու շրջանը և այն երեխաները, ովքեր անապահով ընտանիքներից են կամ ուսման ուղղությամբ առանձնակի ընդունակություններ և հավակնություններ չունեն, ներառվում են աշխատաշուկա՝ համալրելով ցածր որակավորում ունեցող աշխատողների խումբը: Միջնակարգ մասնագիտական կրթության դժվարամատչելիությունը և պահանջված չկանոնավոր 14-18 տարեկանների համար լուրջ խնդիրներ են ստեղծում: Ավելին, աշխատելու հետևանքով ութամյա կրթություն չստացածները հետագայում չեն կարողանում միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալ, որովհետև դրա համար պահանջվում է ներկայացնել ութամյա կրթության վկայական, որը նրանք չունեն²: Չաշխատող երեխաների ճնշող մեծամասնությունը պլանավորում է շարունակել ուսումը (83%), մինչդեռ աշխատող երեխաների՝ միայն 44 %-ը:

² Նրանց մեծ մասի համար հետագայում բաց թողածը լրացնելու համար այլևս բարենպաստ պայմաններ չեն ստեղծվում, որովհետև մի քանի տարի հետո տղաները մեկնում են զինծառայության, իսկ աղջիկները, որոնք այդ խմբում մոտավորապես 15 տոկոս են կազմում, կամ ամուսնանում են, կամ էլ շարունակում են զբաղեցնել ցածր որակավորում պահանջող աշխատատեղերը:

Աշխատող երեխաների մի մեծ խումբ՝ մոտ 30 %-ն, արդեն հայտնվել է կրթական համակարգից դուրս: Պատճառը դպրոցական ծախսերն են, ինչպես նաև ուսման նկատմամբ հետաքրքրության բացակայությունը երեխայի և (կամ) ծնողի մոտ: Բացի այդ, աշխատանքը երեխային ապահովում է դրամով, որը միջոց է նրա հետաքրքրությունների բավարարման համար: Նրանք, ովքեր շարունակում են հաճախել որևէ ուսումնական հաստատություն, աչքի չեն ընկնում հաճախումների կանոնավորությամբ: Միևնույն ժամանակ, չաշխատող երեխաների խմբում նշվել են դասերից տևական բացակայություններ՝ պայմանավորված տնտեսության աշխատանքներում օգնելու և ընտանեկան բիզնեսում ներգրավված լինելու հանգամանքներով: Երեխաների 30%-ը բացակայում են դասերից ոչ միայն բերքահավաքի ժամանակ, այլ ուսումը չեն շարունակում առհասարակ՝ ընտանիքներին օգնելու նպատակով: Որոշ երեխաներ նշում են նաև, որ երեմն աշխատանքի բերումով չեն կարողանում ներկա լինել դասերին, սակայն ուսուցիչները մեղմ են վերաբերում, քանի որ գիտեն, որ նրանք իրենց աշխատանքով «ընտանիք են պահում»:

Երեխաների աշխատելու դրդապատճառները: Տնտեսությունների մի մեծ խմբում երեխաները բարձր ռիսկի են ենթարկված, քանի որ այդ տնտեսությունները չունեն կայուն և բավարար ֆինանսական մուտքեր. դիտարկված տնտեսություններից 44 %-ում չկա կանոնավոր վճարվող աշխատանք ունեցող անդամ. միայն 36.7%-ում կա գոնե 1 կանոնավոր աշխատող և 14.8%-ում՝ 2 աշխատող: Աշխատող երեխաների մեծ մասը տղաներ են: Նրանք հիմնականում այն ընտանիքների երեխաներն են, որտեղ սոցիալական ճնշման հետևանքով (հայրերի բացակայություն կամ տնտեսական միգրացիա) երեխաները ժամանակից շուտ իրենց վրա են վերցնում ընտանիքի հոգսը. ընտանիքում գոնե մեկ կանոնավոր աշխատող լինելու պարագայում և այդ թիվը մեկից ավելին դառնալու դեպքում կտրուկ նվազում է աշխատող երեխաների թիվը³: Ոչ լոկվ ընտանիքի հանգամանքը, հատկապես հիմնական կերակրողի բացակայության պարագայում, երեխայի՝ աշխատանքի մեջ վաղ տարիքում ներգրավվելու ծանրակշիռ գործոն է:

Կրթությունից դուրս մնացած և աշխատող երեխաների առանձին դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ աղքատությանը զուգահեռ, այս երեխաների ընտանիքները (աշխատող երեխաների 78%-ի պարագայում) սոցիալական ակտիվությամբ աչքի չեն ընկնում, տեղեկացված չեն, չգիտեն ինչպես կազմակերպել իրենց համար լրացուցիչ ռեսուրսների փնտրությունը: Որոշ

³ Նույն օրինաչափությունը նկատվում է նաև ընտանիքներում պատահական աշխատանք ունեցողների թվի հետ աշխատող երեխաների թվի կորելյացիան դիտարկելիս:

մասնավոր դեպքերում աշխատող երեխաների ընտանիքի չափահաս անդամները ունեն գոյատևման «ոչ ընդունելի», հակասողիալական մեխանիզմներ. մարմնավաճառություն, տնից տևական բացակայություններ պահանջող տարաբնույթ աշխատանքներ⁴, որոնք ի վերջո կազմալուծում են ընտանեկան կյանքը, երեխաների հետագա կյանքը դարձնում անվերահսկելի, առանց դրական ուղղորդման (16 դեպք կամ աշխատող երեխաների 24,6%-ը):

Միևնույն ժամանակ, աշխատող երեխաների մեծ մասի ընտանիքում աշխատուժը կամ բացակայում է կամ անբավարար է: Դատելով աշխատող երեխաների ընտանիքների՝ պետական և ոչ պետական աջակցության տարաբնույթ ծևերի մեջ ընդգրկվածության տվյալներից, աշխատող երեխա ունեցող ընտանիքների 45,5 %-ն է միայն ընդգրկված ընտանեկան նպաստի համակարգում, 5,9 %-ը՝ բարեգործական աջակցության ծրագրերում, 49,2 %-ը ընդհանրապես որևէ աջակցություն ֆորմալ կամ ոչ ֆորմալ ուղիներով չի ստանում⁵:

Երեխաների «վիոլ աշխատելու» դրդապատճառները տարբեր են՝ ընտանիք պահել, ընտանիքին օգնել. (որոշ դեպքերում երեխան հանդիսանում է ընտանիքի միակ աշխատունակ անդամը և ստիպված ինքն է հոգում ընտանիքի նվազագույն կարիքները): Այս երեխաներն իրենց աշխատած գումարը հիմնականում տալիս են ծնողներին (64,6%), սակայն պակաս կարևոր դրդապատճառ չէ նաև ինքնուրույն ու անկախ լինելու, գրապանում սեփական գումար ունենալու ցանկությունը, հաճույքները բավարարելու հնարավորություն ունենալը (ծխախոտ ձեռք բերել և ընկերների հետ ժամանցի վայրեր հաճախելը) (27,2%) և 4,6 %՝ «բան սովորելու և պարապ չմնալու համար»: Աշխատելու ամենահաճախ հանդիպող պատճառը ընտանիքի հոգսերի, հատկապես դպրոցական ծախսերի թեթևացումն է. Երեխաների մի մասը իրենց աշխատած գումարով գնում են իրենց համար դպրոցական հագուստ և գրենական պարագաներ կամ վճարում են մասնագիտական կրթության համար (նաև՝ քրոջ կամ եղբոր համար): Ավելի սակավ հանդիպում են աշխատելով մասնագիտանալ ցանկացողների դեպքերը:

Աշխատելու հաջորդ դրդապատճառներից է իրենց կարևորված զգալու հանգամանքը:

Առողջություն. Երեխաների 78.1%-ի մոտ առողջության ցուցանիշը գնահատվել է լավ: Սակայն այն դեպքերում, երբ երեխաները ներառվում են ծանր

⁴ օրինակ, ճանապարհամերձ, բնակավայրերից հեռու գտնվող ճաշարաններում, երկարատև հերթափոխներով՝ հյուրանոցներում, գյուղից հեռու՝ շուկայում և այլն:

⁵ Տոկոսները 100-ից մեծ են, քանի որ որոշ ընտանիքներ օգտվում են մի քանի տիպի աջակցություններից:

Փիզիկական աշխատանքներում՝ բեռնակրություն, շինարարությունն, և այլն, առողջության համար վնասակար հետևանքները միանգամից չեն դրսնորվում, բայց նշվում են պարբերաբար անհանգստացնող ցավեր: Որպես առողջական խնդիրների ծագման պատճառ, աշխատող երեխաների 4.5%-ի կողմից նշվում է աշխատանքը: Աշխատող երեխաների համար վնասվածքի դեպքերի 60%-ը ծնողները վերագրում են աշխատանքին: Բոլոր դեպքերում աշխատող երեխաների համար ավելի շատ և ավելի հաճախ են նշվում վնասվածքներն ու հիվանդությունները, քան` չաշխատող: Լինում են դեպքեր, երբ երեխաները աշխատանքի ժամանակ լուրջ խնդիրներ են ունենում, սակայն չեն բարձրածայնում, քանի որ հասկանում են, որ չաշխատելու դեպքում իրենց ընտանիքը պարզապես կգրկվի գոյատևման հնարավորությունից:

Դանգիստ. Երեխաները ակտիվ հանգիստ չունեն, բացակայում են ժամանցի հնարավորությունները, հատկապես՝ գյուղական վայրերում: Դետազոտված գյուղերի մեջ մասում բացակայում էին մարզամշակութային կենտրոնները, մասնավորապես՝ երաժշտական դպրոցներ, մարզադպրոցներ, գեղարվեստի դպրոցներ և այլն: Աշխատող երեխաների ակտիվ հանգստի հնարավորությունը գրեթե զրոյական է՝ նախ աշխատելու փաստով պայմանավորված, բացի վերը նշված պատճառներից:

Եզրակացություն

Երևույթի տարածվածությունը. Աշխատող երեխաների թիվը առաջին հայացքից թվում է փոքր՝ 6.1%՝ 7-18 տարեկան (չլրացած) անչափահասներ ունեցող տնային տնտեսություններում: Սակայն, այդ տպավորությունը փոխվում է, եթե նկատի ենք ունենում տնային տնտեսություններում «թաքնված աշխատող երեխաների», խումբը, որը կազմում է 80% և, ըստ էռթյան, «փակ դռների ետևում է», անվերահսկելի պայմաններում: Նրանց 31.3%-ը գյուղական վայրերում, մեծերի հետ (կամ առանց) աշխատում է խոշոր հողատերերի մոտ: Նկատի ունենալով, որ հողերի խոշորացումը անխուսափելիորեն ծավալվող գործընթաց է, կարելի է կանխատեսում անել, որ գյուղատնտեսական վճարովի աշխատանքներում երեխաների ներգրավվածությունը աստիճանաբար կածի: Այս կանխատեսման հիման վրա կարելի է մտածել մեխանիզմներ, որոնք թույլ կտան երեխայի աշխատանքը անհրաժեշտաբար բերել վերահսկվող դաշտ, հատկապես, որ գյուղատնտեսության ոլորտը 2009թ.-ից կներառվի հարկման դաշտ:

Ինչ վերաբերում է տնային տնտեսության ոլորտում երեխայի

աշխատանքին, ապա դրա ճանաչումը և սահմանագծումը պրակտիկայում բարդությունների հետ է կապված. այն «փակ դռների ետևում» է և կարող է տատանվել տնային տնտեսության աշխատանքներում պարզ մասնակցությունից (ինչը քաջալերվում է սոցիալական նորմերով և ցանկալի է), մինչև շահագործում: Շահագործման ճանաչումը և, ըստ այդմ, համապատասխան վերաբերմունք ցուցաբերելն ի սկզբանե բախվում է ընտանեկան նորմերի, ծնող-երեխա հարաբերություններում իրավունք-պարտականությունների բաշխման էթիկական խնդիրների և, ի վերջո, միջամտության համար և հետևանքների հետ կապված պետական համապատասխան երաշխիքների անբավարարության հետ:

Երևույթի բնութագրիչները

Ըստ սեռի, աշխատող երեխաների գերակշիռ մեծամասնությունը կազմում են տղաներն, ինչը բացատրելի է հայ հասարակության մեջ ընդունված մշակույթով. ավելի շատ և ավելի վաղ տարիքում տղաները, քան` աղջիկները փոխարինում են բացակայող կերակրողին: Ավելին, ընդունված է, որ ավելի շուտ «սովորելը աղջկա գործ է», քան` հակառակը, ուստի հասարակական հավատալիքները հանդուրժող են տղաների՝ վաղ աշխատելու պրակտիկայի հանդեպ: Միջամտության հետագա ծրագրերը պետք է նկատի ունենան այս առանձնահատկությունը:

Ըստ աշխատանքային փորձի տևողության, աշխատող երեխաների 1/3-ը աշխատում է մեկ տարուց ավելի, ինչը նշանակում է, որ երեխաների աշխատանքը պատահական կամ անցողիկ երևույթ չէ, այլ կանոնավոր պրակտիկա: Միևնույն ժամանակ, աշխատող երեխաների գերակշռող մեծամասնության աշխատանքը սեզոնային է, հատկապես գյուղատնտեսական աշխատանքների եռուն փուլերում: Այս հանգամանքը «լոկալացմուն է» հետագա միջամտության շրջանակը՝ կենտրոնանալով սեզոնի վրա:

Ըստ աշխատանքը գտնելու հնարավոր միջոցի, հետազոտության տվյալներով, 14 և ցածր տարիքի երեխաների մեծամասնությունը աշխատանք է գտնել առանց ծնողի միջամտության և համաձայնության: Կարելի է հետևություն անել, որ երեխայի աշխատանքի պաշտպանության սուբյեկտը համարելով ծնողներին (ինչպես օրենքում է), դժվար կլինի վերահսկել երևույթը, հետևաբար, անհրաժեշտ է մանդատավորել նոր սուբյեկտների, օրինակ, երեխայի պաշտպանության բաժնին, երեխայի հետ աշխատող այլ ինստիտուտների՝ հանդես գալու որպես երևույթի կանխման և դրական վերահսկման համար պատասխանատու:

Գործառուների հետ հարաբերությունների տեսանկյունից երեխաների

աշխատանքը, որպես կանոն, գրանցված չէ. գործատուները (94.5%) խուսափում են դա անել՝ այդպիսով խուսանավելով օրենքով սահմանված սահմանափակումներից (կրծատ աշխատաժամ և այլն): Երեխաները (նաև ծնողները) չեն կարևորում ձևակերպումները՝ փնտրելով պարզ հարաբերություններ՝ հիմնված վստահության վրա, իսկ գործատուները ֆորմալ հարաբերություններից խուսափում են՝ այդպիսով ազատելով իրենց անչափահաս աշխատակից ունենալու հանգամանքով պայմանավորված լրացուցիչ պարտավորություններից: Ավելի շատ երեխաներն են փնտրում աշխատանք (գործատու), քան գործատուներն են փնտրում մանկական աշխատուժ: Սա մի հանգամանք է, որը թույլ կտա կանոնակարգել երեխաների աշխատանք՝ առանց բախվելու գործատուների շահերին, ինչը մեծ դիմադրություն առաջ կբերեր (հետազոտությունը ցույց տվեց, որ գործատուների կողմից մանկական աշխատուժը որպես հատկապես էժան աշխատուժ շահագործելու միտունը նշանակալից չէ): Այսպիսով, երևույթը իր նախնական փուլում է և ճիշտ ժամանակն է արդյունավետ կերպով ներազդելու դրա հետագա անցանկալի զարգացումների վրա:

Օրենսդրական կարգավորման տեսանկյունից, աշխատող երեխաների 1/3-ը օրենքով թույլատրելի սահմանից ներքև է գտնվում, հետևաբար, առկա աշխատանքային օրենսդրությունը չի կարող ապահովել աշխատող երեխաների պաշտպանությունը, քանի որ չի համապատասխանում սոցիալական պրակտիկային:

Աշխատելու դրդապատճառները: Դատելով երեխայի՝ աշխատանքում վաղ ներգրավվելու դրդապատճառներից, մեծ մասամբ երեխայի աշխատանքը իր և իր ընտանիքի գոյատևման հստակ մեխանիզմ է՝ պայքարելու աղքատության դեմ: Հետևաբար, երեխաների աշխատանքի երևույթը անմիջականորեն առնչվում է աղքատության հետ և դրա հետևանք է: Այն ամիջականորեն կապված է նաև չափահաս աշխատունակ մեծերի բացակայության, անկարողության կամ սոցիալապես անընդունելի համարվող կենսակերպի հետ (աղքատության մշակույթ): Հետևաբար, աշխատող երեխաներին աշխատանքի արգելքը, առանց կոմպենսացնող միջոցների և «բուֆերային միջամտությունների», անհմաստ է: Երեխան աշխատում է ավելի շատ աղքատությունից դրդված ու իր հիմնարար պահանջմունքը բավարարելու, քան՝ որպես հետագա չափահաս, ինքնուրույն կյանքին նախապատրաստվելու համար, թեև, անշուշտ, առկա են նաև որոշ մշակութային և սոցիալական առանձահատկություններ: Ահա թե ինչու, կարևոր է, որ արտաքին միջամտությունը վերաբերի ոչ թե աշխատանքի արգելմանը կամ

թողտվությանը, այլ այն պատճառների ազդեցության մեղմնանը, որոնք ստիպում են երեխաներին վաղ տարիքում ներգրավվել աշխատանքային հարաբերությունների մեջ՝ հաճախ ի վեհական ներկայական և հեռանկարի:

Աշխատելու հանգամանքի ազդեցությունը երեխայի կյանքի այլ ոլորտների վրա. Ընդհանուր առնամբ, հետազոտության ընթացքում դիտարկված տնտեսություններում կրթական ֆոնը բավականին բարձր է, ինչը բարենպաստ նախադրյալ կարող է լինել երեխաների կրթական հաջող կարիերայի համար, եթե սոցիալական խոչընդոտները չխանգարեն: Սակայն կրթության արժեգորկման համընդիանուր միտում է նկատվում, որն անշուշտ, բացատրվում է ստեղծված պայմաններում ընտանիքների մի ստվար մասում կենսապահովման խնդիրների առաջնահերթությամբ:

Չաշխատող երեխաների համեմատությամբ, աշխատող երեխաները ավելի հաճախ են տևականորեն բացակայում դասերից և ընդհանրապես կրթությունից դուրս մնում, ավելի հաճախ են գանգատվում տրավմաներից, պատահարների հետևանքով առաջացած վնասվածքներից ու խրոնիկ բնույթի ցավերից և, վերջապես, ավելի քիչ ժամանակ և հնարավորություններ ունեն ազատ ժամանցի, ակտիվ հանգստի համար, ավելի քիչ հնարավորություններ ունեն կրթության շարունակման, մասնագիտացման, քան` չաշխատողները: Միևնույն ժամանակ, աշխատող երեխաները «ավելի հասուն են», ավելի վաղ են ներգրավվել «մեծական հոգսերի մեջ», ավելի պրակտիկ են և ինքնուրույն: Մի կողմից դա կարող է գնահատվել որպես «մանկության վաղ կորուստ», մյուս կողմից՝ պարզապես վաղ հասունացում: Այսպիսով, գոյություն ունի անմիջական կապ կրթության մեջ կամոնավոր ներգրավվածության, առողջության ցուցանիշների, հանգստի կազմակերպման հնարավորությունների և երեխայի՝ աշխատելու հանգամանքի միջև: Դատելով երեխաների աշխատանքի պայմանների նկարագրությունից, տևողությունից, ծանրության աստիճանից և աշխատանքի՝ երեխայի կենսագործունեության կարևոր ոլորտների (կրթություն, առողջություն, հանգիստ) վրա ունեցած ազդեցությունից՝ ակնհայտորեն աշխատող երեխաները հայտնվել են ոչ շահեկան վիճակում:

Երեխաների աշխատանքի երևոյթի ընկալումը: Երեխաների աշխատանքի երևոյթի հանդեպ հետազոտությանը մասնակցած մեծերի (ծնողներ, մասնագետներ, փորձագետներ) տեսակետների բազմազանությունը ցույց է տալիս, որ երևոյթի ընկալումը միանշանակ չէ և այն կարող է դիտարկվել մի

կողմից անցանկալի և վճարող, մյուս կողմից՝ Երեխայի դրական սոցիալականացման կարևոր կոմպոնենտ: Հետևաբար, Երեխայի աշխատանքի հիմնախնդրի սոցիալական համատեքստը բավարար չափով ճանաչված և գիտակցված չէ: Ուստի խնդիրը Երեխայի աշխատանքի չափի, ծավալների, տևողության սահմանման մեջ է և այդ ամենի ընդունելի սահմանների շուրջ հանրային համաձայնության հասնելը: Պետության կողմից սահմանված օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական չափանիշները Երեխայի աշխատելու թույլատրելի տարիքի, աշխատանքի տևողության, պայմանների և սանկցիաների վերաբերյալ կարևոր նախադրյալներ են, սակայն դրանք նկատի չեն առնում սոցիալական հասունության վերաբերյալ գիտական հիմնավորումները (որոշ Երեխաներ ավելի վաղ են պատրաստ ինքնուրույն գործունեության անցնելու, քան օրենքն է նախատեսում): Եթե բացարձակ արգելքից անցում կատարվի Երեխայի աշխատանքի ենթատեքստի կանոնակարգմանը, ապա հնարավոր կլինի Երեխաների աշխատանքը դուրս բերել ստվերից, հետևաբար՝ դարձնել վերահսկելի: Անհրաժեշտ է պաշտպանել Երեխաներին այն դեպքերում, երբ նրանց պարզապես հնարավոր չէ ետ պահել աշխատանքից, բայց նախ պետք է ընդունել, որ կան այդ «անհրաժեշտաբար գոյություն ունեցող» դեպքերը: Օրենքը պետք է ներառի սոցիալ-տնտեսական զարգացման արդի առանձնահատկությունները, մասնավորապես՝ անհրաժեշտաբար աշխատող Երեխաների պարագան (թույլատրել՝ նախատեսելով պաշտպանության միջոցներ):

Սա նշանակում է հանրության համար Երկարատև բազմաբնույթ իրազեկման աշխատանքների անհրաժեշտություն և մասնագետների համար համապատասխան գիտելիքներով գինելու անխուսափելի պահանջ:

Այսպիսով, Երեխաների աշխատանքը Երեք խումբ գործոններով է պայմանավորված. 1. ընտանիքների ապահովության ցածր մակարդակը (և աղքատությամբ պայմանավորված լրացուցիչ գործոնները) 2. հայ հասարակության՝ գործող մշակութային առանձնահատկություններն այս հարցում և 3. Երեխաների, ընտանիքների սոցիալական պաշտպանության համակարգի կտրվածությունը իրականության սոցիալական հենքից: Նկատի առնելով այս գործոնների ազդեցության չեզոքացման համար պահանջվող օպտիմալ տևողությունն ու օբյեկտիվ դժվարությունները, ինչպես նաև համակարգի ճկումացման հետ կապված դժվարությունները, կարելի է կանխատեսում անել, որ աշխատող Երեխաների թիվը կմեծանա մոտ ապագայում, իսկ միջամտությունների ուշացման պարագայում, աճին գուգահեռ այլ միտումներ նույնպես ի հայտ կգան:

Ինչպիսի՞ լուծումներ: Երեխաների աշխատանքի հիմնախնդրի կարգավորման համար հնարավոր են երկու ուղիներ՝ առաջինը՝ արգելք և դրա ամրապնդում և երկրորդ՝ կանխարգելում և դրական վերահսկողության սահմանում: Բնակչության աղքատության մեջ չափերի դեպքում միանշանակ արգելել երեխաների աշխատանքն՝ ընտանիքին այլընտրանք չառաջադրելով, անհմաստ է և ոչ արդյունավետ. ոչ թե պետք է մեխանիկորեն արգելել երեխաների աշխատուժի ցանկացած օգտագործում տնտեսությունում, այլ որ դա չարվի նրանց կենսական պահանջմունքների բավարարման հաշվին: Այլ խոսքով, խնդիրը երեխաների զբաղվածության չափի ճանաչման մեջ է: Յետևաբար, արդյունավետ է երկրորդ ուղին՝ կանխարգելումն ու արդեն աշխատող երեխաների հանդեպ դրական վերահսկողությունն ու համակողմանի պաշտպանությունը: Արգելքը աշխատող երեխաների համար չի կարող օգտակար լինել, քանի որ, կարիքից դրդված, երեխան կաշխատի ավելի ապահով «քաքնված» պայմաններում: Միևնույն ժամանակ, երեխայի աշխատանքն արգելելիս, պետք է բացառություն անել այն դեպքերում, երբ մասնագիտական համապատասխան եզրակացությամբ աշխատանքը չի խաթարի կամ վնասի երեխային (համապատասխան ընթացակարգով պետք է սահմանվի, թե ո՞ր կառույցը կարող է այդպիսի եզրակացություն տալ: Անհրաժեշտ է պաշտպանել երեխաներին այն դեպքերում, երբ նրանց պարզապես հնարավոր չէ ետ պահել աշխատանքից, բայց նախ պետք է ընդունել, որ կան այդ «անհրաժեշտաբար գոյություն ունեցող» դեպքերը և սահմանել դրանք:

Սոցիալական մորթիկացիայի տեսանկյունից, համաձայնեցված գործողություններով երեխաների աշխատելու պատճառներին ուղղված ջանքերը ավելի արդյունավետ կարող են լինել և նման մոտեցումը աջակցություն կստանա որոշում կայացնող և ծառայություններ մատուցող մասնագետների մեջ մասի կողմից:

Դերակատարների խնդիրը: Թվում է, թե բոլոր առկա և գործող կառույցներն իրենց մանդատներին համապատասխան պետք է ունենան պատասխանատվություն՝ դրանով զբաղվելու, սակայն դրանց բոլորի՝ ոստիկանության, երեխայի պաշտպանության բաժինների, խնամակալության հանձնաժողովների, դպրոցների և այլ կառույցների առնչությունը այս հիմնախնդրին կրում է հատվածային, չկանոնակարգված բնույթ, և խնդրի համար կոնկրետ պատասխանատուն հստակ չէ: Բացառապես օրենսդրական միջոցներով երեխայի իրավունքների ճանաչումը և երեխայի աշխատելու պարագայում նրա պաշտպանության կազմակերպումը չի կարող արդյունավետ

լինել, անհրաժեշտ են լրացուցիչ ճկուն, մասնագիտական մոտեցումներ, որոնք սակայն պետք է մանդատավորվեն դերակատարների պարտականությունների նկարագրում:

Առաջարկություններ

Երեխաների աշխատանքի հիմնախնդրի լուծման հնարավոր ուղիները.

Սոցիալական բարեկեցության ոլորտում.

- Երեխայի աշխատանքի կանխարգելման ջանքերը արդյունավետ կարող են լինել, եթե այն կազմի աղքատության հաղթահարման ռազմավարության բաղկացուցիչ մասը: Մասնավորապես, ընտանեկան նպաստի ոլորտում կարիք կա վերանայումներ կատարել ընդգրկման չափանիշների վերաբերյալ:⁶

Կրթական ոլորտում

- Հիմնական այնպիսի ինստիտուտի, ինչպիսին կրթության ինստիտուտն է, գործառնան «ճկունացումը», երեխաների կարիքների վրա վերջինիս գործառնան կիզակետը տեղափոխելը:
- Մասնագիտացում տալու նպատակով բոլոր հնարավոր այլընտրանքների ներմուծումը դպրոց, որոնք թույլ կտան երեխային պահել դպրոցում՝ շարունակելու կրթությունը կամ համատեղելու կրթությունն ու մասնագիտազման հնարավորությունները՝ աշխատանքի հետ: Դա նշանակում է, որ դպրոցը պետք է մշակի ավելի ճկուն, գրեթե անհատականացված ծրագրեր՝ աշխատող երեխաների համար:
- Դպրոցներին հնարավորություն տալ ավելի ճկուն գործել դպրոցական արձակուրդները տրամադրելիս՝ դրանք հարմարեցնելով իրենց տարածաշրջանում զանգվածային բերքահավաքների շրջանին:
- 6-րդ դասարանից հետո, եթե երեխայի մոտ կրթության շարունակման դժվարություններ են առաջանում, փորձել արհեստագործական ուսուցում կազմակերպել իրենց դպրոցում՝ նախապատրաստելով անցումը մասնագիտական կրթության: Վերականգնել արհեստագործական ուսուցման նախկին ցանցը, երբ դպրոցում պարտադիր ուսումը տարբեր պատճառներով շարունակել չկարողացող երեխաներն ընդունվում էին արհեստագործական ուսումնարաններ՝ պահպանելով պարտադիր կրթություն ստանալու հնարավորությունը:
- Հանել 8-ամյա կրթության պարտադիր պայմանը՝ մասնագիտացում

⁶Հետազոտության ընթացքում հայտնաբերված դեպքերի օգալի թվի պարագայում ընտանիքը տարբեր պատճառներով դուրս է այդ համակարգից:

ստանալու պարագայում: Այն Երեխաների համար, ովքեր կրթությունից դուրս են մնացել՝ տալ հնարավորություն մասնագիտացումը համատեղել պարտադիր կրթություն ստանալու հետ:

Դամակարգի համապատասխանեցման և օրենսդրական բարեփոխումների ոլորտում

- Երեխայի աշխատանքի հիմնախնդրի կարգավորման համար կոնկրետ պատասխանատուների առանձնացումը և նրանց մանդատավորումը:
- Երբ բացահայտվում են Երեխայի անթույլատրելի պայմաններով աշխատանքի դեպքեր, օրենքը պետք է նախատեսի արգելքի հետո փոխհատուցման շրջան, քանի որ Երեխան արգելքի արդյունքում կմնա առանց գոյատևման միջոցների:
- Աշխատանքի տեսչությունում իմաստ ունի ստեղծել Երեխայի աշխատանքի հատուկ բաժին, որի գործառույթները վերահսկողականից բացի պետք է լինեն նաև աջակցող-կազմակերպչական՝ ներգրավելով այդ պաշտոնում սոցիալական աշխատողի:
- Օրինականորեն գրանցված անչափահաս տարիքի աշխատող ունեցող գործատուներին ազատել սոցվճարներից, ինչպես նաև խրախուսման այլ ձևեր կիրառել՝ Երեխաների համար համապատասխան աշխատատեղեր ստեղծելիս՝ մշակելով համապատասխան վերահսկման մեխանիզմներ: Նման Երեխաների հետագա կրթությունը շարունակելու հնարավորություն ստեղծելու համար խրախուսական ձևեր մտածել գործատուների համար (օրինակ, փոխհատուցել գործատուի՝ Երեխայի կրթության համար տրված ծախսի մի մասը կամ անբողջը): Կարելի է շահագրգիռ կողմերի հետ քննարկման դնել զանազան այլ մեխանիզմներ:
- Զբաղվածության տարածքային կենտրոնները պետք է աշխատեն նաև Երեխաների հետ՝ մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստման ծրագրերով, ծավալեն գործատուների հետ համագործակցություն՝ Երեխաների համար աշխատատեղեր ունենալու համար: Վերահսկողությունը դնել այդ նույն կենտրոնների և Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժինների վրա՝ տվյալների հավաքագրումից մինչև միջամտություն և հետագա վերահսկողություն: **Կազմակերպչական-ընթացակարգային**
- Մասնագիտական ուժերի մորիլիզացման միջոցով կոնկրետ և առանձին դեպքերի հետ աշխատանք, համայնքային ինքնամոնիթորինգ՝ աշխատող Երեխաների վերաբերյալ;
- ԵԻՊԲ-ներին թույլ տալ բացառության կարգով աշխատանքի տեղավորել

ոչ աշխատանքային տարիքի երեխաներին, եթե նրանց ընտանիքների սոցիալական ապահովության խնդիրն այլ կերպ լուծել չի լինում, ինչպես նաև այն դեպքերում, երբ երեխան հաշվառված է ոստիկանության անշափահասմերի բաժնում, խուսափում է կրթությունից:

Իրազեկում և կարողությունների զարգացում

- Դասարակական կազմակերպությունների և ՁԼՄ–ների համագործակցումը և դրա ակտիվացումը՝ հանրության ուշադրությունը առանձին դժվար դեպքերի մեկնաբանությունների վրա սևեռելու համար:
- Անհրաժեշտություն կա երեխաների աշխատանքի սոցիալական համատեքստի վերաբերյալ հանրային իրազեկում իրականացնել և երեխաների հետ աշխատող մասնագետների համար իրագործել հատուկ կարողությունների զարգացում:

Ներածություն

Դայաստանը, շատ երկրների նման, ունի երեխաների աշխատանքային շահագործման խնդիրը, սակայն դրա բնույթը, դրսնորման ձևերը, իրական

չափերը, տարածվածությունը և խորությունը ուսումնասիրված չեն: Պաշտոնական վիճակագրական տվյալները ուղղակիորեն գրեթե ոչինչ չեն պարունակում այս խնդրի վերաբերյալ, մինչդեռ դժվար վիճակում հայտնված երեխաների հետ աշխատող կազմակերպությունների և ծառայությունների մեջ մասը վկայում է, որ հիմնախնդիրը առկա է բազմաթիվ օրինակներով:

Դասկանալի է, որ ընդհանրապես ազգաբնակչության գբաղվածության գրանցումների հետ էական խնդիր ունեցող երկրում հազիվ թե անչափահասմերի աշխատանքի դեպքերի ավելի կանոնավոր գրանցումներ լինեին, առավել ևս վերահսկում և ուղեկցումներ, եթե դրա համար երկրում առկա միակ նախադրյալն օրենսդրական փաթեթն է՝ առանց իրագործման մեխանիզմների և սոցիալական իրականության հետ անմիջական կապի:

Անկախ պաշտոնական գրանցումներից այսօր երեխաների աշխատուժը ակնհայտորեն ներառված է Դայաստանի տնտեսության մեջ: Հետխորհրդային Դայաստանում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները հանգեցրին բնակչության լայն խավերի կենսամակարդակի անկմանը և կյանքի որակի վատացմանը: Աղքատությունը շարունակում է լինել մեծ չափերի և ընտանիքներում երեխաներն ուղղակիորեն իրենց վրա կրում են դրա հետևանքները: Դողի սեփականաշնորհումից հետո գյուղական բնակչությունը լծվեց նրա մշակությանը՝ դրանում լայնորեն մասնակից դարձնելով նաև երեխաներին: Ընտանիքի ծանր սոցիալական վիճակը շատ լուրջ փաստարկ էր և շարունակում է լինել այդպիսին՝ նման ներառումն արդարացնելու համար, հատկապես՝ սեզոնային աշխատանքներում: Գաղտնիք չէ, որ սեզոնային ծանր աշխատանքը հաճախ երեխաների ուժերից վեր է և արվում է ի հաշիվ նրանց առողջության, կրթության ու հանգստի: Բացի սեփական տնտեսությունում իրականացվող աշխատանքներին մասնակցելուց, երեխաները սկսեցին համալրել նաև գյուղատնտեսական վարձու աշխատանքի շուկան, հատկապես՝ բերքահավաքի շրջանում:

Քաղաքային բնակավայրերում նույնպես երեխաները ներառվեցին վարձու աշխատանքի շուկա. բեռնակրություն, առևտուր, սպասարկում և հավաքովի գործունեություն (գունավոր մետաղներ, շշեր և այլն):

Նման պայմաններում երեխաների իրավունքների պաշտպանությունը, հատկապես՝ աշխատանքային շահագործումից, դառնում է իրատապ և դժվար լուծելի խնդիր: Օրենսդրական բարեփոխումները միայն ձևականորեն են պաշտպանում երեխաների իրավունքները: Երեխայի աշխատանքը համարվում է որպես նրա սոցիալականացման և դաստիարակության միջոց մի կողմից, և մյուս կողմից, այդ աշխատանքն

անցանկալի երևույթ է. որտե՞ղ է սահմանը, ինչպիսի՞ն է դրա ընկալումը հասարակության մշակութային համատեքստում, ինչպիսի՞ փոփոխությունների է այն ենթարկվում անցումային այս փուլում:

Սույն հետազոտության իրատապությունը պայմանավորված է նրանով, որ երևույթն անգեն աչքով տեսանելի է, սակայն իրական չափերը՝ (խորությունը, տարածվածությունը) և ազդեցությունը երեխաների կենսագործունեության վրա ուսումնասիրված չեն, ինտենսիվ՝ չկան հավաստի տվյալներ երևույթի և ոչ մի կողմի վերաբերյալ:

Աշխատող երեխաների իրավիճակի ուսումնասիրությունը Հայաստանում կարող է օգտակար լինել սոցիալական քաղաքականության պատասխանատուների համար՝ մշակելու համապարփակ ռազմավարություն՝ շոշափելիորեն արձագանքելու այս խնդրին:

Այսպիսով, հնարավոր կլինի ուրվագծել իրատեսական միջանտությունների այն շրջանակը, որը ուղղված կլինի աշխատող երեխային, ծնողներին, ընտանիքին, համայնքին:

Գլուխ 1. Երեխաների աշխատանքի երևույթը ՀՀ-ում. ընդիանուր տեղեկություններ:

1.1. Հայեցակարգային խնդիրներ և օգտագործված հասկացություններ.

«Երեխա», «աշխատանք» և «զբաղվածություն» հասկացությունները վիճաբանության առարկա են մանկության մասնագետների, հատկապես տեսաբանների համար՝ անցած դարի 80-ականներից սկսած: Գրականության մեջ տարբեր հայեցակարգային մոտեցումների առկայությունը բացատրվում է «մանկության» հասկացության մշակութային համատեքստով, ինչն ենթադրում է տարբերություններ՝ կախված ազգային և տարածաշրջանային առանձնահատկություններից:

Ներկայումս շրջանառում են անչափահասների աշխատանքի վերաբերյալ երկու հակադիր տեսակետներ:

Աբովիզիոնիզմ. Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ Երեխայի ցանկացած տիպի աշխատանքի ձևով տնտեսության մեջ ներգրավվելն ի վերջո վնասում է նրա ներդաշնակ զարգացմանը, հետևաբար, պետք է արգելվի Երեխաների աշխատանքը: Այս մոտեցումը հաշվի չի առնում Երեխաների աշխատելու Երևոյթի իրական դրդապատճառները: Աբովիզիոնիստական մոտեցումը հազիվ թե իրատեսական լինի Հայաստանի համար, որտեղ պատմականորեն Երեխայի աշխատուժը հողի մշակման համար անփոխարինելի է եղել և այս ոլորտում կուտակված է⁷ հսկայական պատմական փորձ:

Պոստեկազիոնիզմ. Այս մոտեցման կողմնակիցներն աշխատանքը համարում են Երեխայի սոցիալականացման կարևոր գործոն (փուլ կամ անհրաժեշտ բաղադրիչ), որն իր հերթին նպաստում է Երեխայի ճանաչողական, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, եթե բնույթսվ վնասակար չէ և ուղեկցվում է դրական ուղղությամբ: Այս տեսակետը ավելի իրատեսական է Հայաստանի համար, սակայն խնդիրը նրանում է, թե ինչպես պաշտպանել Երեխաներին, որպեսզի աշխատանքում ներգրավումն ընթանա նպաստավոր և ոչ թե՝ վնասող պայմաններում:

«Երեխայի աշխատանք» կամ «Երեխայի կողմից կատարվող աշխատանք» հասկացությունը տարբեր հետազոտություններում սահմանվում է տարբեր կերպ: Որոշ հետազոտություններում այդ հասկացությամբ նկատի են ունենում Երեխայի ինչպես վճարվող, այնպես էլ չվճարվող աշխատանքն, այսինքն՝ աշխատանքը սեփական տնային տնտեսությունում: Եթե նկատի ունենանք, որ տնտեսական գործունեության վերջնական արդյունքը դրամով արտահայտելի է կամ կարելի է վերածել դրամական համարժեքի, ապա նման տեսակետի կողմնակիցները ճիշտ են: Սույն հետազոտության մեջ մենք նկատի ենք

⁷ Սովորաբար Երեխայի ամբողջական մասնակցությունը և ներգրավվածությունը ընտանիքի տնտեսության վարման, հողի մշակման մեջ եղել է միակ Երաշխիքը՝ ժառանգելու դրա հետագա տնօրինման հրավունքը՝ բարոյական և դրավական տեսակետից:

ունեցել միայն այն դեպքերը, երբ Երեխան վճարվում է գործատուի կողմից կամ դրամ է վաստակում ծառայություն մատուցելու կամ ապրանք վաճառելու միջոցով: Սակայն նաև պահպանել Ենք հնարավորությունը՝ դիտարկել տնային տնտեսությունում Երեխայի ընդգրկվածության ձևերը և չափերը՝ որպես աշխատանք:

Այսպիսով տարբերակել Ենք Երկու հասկացություն.

1. «Աշխատող Երեխա», ի նկատի ունենալով այն դեպքերը, երբ Երեխան աշխատում է որևէ գործատուի մոտ և դրանով դրամ է վաստակում կամ վճարվում է այլընտրանքային ձևերով. օրինակ բնամթերք և այլն:
2. Սեփական տնտեսությունում արտադրական նպատակով աշխատող Երեխա («գործատուն» ընտանիքն է կամ դա Երեխայի սեփական նախաձեռնությունն է՝ զբաղվելու տնայնագործությամբ):

Օգտագործված հասկացությունների ամբողջական ցանկը տես հավելված 1-ում:

1.2. Ժողովրդագրական տվյալներ

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2004թ.-ի տվյալներով, բնակչության ընդհանուր թվաքանակից (3222.9 հազ. մարդ) քաղաքային բնակչության ցուցանիշը կազմել է 2065.9 հազ. մարդ, իսկ գյուղականը՝ 1157.0 հազ. մարդ, այդ թվում բնակչության ընդհանուր թվաքանակից 700.3 հազար մարդ աշխատունակ տարիքից ցածր է (քաղաքային՝ 419.4 հազար մարդ, իսկ գյուղական՝ 280.9 հազար մարդ):

Մինչև 16 տարեկան Երեխա ունեցող տնային տնտեսությունների կազմն ըստ Երեխաների թվի հետևյալն է. մեկ Երեխա ունեցող՝ 22.2%, Երկու Երեխա՝ 22.9%, Երեք Երեխա՝ 7.2%, չորս Երեխա ունեցող՝ 1.8%, հինգ և ավելի Երեխա՝ 0.6 %, Երեխա չունեցող՝ 45.3%:

Տնային տնտեսությունների 45 %-ը չունի մինչև 16 տարեկան Երեխա:

2006թ.-ի դրությամբ պետական նախադպրոցական հիմնարկներում գրանցված Երեխաների թիվը հազար Երեխայի կտրվածքով կազմել է 47.3 (21.6%՝ համապատասխան Երեխաների թվից), այդ թվում քաղաքում այդ ցուցանիշը գրանցվել է 38.4 (28.5%), իսկ գյուղական վայրերում՝ 8.9 (10.5%):

Պետական հանրակրթական դպրոցներում սովորող Երեխաների թիվը հազար Երեխայի կտրվածքով կազմել է 458.6, որից քաղաքում՝ 271.0, գյուղական բնակավայրերում՝ 187.6, իսկ Երեկոյան (հերթափոխային) հանրակրթական դպրոցներում՝ 0.26:

Պետական միջնակարգ մասնագիտական հաստատություններում

սովորողների թիվը 1000 մարդու կտրվածքով կազմել է 28.3, իսկ 10.000 մարդու կտրվածով՝ 87.8:

1.3. Խնդրի ազգային և իրավական շրջանակը

Դայաստանում տնային տնտեսության աշխատանքներում ներառված են համարյա բոլոր երեխաները: Ներառումը սկսվում է շատ վաղ տարիքից: Աշխատանքը տնտեսությունում այնքան նորմալ և բնական է համարվում, որ չափահասները նույնիսկ տարակուսում են դրա նպատակահարմարության վիճարկման ժամանակ: Նրանց կողմից աշխատանքը դիտվում է որպես երեխաների դաստիարակության, նրանց «մարդ» դարձնելու կարևոր միջոց: Գիտակցելով երեխաների աշխատելու, ընտանիքներին օգնելու անհրաժեշտությունը՝ գյուղական բնակավայրերում երբեմն զանգվածային բերքահավաքի շրջանում դպրոցի պարապմունքներից որոշ ժամանակով ազատում են երեխաներին՝ փորձելով այդպիսով օգնել ընտանիքներին:

Երեխաներին տնտեսության արտադրական աշխատանքներին մասնակից դարձնելու գաղափարը նաև հակառակորդներ ունի հանձինս մասնագետների, ովքեր ավելի հաճախ են այսօր խոսում երեխաների իրավունքների ուժահարման մասին՝ վկայակոչելով, որ երեխայի աշխատելը տեղի է ունենում նրա հանգստի և կրթության հաշվին: Ավելին, հաճախ դա տեղի է ունենում չվերահսկվող պայմաններում՝ ընտանիքի, համայնքային կառույցների և օրենսդրական կարգավորման շրջանակից դուրս:

Իրավական շրջանակը⁸ Երեխաների իրավունքների Կոնվենցիան հորդորում է խուսափել վաղ տարիքում երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելուց՝ նկատի ունենալով նրանց առողջությանն ու զարգացմանը սպառնացող վտանգները: ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս աշխատել 16 և բարձր տարեկան անձանց, որոշ դեպքերում նաև 14 տարեկան անձանց՝ ծնողի/խնամակալի համաձայնությամբ: 14-16 տարեկան երեխաների դեպքում ենթադրում է, որ ծնողի կամ խնամակալի հետ պետք է կնքվի համապատասխան համաձայնագիր: Այլ խոսքով, ծնողը/խնամակալը հանդես է գալիս որպես երաշխավոր՝ երեխայի աշխատանքի անվտանգության և գործատուի պարտավորությունների իրացման համար: Օրենքը նաև նախատեսում է առողջությանը վնասող հստակ սահմանված պայմանների բացառում երեխայի համար, հակառակ դեպքում՝ նախատեսվում են վարչական տույժեր:

Օրենքով սահմանված երաշխիքները վերաբերում են.

⁸ Այս ենթավերնագրի տեղեկատվությունը մշակված է Մակ-ի մանկական հիմնադրամի իրավական խրհրդատւ Ա. Եսայանի հաշվետվության հիման վրա:

-աշխատաժամանակի տևողությանը, քանի որ անչափահասների համար սահմանվում է կրճատ աշխատանքային օր, ապա, բնականաբար, արտաժամյա աշխատանքը նույնպես բացառվում է (14-16 տարեկան աշխատողների համար՝ շաբաթական քսանչորս ժամ, տասնվեցից տասնութ տարեկանների համար՝ երեսունվեց ժամ):

-աշխատանքի պայմաններին. (Վնասակարության կամ առանձնապես վնասակար պայմաններում արգելվում է անչափահասներին աշխատանքի ներգրավել):

-հանգստի խնդիրներին. ամենօրյա անընդեջ հանգիստը 14-16 տարեկան երեխաների համար չի կարող պակաս լինել 14 ժամից, իսկ 16-18 տարեկան երեխաների համար՝ 12 ժամից:

Աշխատանքային պայմանների՝ սանիտարահիգիենիկ կանոնների, օդի աղտոտվածության և մյուս խնդիրների հետ կապված աշխատանքային օրենսգրքի համապատասխան նորացված հոդվածներն ուժի մեջ են մտնելու օրենսգիրքը գործունեության մեջ դնելուց երեք տարի հետո:

2008 թ. հունիսից, գործատուների կողմից իրենց պարտավորությունների չկատարման դեպքում թեև նախատեսվում է տուգանք, սակայն սանկցիայի սուբյեկտի հարցը օրենսդրությամբ դեռևս լուծված չէ: Այլ խոսքով, աշխատանքային և վարչական օրենսգրքերի միջև առկա է անհամապատասխանություն:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը երեխայի աշխատանքի իրավունքի մասին հիշատակում է 16 տարեկանից, իսկ 14-16 սահմաններում ապավինում է ծնողի միջամտությանը՝ գործատուի հետ հարաբերություններում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները կարող են ավելի փոքր տարիքում ներգրավել աշխատանքներում, քան 14-ն է և, որպես կանոն, առանց ծնողի միջամտության:

ՀՀ օրենսդրությունը կիրառում է անչափահասների «վճարովի աշխատանք» տերմինը կամ «աշխատանք» ասելով, արդեն իսկ, ենթադրվում է վճարում ինչ-որ ջանքերի դիմաց, սակայն ավելի օգտակար կլինիկ կիրառել «օգտակար, վնասակար կամ վտանգավոր, հետևաբար՝ «անթույլատրելի» տերմիններ: Ենիշտ է, օրենքն օգտվում է «վնասակար, վտանգավոր» տերմինից, սակայն հստակ չէ, թե ո՞րն է սահմանը «օգտակար» և «ոչ օգտակար» բնույթի աշխատանքների միջև: Չլուծված այս խնդիրը ստեղծում է ոլորտի կարգավորման լուրջ բարդություններ:

Աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածում սահմանված է, որ կամավորական աշխատանքը չի կարող համարվել անօրինական, հետևաբար

խնդիր է դառնում, թե ինչպես պարզել այն կամավոր է կատարվել, թե բռնության և հարկադրանքի որևէ տեսակի կիրառմամբ։ Այս խնդիրը երեխաների դեպքում խիստ արդիական է։ ՀՀ աշխատանքային օրենսգիրքն այսօր չի սահմանում, թե որն է համարվում հարկադիր աշխատանք։ Իրավական դաշտի մյուս խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրությամբ առ այսօր «ոչ ֆորմալ տնտեսություն» հասկացությունը սահմանված չէ, ինչը մեծ խոչընդոտի առջև է կանգնեցնում մասնագետներին։

Մինչդեռ ոչ ֆորմալ տնտեսությունը կազմում է մեր ազգային տնտեսության և աշխատաշուկայի նշանակալի մասը, կարևոր դեր է խաղում աշխատատեղերի ստեղծման, եկամուտների ձևավորման հարցում։ Քանի որ երկրում քաղաքակենտրոնացումը (ուրբանիզացիան) բարձր է, ոչ ֆորմալ տնտեսությունը, որպես կանոն, «կլանում է» քաղաքային աշխատուժի հիմնական մասին։ Ոչ ֆորմալ տնտեսությունը դարձել է կարևոր այլընտրանքային գոյատևման միջոց, քանի որ կենսաթոշակների, նպաստների և աշխատավարձերի մակարդակը շարունակում է մնալ ոչ նշանակալից։ Այնուամենայնիվ, գոյություն ունի փոխադարձ կապ աղքատության և ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատանքի միջև։ աշխատանքային օրենսդրության բացերը, ոչ ֆորմալ տնտեսության աշխատողների սոցիալական պաշտպանության համակարգի բացակայությունը, ինչպես նաև այն փաստը, որ ոչ ֆորմալ տնտեսությունում՝ աշխատավարձերն ավելի ցածր են, քան ֆորմալ տնտեսությունում մարդկանց օգնում է լինել «զբաղված», սակայն չի դառնում միջոց՝ աղքատությունից դուրս գալու համար։

Գլուխ 2. Մեթոդաբանությունը և տվյալների հավաքագրումը

2.1 Հետազոտության նպատակն ու խնդիրները

Նպատակը

ՀՀ-ում զբաղված (աշխատող) անչափահասների աշխատանքի երևույթի ուսումնասիրություն՝ ուղղված երեխաների իրավունքների (որոնք կապված են աշխատանքի հետ) պաշտպանությանը և որը ներառում է երեխաների աշխատանքի տարածվածության, դրա հետ կապված գործոնների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու երևույթի կարգավորմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակումը:

Հիմնական խնդիրները

- * Բացահայտել ՀՀ աշխատաշուկայում անչափահասների աշխատանքի բնույթը, ձևերը, ընդգրկվածության պատճառներն ու տրածաշրջանային առանձնահատկությունները
- * Բացահայտել ՀՀ ում աշխատաշուկայում ներառված անչափահասների աշխատանքի պայմանները, ինչպես նաև երեխաների առողջության, կրթության և զարգացման վրա վերոհիշյալ երևույթի հիմնական ազդեցությունները:
- * Ստանալ ՀՀ-ում աշխատող երեխաների ժողովրդագրական բնութագրերը՝ մարզային և ազգային մակարդակներում:
- * Առաջարկություններ անել անչափահասների աշխատանքի կանխարգելման, աշխատանքային պայմանների մոնիթորինգի և իրավիճակի բարելավման ուղղությամբ:

2.2 Ընտրանքի ձևավորումը: Հետազոտության ընթացքում որպես դիտարկման միավորներ վերցվել են տնային տնտեսությունները, քանի որ դրանք հետազոտող խմբի կողմից դիտվել են որպես այն սոցիալական միջավայրը, որտեղ ձևավորվում է երեխայի անձը և իրականում տեղի է

ունենում ներառվելու գործընթացը: Տնտեսությունների պատահական ընտրությունը ներկայացուցչական ընտրանքի պայմաններում թույլ է տալիս հուսալի դատողություններ անել Հայաստանում երեխաների աշխատելու երևոյթի տարածվածության մասին, ինչպես նաև աշխատող երեխաների թվաքանակի, սեռատարիքային կազմի, երևոյթի պատճառների, աշխատող երեխաների ընտանիքների սոցիալապես խոցելի խմբերին ու սոցիալական շերտերին պատկանելության, մեր պրակտիկայում գործող երևոյթի հիմնական ձևերի մասին:

Աղյուսակ 1. Հետազոտության ընտրանքը ըստ բնակավայրի տեսակի

	Տնային տնտեսությունների քանակն ըստ բնակավայրի տեսակի			Ընդամենը
	Երևան	մարզի քաղաք	գյուղ	
Երևան	369			369
Սյունիք		30	21	51
Կոտայք		46	45	91
Վայոց Ձոր		8	11	19
Շիրակ		56	34	90
Տավուշ		20	24	44
Գեղարքունիք		29	47	76
Արմավիր		32	62	94
Արարատ		31	64	95
Լոռի		58	34	92
Արագածոտն		19	28	47
Ընդամենը	329	368	1066	

Հետազոտության ընթացքում իրականացվել է տարածքային բազմաստիճան շերտավորված ընտրանք: Որպես գլխավոր համակցություն դիտարկվել է ՀՀ տնային տնտեսությունների բազմությունը: Դրանցից 1066 ընտրանքային ծավալի դեպքում ընտրանքի սահմանային սխալը չի գերազանցում 3%-ը՝ 0.95 վստահության հավանականության դեպքում: Ընտրանքի ծավալը կազմել է 1066 միավոր: Շերտավորման արդյունքում տվյալ ծավալը բաշխվել է Երևան քաղաքի և 10 մարզերի միջև: Երևան քաղաքում ընտրվել է 369, իսկ մյուս 10 մարզերի քաղաքներում և գյուղերում, ընդհանուր առմամբ, 697 տնային տնտեսություն, ընդ որում բնակավայրերի քանակը կազմել է 40-ից ավելի: Ընտրանքի միավորները հայտնաբերելու համար կիրառվել է երթուղային ընտրանքի մեթոդը: Ընտրված տնտեսություն մուտք գործելուց առաջ հարցազրուցավարը բացահայտել է 7 և ավելի տարիքի երեխաների առկայությունը/կարող էին լինել նաև այլ տարիքի երեխաներ, բայց նշված միջակայքի տարիքի երեխայի առկայությունը պարտադիր պայման էր

տնտեսությունը ընտրանքում ներառելու համար հակառակ դեպքում՝ նա պետք է որոներ այլ բնակարան: Տնտեսությունում աշխատող երեխա հայտնաբերելու դեպքում առանձին հարցազրույց է կատարվել նաև նրա հետ:

Այսպիսով, նախագծված տարածքային բազմաստիճան շերտավորված ընտրանքի իրականացումը կատարվել է հետևյալ 5 փուլերով.

I փուլ. Առաջին փուլի ընտրության միավորները (բույները) եղել են բնակավայրերը: Համախմբության շերտավորումը կատարվել է ըստ տարածքային վարչական բաժանման, ըստ բնակավայրի տեսակի (քաղաքային, գյուղական), ըստ բնակավայրի չափի և ըստ ծովի մակերևույթից բնակավայրի բարձրության:

1. Ընտրանքային համախմբության մեջ ընդգրկվել են հետևյալ տիպի բնակավայրեր.

- մինչև 1.000 բնակչությամբ բնակավայրեր
- 1,000-10,000 բնակչությամբ բնակավայրեր
- 10,001-20,000 բնակչությամբ բնակավայրեր
- 20,001-50,000 բնակչությամբ բնակավայրեր
- 50,001- 100,000 բնակչությամբ բնակավայրեր
- 100,001-500,000 բնակչությամբ բնակավայրեր
- 500001- և ավելի բնակչությամբ բնակավայրեր
- գյուղեր

2. Ընտրանքային համախմբությունը ներառել է բնակավայրեր, որոնք տեղակայված են 3 տիպի բարձրություններում գտնվող գոտիներում.

I գոտի – ծովի մակերևույթից մինչև 1000 մ. բարձր

II գոտի – ծովի մակերևույթից 1000-ից մինչև 1500մ բարձր

III գոտի – ծովի մակերևույթից 1500մ և ավելի բարձր

Ընտրանքային համախմբությունը բաշխվել է վերջնական ընտրանքային միավորների ընտրվելու հավասար հնարավորությունն ապահովելու ռազմավարության հիման վրա (այսինքն՝ միավորները բաշխվել են ուղիղ համեմատական՝ մարզերի և բնակավայրերի բնակչության թվին):

II փուլ: Երկրորդ փուլի ընտրության միավորները (բույները) փողոցներն են: Շերտավորումն իրականացվել է ելեկով փողոցների տեսակներից՝ կենտրոնական և ծայրամասային: Ընդ որում, Երևան քաղաքում ընտրանքն իրականացվել է բոլոր 11 համայնքներում:

III փուլ: Երրորդ փուլի ընտրության միավորները (բույները) եղել են

շենքերը (կամ տները): Յուրաքանչյուր փողոցում շենքերն ընտրվել են սիստեմատիկ պատահական ընտրանքի միջոցով:

IV փուլ: Չորրորդ փուլի ընտրության միավորները (բույները) հանդիսացել են տնային տնտեսությունները: Ընտրանքում ընդգրկվել են այն տնային տնտեսությունները, որոնց կազմում անպայման կան 7-18 տարեկան երեխաներ: Այսպիսով, ընտրվել են 1066 տնտեսություններ: Ընդ որում, այդ տնտեսություններն ընտրվել են ցուցակից՝ պատահական ընտրանքի միջոցով:

V փուլ: 5-րդ փուլում կատարվել է վերջնական միավորների ընտրությունը: Կիրառվել է «եզակի հարցվողի» ընտրության ռազմավարությունը, այսինքն՝ ընտրանքում ընդգրկվել է տնային տնտեսության այն անդամը, ով առավել խորը տեղեկություններ կարող է տրամադրել երեխայի վերաբերյալ: Աշխատող երեխաների ենթաընտրանքում ընդգրկվել է 7-18 տարեկան այն երեխան, ում ծննդյան օրն ամենամոտիկն է հետազոտության անցկացման օրին:

Գործառուների հարցումներ. Հարցման ընթացքում ընտրանքում հայտնաբերված աշխատող երեխաների համար կազմվել է աշխատավայրերի և գործառուների ցուցակ: Ընտրանքում ընկած յուրաքանչյուր բնակավայրում (40 բնակավայր) կազմվել է այդպիսի ցուցակ: Այդ ցուցակներից ընտրվել են գործառուներ հարցման համար՝ ըստ տնտեսության ոլորտների՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, առևտուր, շինարարություն, ծառայություններ և այլն:

Գործառուների հետ անցկացվել են հարցազրույցներ, որոնք թույլ են տվել ամբողջական պատկերացում ունենալ աշխատող երեխաների իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ, հասկանալ, թե ի՞նչ խնդիրներ կան այդ բնագավառում, ի՞նչ մեխանիզմների ներդրման կարիք կա, որպեսզի աշխատող երեխաներն ավելի պաշտպանված լինեն: Գործառուների հետ հարցազրույցի կազմակերպումը թույլ է տվել ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը իհմք կծառայի դաշտում առկա իրավական խնդիրների կարգավորմանը: Ընդհանուր առմամբ հարցվել է 17 գործառու:

Ֆոկուս խմբերի կազմակերպում: Ֆոկուս խմբի կազմակերպում երեխաների հետ աշխատող մասնագետների մասնակցությամբ. Ինը ֆոկուս խմբեր են կազմակերպվել մարզկենտրոններում, որում ընդգրկված են եղել մարզի երեխաների հետ աշխատող մասնագետները (ծառայություններ մատուցողներ և երեխաների վերաբերյալ որոշում կայացնողներ՝ ուսուցիչներ, բժիշկներ, երեխաների խնդիրներով գրաղվող հասարակական կազմակերպության աշխատակիցներ, սոցիալական աշխատող, հոգեբան, Խնամակալության և

հոգաբարձության հանձնաժողովների աշխատակիցներ, նորաստեղծ ԵՒՊ մարզային բաժինների աշխատակիցներ, մարզպետարանի Սոցիալական, Կրթության, Առողջապահության բաժինների, Աշխատանքի տեսչության, Զբաղվածության ծառայությունների աշխատակիցներ):

I փուլ: 8 մարզերում կազմվել է Երեխաների հետ աշխատող կառույցների ցուցակը.

ա) դպրոցներ

բ) պոլիկլինիկաներ

գ) ոստիկանության անչափահասմերի հարցերով բաժանմունքներ

դ) հասարակական կազմակերպություններ (տեղական և միջազգային)

ե) պետական կառույցներ, բաժիններ, մարմիններ (Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, Երեխայի պաշտպանության բաժին և այլն):

II փուլ: Վերոնշյալ յուրաքանչյուր կառույցների համար կազմվել են առանձին ցուցակներ և դրանցից յուրաքանչյուրից ընտրվել է մեկ կառույց (1 դպրոց, 1 պոլիկլինիկա, 1 ոստիկանական բաժանմունք և այլն) պատահական սկզբունքով:

III փուլ: Յուրաքանչյուր ընտրված կառույցից ընտրվել է 1 կամ 2 փորձագետ՝ կառույցների ներկայացվածությունը ապահովելու և խմբի մեծությունը թույլատրելի սահմաններում պահելու նկատառումներից ելնելով: Ընտրությունը կատարվել է ըստ օբյեկտիվ չափանիշների՝ աշխատանքային փորձ, կրթություն, կոչում և այլն:

Երեխաների հետ աշխատող մասնագետների մասնակցությամբ ֆոկուս խմբերի ընտրանքի մեթոդաբանության հիմնավորում. Ֆոկուս խմբի մեթոդը հնարավորություն է տվել Երեխաների խնդիրներին քաջատեյակ մասնագետներին համատեղ քննարկել իրենց մարզի աշխատող Երեխաների խնդիրները, փոխլրացնել միմյանց և ստանալ ամբողջական տեղեկատվություն տվյալ մարզի աշխատող Երեխաների իրավիճակի մասին: Ֆոկուս խմբի միջոցով հնարավոր է եղել պարզել մասնագետների վերաբերմունքը Երեխաների աշխատանքին և հասկանալ արդյո՞ք Երեխաների աշխատելու Երևույթը մեր մշակույթի մի մաս է, թե՝ պարտադրված սոցիալական պրակտիկա, պարզել Երևույթի պատճառները, աշխատող Երեխաների սեռատարիքային կազմը, աշխարհագրությունը, գտնել օրենքի բացերը, ինչպես նաև գտնել լուծումներ իրավիճակի փոփոխման և Երեխաների իրավունքների պաշտպանության համար:

Ֆոկուս խմբերի նախապատրաստումը և իրականացումը կատարվել են

համապատասխան որակավորում ունեցող փորձագետների կողմից: Իրականացված զանգվածային հարցման նախնական արդյունքները թելադրել են ֆոկուս խմբերում քննարկման ենթակա հիմնական հարցերը:

Ուղեղների գրոհ. Ստանալով տեղեկատվություն երկրում աշխատող երեխաների իրավիճակի մասին, առանձնացնելով առկա խնդիրները՝ 2007 թ. նոյեմբերին իրականացվեց փորձագիտական հարցում ուղեղների գրոհի մեթոդով՝ երեխայի վերաբերյալ քաղաքականության մշակման հարցում նշանակալի դեր ունեցող մասնագետների մասնակցությամբ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան բաժինների ներկայացուցիչներ (Աշխատանքի տեսչություն, Զբաղվածության սոցիալական աջակցություն), երեխայի պաշտպանության մարզային բաժիններ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի խորհրդատու: Դարցման նախապատրաստական փուլում համապատասխան կառույցներից ընտրվեցին փորձագետներ՝ հաշվի առնելով որոշակի օբյեկտիվ չափանիշներ՝ փորձը, պաշտոնական դիրքը, կրթությունը, ոլորտում ճանաչված լինելը:

Ուղեղների գրոհին մասնակցեց 18 փորձագետ: Հաշվի առնելով ողջ հետազոտության արդյունքում ստացված տվյալները՝ ուղեղների գրոհը կազմակերպվեց հիմնականում օրենսդրական դաշտի հետագա բարելավման ուղղված քայլերի, համապատասխան մեխանիզմների ստեղծման և համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման հարցերի քննարկման ուղղությամբ:

Ֆոկուս խմբերի կազմակերպում անշափահաս աշխատողների մասնակցությամբ.

Իրականացվել է 4 ֆոկուս խմբեր աշխատող երեխաների հետ, չնայած նախատեսված չէր: Աշխատող երեխաների հետ լրացուցիչ ֆոկուս խմբերի համար (4) մարզերն ընտրվել են տնային տնտեսությունների ուսումնասիրությունից հետո՝ կախված աշխատող երեխաների թվից: Լրացուցիչ ֆոկուս խմբերն իրականացվել են այն 4 մարզերում, որտեղ աշխատող երեխաների թիվը համեմատաբար մեծ է եղել (Վանաձոր, Շիրակ, Արմավիր, Արարատ): Յուրաքանչյուր ֆոկուս խմբում մասնակցել են 8-10 հարցվողներ:

Մարզերի ընտրություն. Վերոնշյալ մարզերը ընտրվել են՝ հաշվի առնելով քանակական հետազոտության տվյալները, (համաձայն այն բանի, թե ո՞ր մարզերում են առավել շատ հանդիպում աշխատող երեխաներ):

Երեխաների ընտրություն: Քանակական հարցման արդյունքում աշխատող երեխաների ցանկը կազմվել է յուրաքանչյուր ընտրված մարզի համար: Երեխաների տվյալները առանձնացվել են ըստ նրանց տնտեսությունում ընդգրկման ծևերի: Ֆոկուս խմբերում ընդգրկվել են 8 երեխաներ՝

պատահական ընտրության սկզբունքով՝ աշխատելով ապահովել նրանց աշխատանքի ոլորտների ներկայացուցչականությունը:

Տնային տնտեսություններում կատարված հարցումների արդյունքներն օգտագործելով՝ ընտրվել են 23 աշխատող երեխաներ, որոնց դեպքերն առանձին ուսումնասիրվել են դեպքի ուսումնասիրման մեթոդով (նրանց սոցիալական պատմություններից առանձին դրվագներ ներկայացված են հաշվետվության մեջ):

2.3. Տեղեկատվության ստացման մեթոդները

Ծրագրի իրականացման առաջին փուլում ուսումնասիրվել են երեխաների աշխատանքին վերաբերող հետևյալ փաստաթղթերը.

ա) Երեխաների աշխատանքը կարգավորող ՀՀ օրենսդրական և նորմատիվ ակտերը,

բ) աշխատող երեխաներին վերաբերող առկա վիճակագրական տեղեկատվությունը,

գ) տարբեր կառույցների կողմից՝ պետական, հասարակական, միջազգային, աշխատող երեխաների վերաբերյալ արված հետազոտությունների հաշվետվությունները,

Այս ամենի արդյունքում հետազոտական խմբի մոտ որոշակի պատկերացում ձևավորվեց ՀՀ-ում աշխատող երեխաների խնդրի հրատապության և ուսումնասիրվածության վերաբերյալ, ինչպես նաև երևույթի տարածվածության, աշխարհագրության, այն պայմանավորող գործոնների վերաբերյալ:

Կիրառվել են նաև.

Քանակական մեթոդներ. (տնային տնտեսությունների և աշխատող երեխաների հարցումներ), որոնց արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական մշակման և

Որակական մեթոդներ. ազատ հարցազրույցներ գործատուների հետ, ֆոկուս խմբեր մասնագետների հետ, տնային տնտեսություններում աշխատող երեխաների հարցումներ, որոնք թույլ են տվել բացահայտել երևույթը բնութագրող որակական ցուցանիշները:

2.3.1. Հետազոտության գործիքները

Հետազոտության դաշտային փուլի համար նախապատրաստվել են հետևյալ գործիքները.

* Տնտեսությունների ուսումնասիրության համար նախատեսված հարցազրույցի հարցաշարը

- * Աշխատող Երեխաների համար նախատեսված հարցազրույցի հարցաշարը
- * Մասնագետների ֆոկուս խմբերի համար նախատեսված հարցաշարը
- * Գործատուների համար նախատեսված հարցման հարցաշարը (տես հավելվածներում)

Տեղեկատվության ստացման համար նախատեսված հետազոտական գործիքների պիտանիությունը ստուգվել է թռուցիկ հետազոտությունների միջոցով, ինչից հետո դրանք հղկվել են ու նախապատրաստվել հիմնական հետազոտության համար:

2.3.2. Հարցազրուցավարների և սուպերվիզորների ընտրությունն ու վերապատրաստումը. Հետազոտության դաշտային փուլն իրականացնելու համար հավաքագրվել ու հրահանգավորվել են 20 հարցազրուցավարներ: Փորձնական հարցազրույցներից հետո նրանց թվից ընտրություն է կատարվել (17):

Ընտրված հարցազրուցավարների և սուպերվիզորների համար հարցումից առաջ իրականացվել է վերապատրաստում իունիսի 17-20-ը (2 օր նվիրվել է տեսական խնդիրներին, 1 օր՝ գործնական, ծանոթություն հարցաշարին), և մեկ օր փորձարկումից առաջ տրամադրվել է պրակտիկ հնտությունների ուսուցմանը՝ հարցազրույց անցկացնելու, ընտրանքի և աշխատանքային կանոնների, ինչպես նաև հիմնական էթիկական կանոնների հետ:

2.3.3. Հետազոտության դաշտային փուլի կազմակերպում և մոմիթորինգ

Դաշտային փուլում հարցազրուցավարները խնդիրով մեկնել են հանրապետության մարզերը և պլանավորված համամասնություններով նախապես ընտրված բնակավայրերում իրականացրել են հարցումները: Հարցումներն ընդգրկել են հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:

Հարցազրուցավարների աշխատանքի որակը վերահսկելու նպատակով՝ նրանցից պահանջվել է հարցաթերթի վերջում նշել հարցվողի հեռախոսը: Վերահսկողները հարցազրուցավարների հետ միաժամանակ եղել են դաշտում՝ վերահսկելով հարցազրույցների ընթացքը: Նրանց խնդիրն է եղել նաև հարցման հաջորդ օրերին պատահական ընտրությամբ զանգահարել հարցվածներին, և ստուգել, արոյո՞ք հարցումը տեղի է ունեցել և հարցազրուցավարը անդրադարձել է բոլոր հարցերին: Դաշտ դուրս գալուց հետո թիմը մշտական կապի մեջ է եղել համակարգորի հետ: Նման վերահսկողությամբ հնարավոր է եղել ապահովել դաշտում հավաքվող

տեղեկատվության որակը:

Որակական հարցազրույցների սղագրությունները պատրաստվել և մշակվել են հարցաշարին համապատասխան: Այնուհետև ստեղծվել են յուրաքանչյուր մարզի համար նախնական հաշվետվություններ, որոնք հետագայում միավորվել են վերջնական հաշվետվության մեջ:

2.4. Տվյալների հավաքագրման աղբյուրները և վերլուծության մեթոդները

Քանակական հարցման (տնային տնտեսությունների ուսումնասիրություն) արդյունքում ստացված տվյալները մուտքագրվել են համակարգչի մեջ և մշակվել SPSS 14.0 համակարգչային ծրագրով: Տվյալների մշակումը իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլում մշակվել են միաչափ հաճախականությունների առյուսակներ, այնուհետև անցկացվել է կորելյացիոն վերլուծություն՝ փոփոխականների միջև կախվածությունները ուսումնասիրելու համար: Դիտարկվել են հետևյալ կորելյացիոն կապերը՝ ա) բնակավայրի տիպի և երեխայի աշխատելու հավանականության; բ) երեխայի աշխատելու և կենսական (առողջություն, հանգիստ, կրթություն) գործունեության; դ) ընտանիքի եկամտի չափի և երեխաների ապրելակերպի, երեխաների աշխատելու փաստի և մնացած փոփոխականների միջև այլն:

Որակական հետազոտությունների (գործատուների հետ հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, ուղեղների գրոհ) արդյունքում ստացված տեղեկատվությունը վերլուծվել է և ներկայացված է հաշվետվության մեջ:

Այսպիսով,


- Մեթոդաբանությամբ պլանավորված 1066 տնային տնտեսությունների ուսումնասիրությունները իրականացվել են նախատեսվածին համապատասխան:
- Իրականացվել է տնային տնտեսությունում աշխատող երեխաների հարցումներ (ընդամենը՝ 65):
- Գործատուների հետ նախատեսված 17 ազատ հարցազրույցների թիվը նույնությամբ պահպանվել է:
- Աշխատող երեխաների հետ խորին հարցազրույցներ նախատեսված չեն, բայց իրականացվել են 23-ը (2-ը ինքնասպանության դեպքեր էին):
- Երեխաների հետ աշխատող մասնագետների հետ նախատեսված էր 8 ֆոկուս խումբ, իրականացվել է 9-ը և
- 1 ուղեղների գրոհ (ինչպես պլանավորված էր նախապես):
- Աշխատող երեխաների հետ ֆոկուս խումբ նախատեսված չէր, սակայն իրականացվել է 4-ը:

- Փորձագիտական հարցումներ նույնականացնելու համար համարական համարականացվել է 10-ը:
Դարցվածների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը տես հավելված 4-ում:

Գլուխ 3. Հետազոտության տվյալների բնութագրերը


3.1 Ուսումնասիրված տնտեսությունների սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը Ուսումնասիրված ընտանիքների համակարգումը քաղաք-գյուղ չափանիշով այսպիսինն է (գծանկար 1).

Գծանկար 1. Ուսումնասիրված ընտանիքներ՝ ըստ քաղաք-գյուղ չափանիշի



Գծանկար 2-ում ներկայացված է դիտարկված տնտեսություններում հայտնաբերված 7-18 տ. (չլրացած) երեխաների թվի (1946) բաշխումը ըստ մարզերի.


Գծանկար 2. Երեխաների թիվը ըստ մարզերի



7-17 Երեխաների քանակը


Ըստ սերի, ուսումնասիրված երեխաների տարբաժանումն հետևյալն է (գծանկար 3).

Գծանկար 3. Երեխաների տարբաժանումն՝ ըստ սեռի



Ըստ տարիքի, ուսումնասիրված ընտանիքներում երեխաների խումբը բաժանվում է այսպիսի տարիքային ենթախմբերի. (գծանկար 4).

Գծանկար 4. Երեխաների տարբաժանումն՝ ըստ տարիքի



Ուսումնասիրված բոլոր երեխաների մեջ հաշմանդամները կազմել են 1.6 % և 1 %-ն էլ կազմել են փախստական երեխաները:


Ըստ ընտանիքի անդամների կազմի, 2 անդամից բաղկացած ընտանիքները կազմել են ընտրանքի 2,3%-ը, 3 անդամ ունեցող ընտանիքները՝ 9,09%-ը, համապատասխանաբար, 4 անդամ ունեցողները՝ 24.5%, 5 անդամից բաղկացածները՝ 26.07%, 6 անդամից՝ 26 %, 7 անդամից՝ 9.19%, 8 անդամից՝ 3.09% և 9-ը անդամից՝ 4.97%: (գծանկար 1, հավելված 3-ում)

Ուսումնասիրված տնտեսություններից 36.3 %-ում կա բարձրագույն կրթությամբ մեկ և ավելի անդամ: Տնտեսություններից 90 %-ում ապրում են մարդիկ, ում կրթական մակարդակը գտնվում է թերի բարձրագույնի և միջնակարգի միջև: Ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները նույնականացնելու համար են կազմում, բայց նրանց ճնշող մեծամասնությունը երեխաներ են, ովքեր դեռ չեն հաճախում դպրոց կամ չեն հասցրել ավարտել իրենց ութամյա կրթությունը: Ընդհանուր առմանք, հետազոտության ընթացքում

Դիտարկված տնտեսություններում կրթական ֆոնը բավականին բարձր է, ինչը բարենպաստ նախադրյալ է երեխաների կրթական հաջող կարիերայի համար, եթե սոցիալական խոչընդոտները չխանգարեն:

Ըստ նյութական ապահովվածության չափանիշի, տնտեսությունները խմբավորվում են հետևյալ կերպ (գծանկար 5):

Գծանկար 5. Տնտեսությունների բաշխումը ըստ աղքատության խմբերի.



Աղքատության շեմը ընդունվել է 20.289 դրամ 1 անձի համար 1 ամսում⁹: Աղքատ են համարվել այն ընտանիքները, որոնց ծախսը ավելի պակաս էր, քան ընդունված աղքատության շեմն է: Ծայրահեղ աղքատ են համարվել այն ընտանիքները, որտեղ անդամները ծախսում են 1 ամսում 1 անձի համար 13.266 դրամից պակաս գումար:


Դիտարկված տնտեսությունների 1/3-ից ավելի աղքատ են, ինչը ռիսկային է դարձնում այնտեղ մեծացող երեխաների խնամքի ու սոցիալականացման գործընթացները:

Դիտարկված տնտեսություններից 44 %-ում չկա գոնե մեկ անդամ, որ կանոնավոր վճարվող աշխատանք ունենա. միայն 36.7%-ում առկա է մեկ և 14.8%-ում՝ երկու կանոնավոր աշխատող (տես աղյուսակ 1, հավելված 2-ում):

Ընդ որում, ընտանիքում աշխատանք ունեցողների աշխատանքի բնույթը ունի գծանկար 6-ում ներկայացված տեսքը.

⁹ Աղյուր՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007:

Գծանկար 6. Ընտանիքի աշխատող անդամների բաշխումը ըստ աշխատանքի քննույթի



Այս ամենը փաստարկներ են այն վարկածի օգտին, որ տնտեսությունների մի մեծ խմբում երեխաները մեծ ռիսկի են ենթարկված, քանի որ այդ տնտեսությունները չունեն կայուն և բավարար ֆինանսական մուտքեր:


Այսուսակ 2-ը վկայում է, որ ուսումնասիրված տնտեսություններից 65-ում հայտնաբերվել է առնվազն 1 աշխատող երեխա: Որոշ տնտեսություններում աշխատող երեխաների թիվը մեկից ավելին է, ընտրանքային համախմբության մեջ նրանց ընդհանուր թիվը կազմել է 71:

Այսուսակ 2. Տնտեսությունների բաշխումը ըստ աշխատող երեխա ունենալու չափանիշի.

	Քանակը	%
Աշխատող տնտեսություններ	Երեխա	ունեցող
	65	6,1
Աշխատող տնտեսություններ	Երեխա	չունեցող
	1001	93,9
	1066	100,0
Ընդամենը		

Բոլոր երեխաների մեջ աշխատողների թիվը կազմում է 3.8 %: Նրանց 84.5 %-ը տղաներ են, 15.5 %-ը՝ աղջիկներ:

Գծանկար 7. Աշխատող և չաշխատող երեխաների տարիքային խմբերը



Աշխատող երեխաների 70,4%-ը 14-18տ. (չլրացած) տարիքային խմբում է, իսկ 28,2%-ը՝ 10-14տ., մինչդեռ 7-10տարեկան երեխաները կազմում են 1,4%-ը:

3.2 Երեխաների կենսապայմաններն ընտանիքում

Աղքատության այսօրվա չափերի պայմաններում շատ ընտանիքներում երեխաների խնամքն ու դաստիարակությունը վտանգված են, կրթական և առողջապահական ծառայությունների ստացումը՝ դժվարացած: Հարցվողները միանշանակ պնդում են, որ եթե պետության կողմից հայ ընտանիքը բավարար ուշադրության արժանանա, այսինքն՝ ծնողներն ունենան աշխատանք և անհրաժեշտության դեպքում բավարար աջակցություն, ապա այն (ընտանիքը) թույլ չի տա, որ երեխաների մոտ մանկության բնական ընթացքի խաթարման խնդիրներ առաջանան: Մշտական եկամուտ ունեն հարցվածների 53.9%, իսկ 51.4%՝ նպաստների և կենսաթոշակների հույսին է (տես հավելված 2-ում, աղյուսակ 2):

Երկրում գործող «Աղքատության ընտանեկան նպաստ» ծրագրի շրջանակներում պետության կողմից իրականացվող միջոցառումները բավարար չեն, որպեսզի ընտանիքը ի վիճակի լինի երեխաներին լիարժեք կերպով

պաշտպանել սոցիալական ռիսկերից:

Ըստ հետազոտության արդյունքների, ընտանիքների 69%-ը երբեւ չի օգտվել որևէ ծառայության աջակցությունից: Այս ընտանիքների թվում 4,3 %-ը ունի աշխատող երեխա:

Ուշագրավ փաստեր

«Նպաստով մի կերպ 6 անձով ապրում էինք: Ամուսինս սկսեց աշխատել, ընդամենը 40.000 դրամ էր ստանում, պահակություն էր ամուս, նպաստը դադարեցրեցին: Դրանից հետո 14տ և 15տ տղաներս ստիպված սկսեցին ծանր պարկեր քարշ տալ շինարարության վրա... : Ես էլ քաղիան եմ ամուս ուրիշի դաշտերում, աղջիկներս էլ են օգնում, ուրիշ ինչպես ապրենք, էլ ինչպես դպրոց գնան... » Աշխատող երեխաների մայր

Կարելի է հետևություն անել, որ ընտանիքի բարեկեցության չլուծված խնդրի հետևանքներից մեկն էլ երեխաների՝ աշխատանքում վաղ ներգրավումն է, մինչդեռ աղքատության ընտանեկան նպաստի համակարգի համար ընտանիքում անչափահաս աշխատող ունենալու հանգանաքը հատուկ դիտարկման առարկա չէ:

Հետևաբար, ընտանիքի նյութական ապահովածության մակարդակը և երեխաների՝ աշխատանքում վաղ ներգրավվելու հանգանաքը գտնվում են մինյանց հետ ուղղակի առնչության մեջ:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ բացի ֆինանսական խնդիրներից հանրապետության որոշ համայնքներում առկա են նաև կենսաապահովման այլ կարևոր խնդիրներ՝ ենթակառուցվածքների անբավարարություն, խնելու, ոռոգման ջրի, ճանապարհների բացակայություն: Սա էականորեն դժվարացնում է եկամուտ ստանալու հնարավորությունը, երեխաների խնամքը, որոշակիորեն մեծացնում առողջության պահպանման առկա ռիսկը: Դատկապես ակնառու էին բնակարանային պայմանների և սննդի անբավարարության խնդիրները.

Ուշագրավ Փաստեր

Աշխատող երեխայի ընտանիքի բնակարանը չուներ լոգարան, զուգարան, իսկ պատուհանները ապակիներ չունեին: Երեխաների տաստիկն ասաց, որ շատ վատ են սնվում և օրերով միայն թեյ են խմում, (հատկապես ինքն ու փոքր թոռը) մյուս 2 թոռներն ու տղան դրսում էին մի բան ուտում են, օրինակ, հարևան սրճարանում աշխատող թոռը երբեմն-երբեմն նրանց սննդով պահովում է: Կապան

Ընդ որում, բնակարանով անապահովածության խնդիր կար ոչ միայն օբյեկտիվ պատճառներով (երկրաշարժի գոտում՝ Շիրակ, Լոռի, սողանքների

գոտում՝ Տավուշ, Կապան և այլն) այլ նաև սուբյեկտիվ պատճառներով ունեցած բնակարանների վաճառք կարիքից կամ անհեռատեսությունից դրդված, երկար ժամանակ վերանորոգելու հնարավորություն չունենալու պատճառով ունեցած բնակարանային պայմանների վատթարացում և այլն:

3.3 Երեխանների կրթությունը

Երեխանների կրթության կազմակերպման հարցերում առաջ են եկել դժվարություններ: Որոշ համայնքներում հանրակրթությունը (մասնավորապես միջնակարգ) դժվարամատչելի է դարձել երեխանների համար. համայնքում դպրոցի բացակայություն, համապատասխան դասարանի համալրման հետ կապված դժվարություններ (տարիքային խառը դասարան), հարևան համայնքի դպրոց գնալ-գալու հետ կապված դժվարություններ, տրանսպորտային և այլ լրացուցիչ ծախսեր: Դպրոցի հետ կապված դժվարությունների մի մասը կապված է ընտանիքների նյութական ապահովածության հետ: Այն դեպքում, երբ գյուղում դպրոցները և դասարանները անհրաժեշտ թվով երեխաններով համալրելու խնդիր կա (որը գնալով սրվում է) աշակերտները ստիպված են լինում կրթությունը շարունակել հարևան համայնքում գտնվող դպրոցներում (ինչը կապված է ֆինանսական և տրանսպորտային խնդիրների հետ), կամ էլ առհասարակ հրաժարվում են ուսումը շարունակելու մտքից: Որոշ գյուղերում հանդիպել են այնպիսի իրավիճակներ, երբ միջնակարգ դպրոցները վերափոխվում են ութամյա տիպի: Կան համայնքներ, որտեղ երեխանների փոքր քանակի պատճառով չեն կազմավորվում նույնիսկ առաջին դասարաններ, իսկ ցածր դասարանները միացվում են¹⁰: Կա նաև կադրերի խնդիր. իիմնականում երիտասարդ ընտանիքները հեռանում են գյուղից, և դպրոցում դասավանդելու համար գյուղը չունի համապատասխան մասնագետներ:

Ֆոկուս խնբերի որոշ մասնակիցների հավաստմանք, կրթության շարունակման հնարավորությունները խիստ սահմանափակ են գյուղաբնակ և որոշ քաղաքաբնակ երեխանների համար: Կրթական հաստատությունների կենտրոնացվածությունը մայրաքաղաքում և որոշ քաղաքներում էականորեն դժվարացնում է մյուս բնակավայրերի երեխանների գործը: Որոշ մարզերում, օրինակ Վայոց Զորի ԲՈՒՀ-ական կրթություն ստանալու

¹⁰ Օրինակ, Չինչինում հետազոտվող ընտանիքում երեխան պետք է գնար առաջին դասարան, սակայն ինքը միակն էր գյուղում և դասարան չէր բացվում:

հնարավորությունները խիստ սահմանափակ են, սահմանափակ են նաև նման կրթությամբ աշխատանք գտնելու հնարավորությունները:

Դարցման ժամանակ ընտանիքներում հայտնաբերված և աշխատող, և չաշխատող երեխաների մոտավորապես 78 %-ը դպրոցական էր:


Աղյուսակ 3. Աշխատող և չաշխատող երեխաների հաճախած կրթական հաստատությունները

	Ներկայումս ի՞նչ կրթական հաստատություն է հաճախում	աշխատող %	չաշխատող %	Ընդհանուր %
1	Քոլեջ/ուսումնարան	9,8	4,0	4,1
2	Դանրակոթական դպրոց	85,4	92,3	92,1
3	Դասուկ դպրոց	2,4	1,3	1,3
4	ԲՈՒՇ	2,4	2,3	2,3
	Պատասխան չկա	0	0,2	0,2

Այս աղյուսակի տվյալները վկայում են, որ հարցման պահին և՝ աշխատող, և՝ չաշխատող երեխաների ճնշող մեծամասնությունը հանրակրթական դպրոց է հաճախում: Աշխատող երեխաների 9.8 %-ը (ի տարբերություն չաշխատողների 4 %-ի) հաճախում էր միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն: Ինչ վերաբերում է դպրոցական երեխաների ուսման առաջադիմությանը, ապա այս առումով վիճակն այնքան էլ բարվոք չէ: Նախ այսօր այն ընտանիքներում, որտեղ երեխայի կենսական այլանների առումով կա բուհական կրթության ստացման մտադրություն, ընտանիքը երեխայի փոքր տարիքից սկսում է աշխատել այդ ուղղությամբ՝ բեռք հիմնականում վերցնելով դպրոցի ուսերից (ինտենսիվ հետևելով դասերի պատրաստմանը, վարձելով դասուսույցներ և այլն): Ընտանիքը հույսը չի դնում դպրոցի վրա և դպրոցն էլ, կարծես, իրեն ազատել է նման պատասխանատվությունից: Ավելին, որոշ դեպքերում դպրոցների անձնակազմները աչք են փակում երեխաների բացակայությունների վրա, երբ դրանք դասուսույցների մոտ պարապելու հետևանք են: Յոթ տարեկանից բարձր տարիքի երեխաների միայն 8.4 % է նշում, որ մասնագիտական կրթություն ունի կամ էլ ստանում է: Նշված տարիքի երեխաների 21.1 %-ը ստանում է բարձրագույն կրթություն, 11.2 %-ը՝ միջնակարգ-մասնագիտական, 65.2 %-ը միջնակարգ և ութամյա: Գծանկար 8-ում ներկայացված է

առաջադիմության պատկերը աշխատող և չաշխատող երեխաների համար:

Գծանկար 8. Կիսամյակում առաջադիմությունը աշխատող և չաշխատող երեխաների համար



Աշխատող երեխայի ուսման որակի ստացված պատկերը բացատրվում է կրթության արժեգրկման պայմաններում նրանց խրոնիկական հոգնածության, ետ մնալու և այլ խնդիրներով: Ըստ այդմ, աշխատող և չաշխատող երեխաների առաջիկա պլանների համեմատությունը վկայում է որոշ տարբերությունների մասին (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Աշխատող և չաշխատող երեխաների պլանները առաջիկա 3 տարիների համար

Երեխաների պլաններն առաջիկա 3 տարիների համար	աշխատող %	չաշխատող %	ընդհանուր %
Աշխատել	30,0	2,5	3,5
Շարունակել ուսումը	44,3	90,9	89,2
Մեկնել բանակ	18,6	2,9	3,5
Մեկնել արտասահման	4,3	0,4	0,5
Ամուսնանալ	0	0,7	0,7
Հստակ պլաններ չկան	0	1,1	1,1
Որևէ արհեստ սովորել	0	0,1	0,1
Այլ	2,9	0,7	8
Դժվարանում է պատասխանել	0	0,1	0,1
Ընդհանուր	100,0	100,0	100,0

Չաշխատող երեխաների ճնշող մեծամասնությունն ունի ուսման շարունակման պլան, այն դեպքում, եթե աշխատող երեխաների՝ միայն 44 %-ը: Չաշխատողների ընդհանուր 2.5 %-ն ունի առաջիկա երեք տարում աշխատանքի տեղավորվելու պլան: Աշխատող երեխաները առաջիկայում նույնպես հակված չեն իրենց այդ գործունեությունը փոխել կրթական գործունեությամբ: Համենայն դեպս, նրանց 30 %-ը մտադիր է աշխատել, իսկ մի մասն էլ սպասում է բանակ մեկնելուն: Երկու խմբի մոտ էլ կան արտասահման մեկնելու հետ կապված պլաններ:

Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ շատ են դեպքերը, երբ ընտանիքի սուրբ Ֆինանսական վիճակի պատճառով երեխաները ստիպված են լինում հաճախել գիշերօթիկ կամ հատուկ հանրակրթական դպրոցներ: Որոշ գիշերօթիկ դպրոցների՝ խնամքի կենտրոնների վերջին շրջանում վերափոխման հետևանքով կան ծնողներ, որ նախընտրում են ընդհատել երեխաների կրթությանը: Այդ երեխաների մեծ մասը ստիպված է լինում աշխատել ընտանիքը պահելու համար՝ կրթությունը թողնելով անավարտ: Նման շրջադարձը գիշերօթիկ դպրոցի համեմատաբար թերև ուսման ծրագրից հանրակրթականին անցնելու դժվարության, որոշ նյութական երաշխիքների կրճատման, տրանսպորտային ծախսերի ավելացման և, վերջապես, կրթության չկարևորման հետ:


...Երեխաներս չունեն մտավոր խնդիրներ, պարզապես գումարը չունենալու պատճառով նրանք հաճախում էին գիշերօթիկ դպրոց, որովհետև այնտեղ սնվում էին, բացի դրանից, ստանում են անվճար գրենական պարագաներ և դասագրքեր ու տեղում էլ սովորում էին: Իսկ հիմա իմաստը չկա, որ մնան այնտեղ, ավելի լավ է զան ու ինձ օգնեն... Վաճառող, աշխատող երեխաների ծմող

Երեխաների կրթությունն ու դաստիարակությունը էապես տուժում են բացակայությունների պատճառով: Հետազոտության տվյալները հաստատում են, որ դպրոց հաճախող երեխաների բացակայությունները սովորական երևույթ են. մոտ 20 %-ի մոտ բացակայությունները տևել են մեկ շաբաթ և ավելի (Տես հավելված 2, աղյուսակ 11): Սակայն պետք է հիշել, որ երբեմն բացակայությունները (ոչ առողջական պատճառով) տեղի են ունենում ծնողների թույլտվությամբ և հանաձայնությամբ (համարելով, որ դպրոց չհաճախելը մեծ կորուստ չէ): Այս երևույթը պրակտիկապես անվերահսկելի է, իսկ միջամտությունները՝ անարդյունավետ քանի որ դպրոցը հեղինակազրկել է ծնողների աչքում, իսկ կենսամիջոցների հայթայթումը՝ դժվարացել: Ահա ինչու, երբ անհրաժեշտություն է առաջանում ընտրություն կատարել երեխային դպրոց ուղարկելու, թեև տնտեսությունում որևէ հանձնարարություն տալու միջն, նրանք նախընտրում են վերջինը:

Քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով երեխայի դաստիարակության կամ ուսման պարտականությունները չկատարող, մասնավորապես երեխայի՝ դասերից բացակայությունները չվերահսկող կամ թերի կատարող ծնողը ենթարկվում է դատական պատասխանատվության: Այս տարի վարչական տուգանքներ ենք կիրառել 6 դեպքում՝ 1000-ական դրամ), սակայն այդ միջամտությունները արդյունք չեն տվել: Մասնագետների հետ ֆոկուս խումբ, երևան

Հետաքրքրական է, որ դասերից մեծարիվ բացակայությունները վերաբերում են ինչպես աշխատող, այնպես էլ չաշխատող երեխաներին: Այսպիսով, կրթության լնդիանուր արժեզրկման միտում է նկատվում (տես Գծանկար 9):

Գծանկար 9. Կիսամյակում բացակայությունների քանակը աշխատող և չաշխատող երեխաների համար



Աշխատող երեխան դպրոցում բացակա չի ստանում, անգամ այն դեպքում, երբ նա դպրոց չի հաճախում մեկ ամիս և ավելի¹¹: Ինչպես նշեցին երեխաների հետ աշխատող մասնագետները, դասահաճախումները աշնան սկզբին պրոբլեմատիկ են: Հատկապես գյուղական համայնքներում այս երեխությունը շատ ակնառու է, դա կապված է բերքահավաքի հետ, որին երեխաները լայնորեն մասնակցում են:

Կան երեխաներ, որոնք օգնում են սեփական ընտանիքին, սակայն մեծ թիվ են կազմում նաև այն երեխաները, որոնք բերքահավաքի ժամանակ աշխատում են ուրիշների մոտ՝ դրա դիմաց ստանալով որևէ փոխհատուցում (հիմնականում բնամթերքով): Խնդիրը կայանում է նրանում, որ որոշ երեխաներ բացակայում են դասերից ոչ միայն բերքահավաքի ժամանակ, այլ առհասարակ, ուսումը չեն շարունակում՝ ընտանիքներին օգնելու նպատակով:

«...ոչ չեմ ուզում սովորել, այլ չեմ հասցնում, քանի որ աշխատում եմ և աշխատանքս ծանր է»: 5-րդ դասարանից կրթությունը ընդհատած երեխա, Կոտայք

Այսուսակ 5-ը փաստում է, որ կան կրթությունից դուրս մնացող երեխաներ՝ պատճառները բազմազան են, մասնավորապես, դպրոց չհաճախող երեխաների 6.1 %-ի համար դպրոց չհաճախելու պատճառը սոցիալական է:

Այսուսակ 5. Երեխաների դպրոց չհաճախելու հիմնական պատճառները

Դպրոց չհաճախելու հիմնական պատճառները	թիվը	%
Դպրոցը ավարտել է	190	82,3
Ընտանիքը ի վիճակի չէ հոգալու դպրոցի ծախսերը	14	6,1
Ի վիճակի չէ կրթական ծրագիրը հաղթահարել	7	3,0
Հետաքրքիած չէ ուսումով	6	2,6
Տարիքը փոքր է	6	2,6
Հաշմանդամությունը	5	2,2
Ընտանիքը դպրոցը չի արժեորվում	3	1,3
Աշխատում է վճարի դիմաց/ ընտանեկան բիզնեսում/ Ֆերմայում	3	1,3
Օգնում է տնտեսության աշխատանքներում	3	1,3
Հիվանդությունը	1	4
Այլ	3	1,3
Պատասխան չկա	5	2,2
Ընդամենը	231	100

Աշխատող երեխաների մասնակցությամբ իրականացված ֆոկուս խնճերը վկայում են, որ աշխատող երեխաների մեծ մասը դպրոցը թողել են

¹¹... Իսկ դպրոցի տնօրենը կամ ուսուցիչը հաճախ դրա մասին չեն իրագեկում համապատասխան մարմիններին-(ֆոկուս խումբ մասնագետների հետ)

Անշահականության աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007
աշխատելու համար, իսկ մի մասին էլ հենց ծնողներն են «դպրոցից հանել»,
որ աշխատեն և օգնեն ընտանիքին: Նրանք նշեցին, որ հետագայում
կրթություն ստանալու մեջ ցանկություն ունեն, սակայն ոմանց համար դա
գուտ երազանք է, քանի որ նրանք այդ հնարավորությունը չունեն:
Այսպիսով, կարելի է պնդել, որ աշխատանքի պատճառով ուսումն ընդհատող
երեխաների կյանքում կրթության պակասն հետագայում այդպես էլ չի
լրացվում:

Ուսումնասիրության ընթացքում հանդիպեցին այնպիսի դեպքեր, երբ
երեխաները չեն շարունակում ուսումը ուսուցիչների, կամ այլ մասնագետների
վերաբերմունքի պատճառով.

Ուշագրավ փաստեր

Ես հաճախել եմ համրակրթական դպրոց, սակայն մինչև 4-րդ դասարան:
Դպրոցում սովորում էի բավարար գնահատականներով, միայն շատ էի
դժվարանում «Անգլերեն» առարկայից. ուսուցուիչն չէր սիրում ինձ և առիթը բաց
չէր թողնում վիրավորելու ինձ: Տարեվերջին չփոխադրվեցի հաջորդ դասարան:
Մյուս տարի նորից նույն պատճառով չփոխադրվեցի: Ու էլ չհաճախեցի դպրոց:
Մայրս գործս տեղափոխեց ուրիշ դպրոց, բայց ես չգնացի. շատ էի հիասքափվել:
Աշխատող երեխայի հետ հարցազրույց

Որոշ երեխաներ նշում էին, որ երբեմն աշխատանքի բերումով չեն
կարողանում ներկա լինել դասերին, սակայն ուսուցիչները մեղմ են
վերաբերում, քանի որ գիտեն, որ նրանք իրենց աշխատանքով «ընտանիք են
պահում»: Միևնույն ժամանակ առկա են որոշակի ստվերային երևույթներ.

Որոշ տնօրեններ հանգիստ են վերաբերում այնպիսի դեպքերին, երբ
երեխան չի հաճախում դպրոց՝ աշխատելու պատճառով, իսկ հետագայում
«համապատասխան» վերաբերմունքի դիմաց տրամադրում են ավարտական
վկայականներ: Ֆոկուս խումբ մասնագետների հետ, Արմավիր:

Ուսումնասիրության ընթացքում բացահայտվեցին կրթության հետ կապված նաև
որոշ տեղային առանձնահատկություններ. (տես հավելված5, մեջբերումներ)

3.4 Երեխաների առողջությունը

Ընդհանուր առմամբ այս հետազոտությամբ երեխաների մոտ տարբեր
հիվանդությունների առաջացման առումով որևէ արտառոց վիճակ չի
արձանագրվել. ծնողների հավաստմամբ 76.8 %-ի մոտ վերջին մեկ տարվա
ընթացքում որևէ խնդիր չի նկատվել, իսկ մնացածների մոտ անցած տարվա
ընթացքում տարբեր խնդիրներ են արձանագրվել, ինչը սովորական է այդ

Անշահականացների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
տարիքի համար: Ուսումնասիրված տնտեսություններում 23,2%ը երեխաների
մոտ մեկ և ավելի անգամ նկատվել են առողջական խնդիրներ, իսկ ահա
վնասվածքները ավելի հաճախակի են հանդիպում:

Մի կողմից աղքատությունը և դրանով պայմանավորված թերսնումը և
սննդի որակի վատացումը, իսկ մյուս կողմից անվճարունակության պատճառով
բժշկական սպասարկման դժվարամատչելիությունը վտանգում են երեխաների
առողջությունը:

Որոշ բնակավայրերում, հատկապես գյուղական շրջաններում, բժշկական
ծառայությունները բացակայում են կամ եղածները ապահովված չեն
անհրաժեշտ սարքավորումներով ու միջոցներով. (Լերմոնտովո, Ռյա Թազա և
Երասխ), չկան նաև համապատասխան մասնագետներ:

Աշխատող երեխաները առողջության տեսանկյունից կազմում են մեծ
ռիսկի խումբ, քանի որ աշխատում են կյանքի համար վտանգավոր
միջավայրերում ու պայմաններում, շփվում կենդանիների հետ, հետևաբար
ավելի ընկալունակ են տարաբնույթ համաճարակների հանդեպ:

Չատ դեպքերում երեխաները ներառվում են ծանր ֆիզիկական
աշխատանքներում՝ (բերնակրություն, շինարարություն) ու թեև առողջության
համար վնասակար հետևանքները միանգամից չեն դրսելում, այնումենայնիվ
ցավեր պարբերաբար զգացվում են, այսպիսով, անդրադառնալով նրանց
առողջության ցուցանիշների վրա:

**Ժամանակի ընթացքում աշխատանքի հետևանքով առողջական որոշ
պրոբլեմների առաջ եմ կանգնել՝ մեջքացավ, գոտկատեղի ցավ, բայց դրանց
ուշադրություն չեմ դարձրել: Պատահել է նաև այնպես, որ աշխատանքի
(բերնակրության, հողագործության) եմ գնում նաև ոչ առողջ վիճակով: Այդ
առումով ես շատ զուսպ եմ, չեմ ուզում արտահայտվել, որպեսզի մայրս
չիմանա, ավելորդ անգամ չմեղսրտի, դրանից բացի անհրաժեշտ է աշխատել,
թեկուզ ցավելով ամեն օր, որպեսզի ընտանիքին օրվա հացը չպակասի:
Ազատան, աշխատող երեխան**

Աղյուսակ 7. Աշխատող երեխաների նշված վնասվածքները և հիվանդությունները

Ախտանիշեր	Քանակը	%
Սուր գլխացավեր	3	10,3
Զեռքի/ոտքի վնասվածք	9	31,0
Ուշաթափություն	1	3,4
Մեջքի գոտկատեղի և նման ցավեր	5	17,2
Տեսողության/լսողության հետ կապված խնդիրներ	1	3,4

Արյունահոսություն	1	3,4
Աղեստամոքսային տրակտի հետ կապված խանգարումներ	4	13,8
Այլ պատասխան	5	17,2
Ընդամենը	29	100,0%

Ինչպես երևում է աղյուսակ 7-ից ավելի հաճախ նշվում են վերջույթների վնասվածքների դեպքերը: Ո՞չ ծնողները և ո՞չ էլ երեխաները չեն կարող սահմանել աշխատանքի և որոշակի հիվանդությունների միջև կապը. լավագույն դեպքում նրանք կարող են արձանագրել վնասվածքները, որոնք տեղի են ունեցել աշխատանքի ընթացքում: Աշխատող երեխաների համար վնասվածքի դեպքերի 60 %ը ծնողները վերագրում են աշխատանքին:

Բոլոր դեպքերում, աշխատող երեխաների համար ավելի շատ և ավելի հաճախ են նշվում վնասվածքներն ու հիվանդությունները, քան չաշխատողների:

Դիտարկելով վնասվածքների կամ այլ ախտանիշների հաճախականությունը՝ ակնհայտ է դառնում, որ աշխատողների դեպքում չաշխատողների համեմատությամբ ավելի շատ են վնասվածքների և այլ ախտանիշների կրկնման հավանականությունը (հավելված3, գծանկար 2):

Ըստ ծնողների, աշխատող երեխաների խմբում ավելի մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր վնասվածքի պատճառով ընդհատել կամ փոխել են իրենց հիմնական գործունեությունը:

Ինչ վերաբերում է երեխաների մոտ առողջական խնդիրների ծագման պատճառներին, ապա այստեղ պատկերը բավականին մտահոգիչ է: Նախ, 4.5 %-ի կողմից որպես պատճառ նշվում է աշխատանքը (հավելված 2, աղյուսակ 12):

Կարելի է ենթադրություն անել, որ այս 4.5 %ը կարող է և ավելի մեծ լինել, որովհետև հարցին պատասխանողները ծնողներն են, ովքեր որոշ դեպքում կարող են չիմանալ վնասվածքի բուն պատճառը կամ թաքցնել այն (մեղքի գգացումը խանգարում է):

Ինչպես պարզվեց աշխատող երեխաների հետ իրականացված ֆոկուս խմբի արդյունքներից, եթե աշխատանքի ժամանակ լուրջ խնդիրներ են ունենում, նրանք խուսափում են ցավերի կամ այլ անհանգստությունների մասին ահազանգել, քանի որ վախ ունեն կորցնելու աշխատանքը, այդպիսով և՝ գոյատևման միջոցը:

Տղան աշխատում է ցեմենտի պարկավորման գործարանում՝ որպես բանվոր, ծանր պարկեր է տեղափոխում և աշխատում է անընդհատ փոշոտ միջավայրում: Ցեմենտի փոշին այրել էր աչքերի եղջրաթաղանթը¹² և նա երկար ժամանակ բացակայել է աշխատանքից: Կոտայք, 17 տ աշխատող տղա

Երեխաները նշում են, որ որոշ դեպքերում վտանգավոր աշխատանքներ են կատարում և պատահարներն ու լուրջ վնասվածքները անխուսափելի են դառնում (օրինակ՝ ամրալար հավաքելու ժամանակ մի երեխա ծանր վիրավորվել էր):¹³

Ուշագրավ փաստեր


Հ տարի առաջ տղաս աշխատանքի վայրում, բարձրությունից ընկել էր, գլուխը խփել է գետնին և վնասել: Նրան ընկերները սուն են բերել, բայց բժշկի չեն տարել: Այն ժամանակ նա աշխատում էր Վանաձորի 4-րդ դպրոցի շինարարությունում, որպես բանվոր: Դրանից հետո շարունակել է աշխատելը, որովհետև ընտանիքում ուրիշ աշխատող չունենք, բայց հաճախակի է վատանում: Վանաձոր, աշխատող երեխայի ծնող

Աշխատանքի ընթացքում առաջ եկած վնասվածքներին (կամ հիվանդություններին) գործատուների արձագանքը ներկայացված է (գծանկար 11-ում)

Գծանկար 11. Գործատուի վերաբերմունքը վնասվածք ստանալու փաստին (ըստ երեխաների)

¹² Չնայած դրան, ինքը գոհ է աշխատանքից, ստանում է 60.000 դրամ, վճարում են ժամանակին:

¹³ Ի դեպ երեխաների հետ աշխատող մասնագետների ֆոկուս խմբի ժամանակ ևս նշվեց այս դեպքը, և առհասարակ մեծահասակների հավաստմամբ նման դեպքեր շատ են լինում:



Ակնհայտորեն, շատ քիչ դեպքերում են գործատուներն աջակցում երեխաներին աշխատանքի ընթացքում նրանց մոտ առողջական խնդիրներ առաջանալիս: Դավանաբար դրա հիմնական պատճառը պայմանագրային հարաբերությունների բացակայությունն է, որը գործատուին թույլ է տալիս հեշտությամբ «գլուխն ազատել» ծագող խնդիրներից:

Որոշ մասնագետների կարծիքով, աշխատող երեխաների մոտ հայտնվում են մեծերի կողմից չվերահսկվող դրամական միջոցներ, որոնք նրանք ծախսում են առողջությունը քայլայող նյութերի վրա՝ ծխախոտ, ալկոհոլ: Աշխատող երեխաները շատ ավելի վաղ են փորձում դրանք օգտագործել՝ «հաստատելու համար իրենց ինքնուրույնությունը»:

3.5 Երեխաների հանգիստը

Երեխաների հանգիստը հիմնականում անկազմակերպ է ընթանում՝ ի տարբերություն խորհրդային տարիների: Եթե խորհրդային տարիներին, ամռան ամիսներին երեխաները զանգվածաբար ունեին ճանբարներում հանգստյան տներում հանգիստը կազմակերպելու հնարավորություն, ապա այսօր միայն շատ քերող կարող են դա իրենց թույլ տալ: Երեխաները ակտիվ հանգիստ որպես այդպիսին չունեն, հատկապես գյուղական վայրերում բացակայում են ժամանցի հնարավորություններ, չկան երաժշտական դպրոցներ, մարզադպրոցներ, գեղարվեստի դպրոցներ և այլն:

Ուշագրավ փաստեր

Վայրում երեխան բացի հողագործությունից այլ գրաղմունք չունի, նույնիսկ գրունելու տեղ չկա. գրունելու վայրը դարձել է փողոցի մայթը: Նույն մարզի **Ներ-Ներ գյուղում** որոշ երեխաներ հաճախում էին կարատեհ խմբակ, սակայն ստիպված են լինում դրա համար շարաթական 2 անգամ հասնել Վայր, վճարել վարձավճար և տրանսպորտի ծախս: Արդյունքում, քանի որ երեխաների մեծ մասը չեն կարող վճարել մնում են առանց որևէ գրաղմունքի:

Որոշ բնակավայրերում ջանքեր են գործադրվում երեխաների ակտիվ հանգիստը

Անշահականացման աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
կազմակերպելու ուղղությամբ, սակայն դրանք դեռևս անբավարար են:

Այսուսակ 10-ում ներկայացված է երեխաների գբաղմունքը ազատ ժամերին: Միայն փոքր թվով երեխաների է (վճարունակ, հետաքրքրված ծնողներ ունեցող, քաղաքային բնակավայրերում ապրող և այլն) հաջողվում իրացնել իրենց մանկության ազատ ժամանակի իրավունքը:

Այսուսակ 10. Աշխատող և չաշխատող երեխաների ազատ ժամանակի գբաղմունքը

Ազատ ժամանակ ինչո՞վ է սիրում գրաղվել	Աշխատող %	Չաշխատող %	Ընդամենը %
Յեռուուստացույց դիտել	23.9	14.2	14.6
Խաղալ	22.5	42.7	42.0
Երաժշտություն լսել	12.7	8.3	8.5
Չըսմել	12.7	4.3	4.6
Սպորտով գրաղվել	8.5	7.3	7.3
Այցելություն ազգականներին, ոնկերմերին	5.6	2.3	2.4
Չըաղվել արվեստով	7.0	9.1	9.1
Չկնորսություն, որսորդություն	2.8	0.5	0.6
Կենդանիների, թռչունների խնամք	1.4	0.4	0.5
Յողագործություն, բույսերի աճեցում, այգեգործություն	0	0.1	0.1
Պասիվ հանգիստ	5.6	3.3	3.3
Չեռի աշխատանք	2.8	1.6	1.6
Ազատ ժամանակ չունի	0	0.4	0.4
Հաճախել մշակութային օջախներ	0	0.3	0.3
Ընթերցանություն	5.6	16.6	16.2
Այլ	1.4	2.3	2.3
Պատասխան չկա	4.2	1.8	2.0
Ոժվարանում է պատասխանել	0	0.1	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0

Ինչպես նկատում ենք, աշխատող երեխաների մոտ խաղը՝ որպես գբաղմունք, կիսով չափ ավելի քիչ է հանդիպում, քան չաշխատողների մոտ, մինչդեռ հայտնի է, որ խաղը կարևոր դեր է կատարում երեխայի անձի ձևավորման գործում:

Ինչպես պարզվեց որակական հետազոտական տվյալներից, երեխայի աշխատելու հանգամանքը լրջորեն խոչընդոտում է նրա հանգստին և, հատկապես՝ սոցիալական շփումներին:

Ներկայումս ես շատ գրաղված եմ, օրուգիշեր աշխատում եմ և նույնիսկ ընկերներիս հանդիպելու ժամանակ չեմ ունենում: Շիրակի մարզ, գյուղ Ազատան, աշխատող երեխա

Այսպիսով, Երեխաների ազատ ժամանակի արդյունավետ տնօրինումը խաթարված է հետևյալ պատճառներով. համապատասխան ծառայությունների բացակայություն, առկա ծառայությունների դժվարամատչելիություն և Երեխաների աշխատելու փաստը:

Գլուխ 4. Երեխաների աշխատանքային գործունեությունը

4.1 Երեխաների աշխատանքը տնային տնտեսությունում

Հետազոտությունը ցույց տվեց, որ տնային տնտեսության աշխատանքներում ներառված են գրեթե բոլոր երեխաները:

Աղյուսակ 11. Երեխաների մասնակցությունը տնային աշխատանքներում (ըստ ծնողների)

Անցյալ շաբաթ կատարել է տնային աշխատանքներ	Քանակը	%
այո	1434	73.7
ոչ	511	26.3
ընդամենը	1945	100,0

Կյանքի դժվարացումը հանգեցրել է տնտեսության մեջ երեխաների՝ նախկինի համեմատ ավելի երկարատև և ավելի շատ զբաղմունքներում նրանց ներգրավմանը: Ավելին, աշխատանքը երբեմն իրականացվում է երեխաների հաճախ և կրթության հաշվին:

Աղյուսակ 12. Երեխաների մասնակցությունը տնային տնտեսության աշխատանքներին

Տնային աշխատանքների տիպերը	Քանակը	%
Ուտելիքի պատրաստում	159	11.1
Գնումների կատարում	818	57,3
Տան մաքրում	695	48,7
Լվացք, արդուկ	246	17,2
Վերանորոգումներ	101	7,1
Զուր կամ փայտ կրել	215	15,1
Երեխաների խնամք	35	2,5
Յիշանդի, մեծի խնամք	20	1,4
Կենդանիների խնամք	204	14,3
Յողի, այգու մշակում	392	27,5
Տան շինարարություն	23	1,6
Այլ նմանատիպ աշխատանքներ	54	3,8
պատասխան չկա	19	1,3
Ընդամենը	1428	100.0%

Ինչպես տեսնում ենք, տնային տնտեսության մեջ երեխաների աշխատումի ներգրավման ավանդական ձևերի կողքին կան նաև ձևեր, որոնք անուղղակիորեն կարող ենք հանարել վճարովի աշխատանք. օրինակ, գյուղատնտեսական աշխատանքները ինչին բավականին հաճախ են

Ընտանիքի չափահաս անդամների գբաղվածությունը գործունեության այն ձևերում, որոնք թույլ են տալիս դրամ վաստակել, կտրուկ մեծացել է, այդ պատճառով էլ տնտեսության ընդհանուր սպասարկման հոգար հաճախ մնում է Երեխաների ուսերին: Ընդ որում, շարունակում է գործել աշխատանքի ավանդական բաժանման սկզբունքը, ինչն էլ գենդերային ուղղվածություն է տալիս Երեխաների ներտնտեսական աշխատանքներին:

Չնայած պաշտոնական վիճակագրության թերացումներին, այնուամենայնիվ բացահայտ է, որ տնային աշխատանքը տարածված է հատկապես Երեխաների և կանաց շրջանում: Այդ երևույթի պատճառը տնտեսական միգրացիայի բացասական հետևանքներն են, քանի որ տղամարդ աշխատումը մեկնել է արտերկիր աշխատանքի, տնային տնտեսության աշխատանքի որոշ տեսակներ փոխանցվել են տան մյուս անդամներին, հատկապես՝ անշափահասներին:

Երեխաների մոտավորապես 73,7% ամեն օր մասնակցում է տնային տնտեսության աշխատանքներին: Մնացածն էլ ոչ պակաս հաճախականությամբ են դա անում: Եթե հիշենք, որ այսօր շատ ընտանիքներ իրականացնում են արտադրական գործառույթ, ապա պետք է ենթադրել, որ շատ Երեխաներ ուղղակի կամ անուղղակի մասնակցում են դրան: Նրանք օրվա ընթացքում փոխարինում են չափահասներին վաճառասեղանի հետևում, նրանց հետ մթերքը տանում են շուկա, մասնակցում են աշխատանքների, որոնց վերջնական նպատակը դրամի ստացումն է:

Երեխաները տնտեսության աշխատանքներին հիմնականում մասնակցում են գյուղերում՝ կատարելով տարաբնույթ գյուղատնտեսական աշխատանքներ (անասնապահություն և հողագործություն), իսկ քաղաքում կան մասնակի դեպքեր, երբ Երեխան օգնում է իր արհեստավոր հորը, եղբորը կամ այլ հարազատին՝ առևտություն կազմակերպման հարցերում:

Որոշ վերապահումներով կարելի է համարել, որ տնային տնտեսությունում Երեխաների գբաղվածությունը նույնական կարելի է դասել վարձու աշխատանքների թվին: Քատկապես, երբ Երեխաների գբաղվածությունը դիտարկում ենք օրվա ֆոնի վրա, տեսնում ենք, որ նրանց մոտավորապես

Անչափահասմերի աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
18,6%-ը ամբողջ օրն է զբաղված, 27,3 %-ը՝ առավոտյան, երբ դպրոցի
ժամանակն է (հավելված2, աղյուսակ 6):

Լեռնային գյուղերի մեծ մասում երեխաները ընտանիքին օգնելու համար ծնողների հետ կամ միայնակ գնում են ամառային արոտավայրերը՝ կենդանիներին խնամելու համար կամ հանձն են առնում տնային կենդանիների արոտավայր տանել-բերելու հոգսը՝ տարվա բոլոր ակտիվ սեզոնների ժամանակ:

Լինում են դեպքեր, երբ երեխաները ժամանակ առ ժամանակ ստիպված են լինում իրենց վրա վերցնել տնային տնտեսության ողջ հոգսերը, ընտանիքի մյուս անդամների անկարողության պատճառով, երբեմն նաև դրան զուգահեռ աշխատելով դրսում:

Իմ զբաղվածությունը այնքան շատ է, որ մեր տան գործերը ժամանակին չեմ հասցնում անել: Յիմնականում օգնում եմ փայտ կոտրատելու, խանութ գնալու, առևտուր անելու հարցերում, մնացած ամեն ինչը քոյս է անում, քանի որ նա ամբողջ օրը տանն է լինում, իսկ ես աշխատում եմ, քանի որ հայրս չկա, իսկ մայրս հիվանդանոցում է: 12 տարեկան երեխա - Ազատան

Շատ թվով երեխաներ զբաղված են գյուղատնտեսությունում, մի ոլորտ, որը ոչ ֆորմալ սեկտորի վերլուծության ընթացքում չի հաշվառվում որոշ նկատառումներից ելնելով: 2003 թվականից մեզ մոտ գյուղատնտեսությունում աշխատողները սոցիալական ապահովագրության ենթակա չեն: Նկատի ունենալով, որ Հայաստանում, հիմնականում տնային տնտեսություններում աշխատում են մեծամասամբ երեխաները և կանայք՝ առանց ապահովագրական վճարների, կարելի է հետևություն անել, որ վտանգված է գյուղաբնակների կենսաթոշակային ապահովագրության գործը:

Այսպիսով, ընտանիքի նյութապես անապահով վիճակն է այսօր նրան ստիպում լայնորեն օգտագործել երեխաների աշխատուժը: Այդ երևույթը զանգվածաբար սկսեց դրսևորվել հողի սեփականաշնորհումից հետո, երբ ընտանիքը վերստանձնեց իր արտադրական գործառությը:

Երեխաները դիտվում են որպես կարևոր աշխատուժ ընտանիքի հոգսերը հոգալիս: Նրանք զանգվածաբար ներգրավվում են տնտեսության մեջ իրականացվող արտադրական աշխատանքներին (որը որոշ դեպքերում շատ ծանր է) կամ էլ նրանք տանը փոխարինում են չափահասներին՝ որպեսզի

Անշահականացների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
 Վերջիններս կարողանան աշխատել դրսում: Իսկ երբ աշխատունակության
 առումով ընտանիքը սահմանափակ հնարավորություններ ունի, երեխաներն
 իրենց վրա են վերցնում ընտանիքի համար միջոցներ վաստակելու ողջ հոգսը:

4.2 Երեխաների վարձու աշխատանքը

Երեխաների վարձու աշխատանքը այնքան էլ ակնհայտ երևույթ չէ. թերևս
 չափահասների համար աշխատատեղերի պակասը դժվարացնում է երեխաների
 ավելի լայն ներառումը վարձու աշխատանքի շուկա: Համենայն դեպս,
 մասնագետների հարցումների ժամանակ հարցվողների մեծ մասը վստահ է, որ
 «իրենց մոտ աշխատող երեխաների շատ քիչ դեպքեր կան»¹⁴:

Այնուամենայնիվ երևույթը առկա է և առավել տարածված քաղաքային
 բնակավայրերում, որտեղ փող աշխատելու հնարավորությունները գյուղի
 համեմատ ավելի մեծ են:

Այլուսակ 12. Երեխաների վարձու աշխատանքի ցուցանիշները

Անցյալ շաբաթ աշխատել է վճարի կամ փոխհատուցման դիմաց	Քանակը	%
այս	71	3,6
ոչ	1873	96,2
պատասխան չկա	2	,1

Առաջին հայացքից թվում է, թե աշխատող երեխաները շատ փոքր թիվ են
 կազմում, բայց այդպես չէ: Եթե վերևի այլուսակը հիւշում է, որ բոլոր
 երեխաների 3.6%-ը վարձու աշխատանք է կատարում, մյուս կողմից՝
 ուսումնասիրված տնտեսությունների 6.1 %-ում հայտնաբերվել են աշխատող
 երեխաներ: (*Տես այլուսակ 2, գլուխ 3)*. Երկրորդ, դրանք միայն այն
 երեխաներն են, ովքեր ունեն գործառու կամ աշխատանքի դիմաց փող են
 ստանում ուրիշից: Այդ թվի մեջ հաշվառված չեն այն երեխաները, ովքեր
 մասնակցում են ընտանեկան բիզնեսում կամ ուն աշխատանքի արդյունքները
 առկա են ընտանիքի ձեռք բերած վերջնական արդյունքներում՝ օրինակ,
 մթերքների վաճաքից ստացված գումարները:

Երեխաների աշխատանքը կատարվում է տարբեր միջավայրերում՝ իրենց
 կամ ուրիշի տանը, արտադրանասում, փողոցում և այլն: Այդ միջավայրերը
 կարող են լինել ինչպես ֆորմալացված, այլնպես էլ ոչ ֆորմալացված:

¹⁴ Որոշ համայնքներում հարցվողները նույնիսկ ցուցադրում կին ավելորդ ջանասիրություն՝
 համոզելու, որ իրենց մոտ ննան երևույթ չկա:

Անշահականացների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007

Հետևաբար, աշխատող երեխաների թիվը իրականում շատ ավելի մեծ կարող է լինել: Եթե ֆորմալացվածները ենթադրում են որոշակի ստանդարտացում ու վերահսկողություն, ապա ոչ ֆորմալացվածները ընդհակառակը, բացառում են որևէ վերահսկողություն և երբեմն խիստ կասկածելի են:

Հավելված 2-ի 8-րդ աղյուսակից երևում է, որ երեխաների մի մեծ խումբ զբաղված է գյուղատնտեսական աշխատանքով, ինչից կարելի է ենթադրել, որ դրանք գյուղաբնակ երեխաներ են:

Այնուհետև, ըստ տարածվածության, հաջորդում են առևտուրը և շինարարությունը: Այս տվյալները վկայում են, որ երեխաներն աշխատում են ռիսկային միջավայրերում: Ըստ հարցման արդյունքների, եթե աշխատող երեխաների 1/3-ը նոր է սկսել իր աշխատանքային գործունեությունը, ապա նույնքանն էլ մեկ տարուց ավելի աշխատանքային փորձ ունի: Հետևաբար, աշխատանքը այս երեխաների կյանքում ոչ թե դրվագային զբաղմունք է այլ՝ հիմնական: Աշխատող երեխաների ընդամենը 12.3 % ունի մշտական աշխատանք, մնացածի աշխատանքը սեզոնային է կամ էլ պատահական:

Աղյուսակ 13. Երեխաների աշխատանք գտնելու աղբյուրները

Աշխատանք գտնելու աղբյուրը	Քանակը	%
Ծնողը	20	30.8
Ընկերներ, բարեկամներ, ծանոթներ	27	41.5
Հայտարարություններով	1	1.5
Ինքնուրույն	10	15.4
Գործատուն ինքն է գտել	4	6.2
Պատասխան չկա	1	1.5
Այլ պատասխան	2	3.1
Ընդամենը	65	100.0

Այսուսակի 13-ի տվյալները վկայում է, որ երեխաների ծնողները, հարազատները և ծանոթներն են հիմնականում օգնում, որ նրանք աշխատանք գտնեն. Նրանց շարժառիթները կարող են տարբեր լինել՝ ընտանիքներին օգնությունը, երեխաներին փողոցից կտրելը և այլն: Աշխատող երեխաների մի փոքր մասին հայտնաբերում է ինքը՝ գործատուն: Այսօր քաղաքային բնակավայրերում ձևավորվել են ոչ ֆորմալ աշխատանքային բորսաներ, որտեղ հավաքվում են գործազուրկ տղամարդիկ՝ օրավարձով տարբեր աշխատանքներ ստանալու ակնկալիքով: Որոշ բնակավայրերում նաև երեխաներն են միանում նրանց, հատկապես զանգվածային բերքահավաքի շրջանում:

Ինչ վերաբերում է աշխատանքի դիմաց փոխհատուցմանը, ապա այն հիմնականում ոչ պաշտոնական ճանապարհով է հասնում աշխատողին: Երեխաների ընդամենը 6.2% են աշխատավարձի ցուցակում ստորագրում իրենց անվան դիմաց: (հավելված 2, աղյուսակ 7): Աշխատող երեխաների

5.6 % աշխատում է ըստ պայմանագրի: Երեխաների կեսից ավելին իր աշխատած գումարը «մուծում» է ընտանեկան բյուջե, մոտ 1/4-ը՝ ծախսում է սեփական կարիքները հոգալու համար:

Երեխաների աշխատանքը հիմնականում նորմավորված չէ: Նրանց կեսից ավելին աշխատում է առավոտից մինչ երեկո, մի մեծ մասն էլ՝ ըստ անհրաժեշտության:

Աղյուսակ 14. Երեխաների աշխատանքի տևողությունը

Աշխատանքային տևողությունը	քանակը	%
Առավոտից երեկո	36	55.4
Առավոտից կեսօր	8	12.3
Կեսօրից մինչև ուշ գիշեր	8	12.3
Յերթափոխով	3	4.6
Ըստ անհրաժեշտության	10	15.4
Ընդամենը	65	100

Տարբեր երեխաների համար տարբեր տևողություն ունի և աշխատանքային շաբաթը, քանի որ հիմնականում պատահական աշխատանք են կատարում կամ օրավարձով են աշխատում: Երեխաների մոտավորապես կեսի համար աշխատանքային շաբաթը տևում է 7 օր: Մնացածը ավելի քիչ են զբաղված՝ հավանաբար աշխատանք չստանալու պատճառով:

Աշխատող երեխաների համար շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 40 ժամ է: 40 ժամը այն տևողությունն է, որը սահմանված է օրենսդրությամբ՝ չափահաս աշխատողների համար: Ավելին, հաճախ է պատահում, որ երեխան աշխատում է նաև արտաժամյա, սակայն հիմնականում վճարվում է սովորականի պես: Յարցման արդյունքները վկայում են նաև այնպիսի դեպքերի մասին, երբ երեխան բոլորովին չի վճարվում (14,3%):


Աղյուսակ 17. Արտաժամ, չնախատեսված աշխատանքի դիմաց վճարման ձևը

Արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման ձևը	քանակը	%
Սովորականի նման	13	61.9
Յավելավճարով	2	9.5
Չեն վճարում	3	14.3
Որևէ բանով պարզեցնելում են	1	4.8
Պատասխան չկա	2	9.5
Ընդամենը	21	100

Անշահականների աշխատանքը Դպրության Դարպասությունում, Զեկույց, 2007
 Ուստի կարելի է հետևություններ անել, որ առկա է երեխայի աշխատուժի կիրառում՝ առանց սահմանված նորմերի պահպանման, ինչը այլ խոսքով, չարաշահում է:

Որոշ գուգահերներ անցկացնելով վարձու աշխատանքներում ներառված երեխաների և չաշխատող երեխաների կյանքի առանձնահատկությունների միջև, ստանում ենք ուշագրավ պատկեր: Այսպես, ըստ սեռի աշխատող և չաշխատող երեխաների բաշխումը ունի գծանկար 13-ում ներկայացված տեսքը:

Գծանկար 13. Աշխատող և չաշխատող երեխաների բաշխումը ըստ սեռի



Ինչպես նկատում ենք, աշխատող երեխաների մեծ մասը տղաներ են: Դրանք հիմնականում այն ընտանիքներից են, որոնցում սոցիալական ճնշման հետևանքով երեխաները ժամանակից շուտ իրենց վրա են վերցնում ընտանիքի հոգսը՝ (ծնողի բացակայություն, նրանց անաշխատունակություն, ցածր եկամուտներ և այլն):

Աշխատող երեխաների 1/3-ը պատկանում է 10-14 տարեկանների խմբին: Մնացած մասը՝ 14-17 տարեկանների խմբին (գծանկար 14): Այստեղ հարկավոր է իիշել, որ այդ տարիքում ավարտվում է ութամյա կրթություն ստանալու շրջանը և այն երեխաները, ովքեր անապահով ընտանիքներից են, կամ ուսման ուղղությամբ առանձնակի ընդունակություններ և

Անշահման պահանջման դաշտական վարագետությունում, Զեկույց, 2007


հավակնություններ չունեն, ներառվում են աշխատաշուկա: Սոցիալական պայմանները խաճաղում են համապատասխան մակարդակի մասնագիտական կրթություն ստանալուն և այդ տարիքի երեխաները համալրում են ցածր որակավորում ունեցող աշխատողների խումբը: Նրանց մեծ մասի համար հետագայում այլևս բարենպաստ պայմաններ չեն ստեղծվում բաց բողածը լրացնելու համար. մի քանի տարի անց տղաները մեկնում են զինծառայության, իսկ աղջիկները, (որոնք այդ խմբում նոտավորապես 15 % են կազմում) կամ ամուսնանում են, կամ էլ շարունակում են զբաղեցնել ցածր որակավորում պահանջող աշխատատեղերը:

Միջնակարգ մասնագիտական կրթության դժվարամատչելիությունը և չպահանջված լինելը 14-18 տարեկանների համար լուրջ խնդիրներ են ստեղծում: Խորհրդային տարիներին այս խումբը ներառվում էր միջնակարգ-մասնագիտական կրթության համակարգը, որն ընդգրկում էր համրապետության ողջ տարածքը և մատչելի էր, ու ինչ որ առումով էլ՝ պարտադիր:


Այսօր այդ տարիքային խմբի կյանքում պատուիան է գոյացել պարտադիր կրթության նկատմամբ պահանջը նվազեցնելու և այլընտրանքներ չառաջարկելու հետևանքով:

Ավելին, աշխատելու հետևանքով ութամյա կրթություն չստացողները հետագայում չեն կարողանում միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալ, որովհետև դրա համար պահանջվում է ներկայացնել ութամյա կրթության վկայական, որը նրանք չունեն:

Գծանկար 14. Աշխատող և չաշխատող երեխայի տարիքային խմբերը




Գծանկար 15. Կերակրող հոր առկայությունը աշխատող և չաշխատող երեխաների ընտանիքներում



Ինչպես երևում է գծանկար 15-ից, աշխատող երեխաների խմբում մոտավորապես երկու անգամ ավելի շատ են այն դեպքերը, երբ երեխաների հայրերը կենդանի չեն կամ ապրում են ընտանիքից դուրս: Բնականաբար, այդ ընտանիքներում տղաները փորձում են ժամանակից շուտ ստանձնել նրանց դերերը: Քիմնականում այդ պատճառով է, որ աշխատող երեխաների խմբում տղաների համամասնությունն այդքան ընդգծված է:

Գծանկար 16-ում բերված տվյալները նույնպես վկայում են այն մասին, որ երեխաների ներառումը վարձու աշխատանքի շուկա պայմանավորված է ընտանիքի նյութական անապահով վիճակով. ընտանիքում աշխատողների հայտնվելու և նրանց թիվը՝ մեկից ավելին դաշնալու դեպքում՝ կտրուկ նվազում է աշխատող երեխաների թիվը:

Գծանկար 16. Աշխատող և չաշխատող երեխաներով ընտանիքների թիվը՝ ըստ ընտանիքում կանոնավոր աշխատողների թվի




Նույն օրինաչափությունը նկատվում է նաև ընտանիքներում պատահական աշխատանք ունեցողների թվի հետ աշխատող երեխաների թվի կորելյացիան դիտարկելիս:

Գծանկար 17-ից կարելի է նկատել, որ աշխատող երեխաների մի մեծ խումբ՝ մոտ 30 %-ով ավելի՝ չաշխատողների համեմատ, արդեն հայտնվել է կրթական համակարգից դուրս:

Իսկ նրանք, ովքեր շարունակում են հաճախել որևէ ուսումնական հաստատություն, աչքի չեն ընկնում հաճախումների կանոնավորությամբ:

Գծանկար 17. Կրթական հաստատություն հաճախումների և աշխատելու փաստի միջև կապը



Ինչ վերաբերուն է դպրոց չհաճախելու պատճառներին, ապա աշխատող երեխաների խմբում հիմնական պատճառներից մեկը ընտանիքի անապահով վիճակն է, որը թույլ չի տալիս նրան հոգալ երեխաների դպրոցական ծախսերը, ինչպես նաև ուսման նկատմամբ հետաքրքրության բացակայությունը. (նաև այս խմբում մի մասն ավելի շուտ է ընդհատում իր կրթությունը կամ բավարարվում միայն 8-ամյա կրթությամբ, աշխատել՝ սովորելու փոխարեն):

Աշխատանքը երեխայի մոտ ծնում է նոր հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են նոր միջավայրով, նոր մարդկանցով: Միևնույն ժամանակ աշխատանքը երեխային ապահովում է դրամով, որը միջոց է նոր հետաքրքրությունների բավարարման համար:

Աշխատող երեխաների ծնողներից ոչ մեկը չի նշել, որ երեխայի դասերից բացակայելու պատճառը աշխատանքն է, որովհետև այդ երեխաների համար դա հիմնական զբաղնունք է: Դրան հակառակ՝ չաշխատող երեխաների խմբում նշվել են դասերից բացակայելու դեպքեր, որոնք պայմանավորված են տնտեսության աշխատանքներում օգնելու և ընտանեկան բիզնեսում ներգրավված լինելու հանգամանքներով:

Աշխատող երեխաների մեծ մասը չունի և հարցման պահին չէր ստանում որևէ մասնագիտական կրթություն, ինչը վկայում է, որ նրանք կատարում են հիմնականում ցածր որակավորման աշխատանք. նրանց մեծ մասն այդպես էլ հետագա կյանքի ընթացքում չի կարողանալու լրացնել կրթական այդ բացը: (*հավելված 2, աղյուսակ 9*)

Հաջորդ գծանկարի տվյալները վկայում են, որ աշխատող երեխաները միաժամանակ ծանրաբեռնված են նաև տնային տնտեսության հոգսերով:

Աշխատող երեխաների ընտանեկան պատասխանատվությունն ավելի մեծ է: Նրանք ոչ միայն աշխատում են, այլև ավելի ակտիվ մասնակցում են տնային տնտեսության աշխատանքներին: Նրանց ներառվածությունը չաշխատողների

խմբի համեմատ շատ ավելի մեծ է այն աշխատանքներում, որոնք պահանջում են մեծ պատասխանատվություն, դիմացկունություն, ֆիզիկական ուժ (տես *հավելված 2, աղյուսակ 4*): Հարցման պահին աշխատող երեխաների մեծ մասը ներառված է եղել գյուղատնտեսական վճարովի գործունեության տարբեր ձևերում: Ըստ տարածվածության, այդ խմբում զբաղմունքի հաջորդ տեսակը շինարարությունն է: Սա ակնհայտորեն ծանր գործունեություն է երեխաների համար, որովհետև նրանց կենսաբանական հասունացունը դեռ չի ավարտվել և ֆիզիկական մեծ ծանրաբեռնվածությունները փորձագետների իսկ վկայությամբ տարբեր խանգարումներ կարող են առաջացնել օրգանիզմի զարգացման մեջ: Այդ խմբում ըստ հանդիպման հաճախության, զբաղմունքի մյուս երկու տեսակներն են կենդանիների խնամքը և առևտուրը: (*Աղյուսակ 18*)

Աղյուսակ 18. Վճարովի աշխատանքի տիպերը¹⁵

Աշխատանք՝ վճարի դիմաց	Անցյալ շաբաթ աշխատել է վճարի կամ փոխհատուցման դիմաց		
	այդ %	ոչ %	ընդհանուր %
Հողամաս մշակել, ձուկ բռնել, մետաղի ջարդոն, շշեր, բերքահավաք	25.8	34.8	28.1
Պատրաստել սնունդ		4.3	1.1
Գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար	15,2	8,7	13.5
Լվանալ, արդուկել, մաքրել, վերանորոգել սարքավորումներ	1,5		1.1
Լվանալ կամ մաքրել կոշիկներ	3,0		2.2
Տեղափոխել ապրանքներ փոխանակման կամ վաճառքի համար	1,5		1.1
Շինարարություն	18,2	8,7	15.7
Կենդանիների խնամք	10,6	13,0	11.2
Գյուղտնտեսության ոլորտի ցածր որակավորում ունեցող մասնագետ	6,1	8,7	6.7
Արևտրի ոլորտի ցածր որսկավորում ունեցող մասնագետ	10,6	4,3	9,0
Տրանսպորտի կապ ոլորտի ցածր որակավորում ունեցող մասնագետ	3,0	4,3	3.4
Մշակույթի և սպորտի հանգստի ոլորտի մասնագետ	3,0	4,3	3.4
Շինարարության ոլորտի բանվոր		8,7	2.2
Կենցաղային սպասարկման ոլորտի մասնագետ	4,5		3.4
Ավտոտեխնսապասարկման ոլորտի մասնագետ	1,5	4,3	2.2
Ավտոտեխնսապասարկման ոլորտի բանվոր		4,3	1.1
Այլ		1,5	1,1
Ընդամենը	100,0	100,0	100,0

¹⁵ Աղյուսակ 18-ի սյունակներում նշված թվերի գումարը հարյուրից ավելին է, որովհետև հարցվողները միաժամանակ նշել են մի քանի զբաղմունքներ:

Ըստ մասնագետների, անխուսափելի է «աշխատող երեխաների» երևույթը, միևնույն ժամանակ.

Կան աշխատող անչափահասմեր ու կլինեն, սակայն միանշանակ չենք կարող ասել, որ երեխան շահագործվում է: Գյուղական համայնքներում երեխան միշտ էլ աշխատել է: Կան երեխաներ, որ աշխատում են արտադրության ու շինարարության ոլորտներում, սակայն դա կատարվում է երեխայի կամքով: Կոտայք, ֆոկուս խումբ

Երեխաների աշխատանքը իրականացնելու վայրերի բաշխումը ներկայացված է աղյուսակ 19-ում.

Աղյուսակ 19. Աշխատող երեխաների աշխատանքի վայրը

Աշխատանքի վայրը	%
Իրենց տանը	3,0
Ուրիշի տանը	1,5
Յիկնարկում/գրասենյակում	15,2
Դաշտում, այգի, հողանաս, անտառ	37,9
Գործարանում/արտադրանասում	1,5
Առևտորի օբյեկտում	16, 7
Տարբեր տեղերում	7,6
Արտերկորում	3,0
Փողոցում	7,6
Սպասարկման ոլորտի ձեռնարկությունում	3,0
Պատասխան չկա	3,0
Ընդամենը	100

Աղյուսակ 19-ը վկայում է, որ երեխաների 1/2-ն իրենց աշխատանքներն իրականացնում են դաշտում, որտեղ մասնակցում են հողի մշակության և կենդանիների խնամքի գործընթացներին: Աշխատանքի մյուս վայրը առևտորի օբյեկտներն են:

Այնուհետև նշվում են հիմնարկներն ու գրասենյակները, որոնք կարող են լինել արտադրանասեր և այլն: Քանդիպում են և արտերկրում աշխատելու դեպքեր: Սրանք այն երեխաներն են, ովքոր հոր կամ այլ մեծի ուղեկցությամբ մասնակցում են արտագնա աշխատանքներին՝ ՀՀ-ից դուրս (Ուսաստան, Ուկրաինա և այլն), ապա փողոցը և այլ տարբեր տեղեր: Երեխաների իսկ վկայությամբ ավելի մեծ մասն է աշխատում է փողոցում: Այսպիսով, երեխաների աշխատանքային միջավայրը անվտանգության տեսանկյունից ռիսկային միջավայր է, որտեղ անվտանգության ապահովումը թողնված է աշխատանքային իրադրության այլ մասնակիցների հայեցողությանը և հմտությանը:

Աղյուսակ 20-ում բերված տվյալները թույլ են տալիս համեմատել աշխատող և չաշխատող երեխաների գործունեության ֆիզիկական պայմանները: Առաջին և չորրորդ պատասխանների տարբերությունները խոսում են աշխատող

Անչափահասմերի աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007
Երեխաների ավելի հաճախ ռիսկային միջավայրերում հայտնվելու
հավանականության մասին:

Աղյուսակ 20. Վարձու աշխատող Երեխաների աշխատանքային պայմանները

Աշխատանքի պայմաններ	Անցյալ շաբաթ աշխատե՞լ է վճարի կամ փոխառուցման դիմաց		
	այր%	ոչ%	ընդամենը %
Փոշի, ծուխ, գազ, աղմուկ, անբավարար լուսավորություն	53,0	26,1	46,1
Շատ բարձր/ցածր ջերմաստիճաններ. խոնավություն	37,9	39,1	38,2
Վտանգավոր գործիքներ, սարքեր	3,0	4,3	3,4
Աշխատանք բարձ տեղում	4,5		3,4
Այլ	1,5		1,1
Ոչ	30,3	47,8	34,8
Պատասխան չկա	1,5		1,1
Ընդամենը	100	100	100

Սյունիքի մարգում աշխատող Երեխաները կատարում են հիմնականում ծանր շինարարական, սևագործ աշխատանքներ, վարձատրվում են շատ ցածր, նրանց «աշխատանքային տարիքը» տատանվում է 12-14-ի սահմաններում: Դանդիալը է նաև Երեխայի աշխատանքը վտանգավոր պայմաններում, օրինակ՝ աշխատանքը գազալցակայանում: Մասնագետների հետ ֆոկուս խումբ, Սյունիք, Կապան

Գործատուի հետ հարաբերությունները կարգավորվում են բանավոր պայմանավորվածության հիման վրա: Աշխատող Երեխաների 80 %-ը աշխատում է գործատուի հետ ունենալով միայն բանավոր պայմանավորվածություն: Նրանց միայն 3 % է նշել, որ աշխատանքի ընդունվելիս լրացրել է, «ինչ-որ թղթեր»: Գործատուները հաճախ են Երեխաների աշխատանքին դիմում, որպես էժան աշխատուժի, սակայն հետազոտության ընթացքում զգացվեց, որ այսօր շատերը խուսափում են դա անել, որովհետև Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարմինների և աշխատանքային տեսչության միջամտություններն անհանգստացնում են գործատուներին (տես աղյուսակ 21-ի տվյալները):

Փաստեր

Հետազոտման պահին, Արարատի մարզի Զանգակատուն գյուղում զագաֆիկացման ծրագրում ներգրավված էին անչափահասմերը, սակայն աշղեկը հրաժարվեց դրա մասին խոսել և միտեց համագյուղացիների բերած փաստարկը: Հետազոտության նյութերից

Կան առանձին հաջողակ դեպքեր, երբ Երեխաների աշխատանքը գրանցված է բոլոր պահանջվող կանոններով, Երեխաները վճարվում են ժամանակին,

Անշահման աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
անգամ հատուկ ուշադրության են արժանանում: Ծնողները հիմնականում
տեղեկացված են երեխաների աշխատելու փաստի մասին, սակայն լինում են
նաև դեպքեր, երբ այդպես չեն:

Ի դեպ, երեխաները հիմնականում աշխատում են օրավարձի մեխանիզմով, որը
գործատուի համար էլ է հարմար. որևէ գրանցում չի արվում, որևէ
պատասխանատվություն չի կրում:

Աղյուսակ 21. Աշխատող երեխաների հարաբերությունները գործատուի հետ

Գործատուի հետ հարաբերությունների քննություն	%
Պայմանագրային բանավոր պայմանավորվածությունը	7,6
Պայմանավորվածություն	48,5
Համաձայն կանչի	13,6
Գործատուն ինքն է հրավիրել	27,3
Այլ	1,5
Պատասխան չկա	1,5
Ըդամենը	100,0

4.3 Մանկական աշխատանքի ձևերը և երեխաների պաշտպանությունը
Քաղաքային փոքր բնակավայրերում երեխաների համար ավելի շատ են
աշխատանք գտնելու հնարավորությունները: Ավելի հաճախ նրանք ներառվում
են կարճատև աշխատանքներում և փոքր ձեռնարկություններում՝
ավտոսպասարկման կետեր, տրանսպորտային միջոցների շահագործում,
շինարարություն, առևտուր և այլն: Հաճախ են գրաղվում նաև մետաղներ և
շաքար հավաքելով (առանձնահատուկ «ոչ ստանդարտ» գրաղմունքներով):
Շիրակի մարզում նկատվել են երթուղային տաքսիներում աշխատող երեխաներ
(Գյումրի):

Ուսումնասիրված գյուղական և հատկապես ավանային-քաղաքային,
նախկին շրջկենտրոններ համարվող կամ արդյունաբերական բնակավայրերի
ընտանիքների մի ստվար մասը չունի սեփական հողանաս և, որպես կանոն,
աշխատում են հողի սեփականատերերի մոտ, հատկապես՝ խոշոր:

Այդ աշխատանքին հավասարապես նաև նաև երեխաները՝
անկախ դաշտում եղանակային պայմաններից: Նշվել են իրավիճակներ, երբ
երեխաները ներգրավվում են այդպիսի վճարովի ժամանակավոր
աշխատանքներում միայնակ, առանց ընտանիքի մեծերի մասնակցության (թե
բանակցություններում և, թե բուն իրականացման):

Գյուղում երեխաները հիմնականում ներգրավվում են սեղոնային

Անչափահասների աշխատանքը Դայաստամի Դանրապետությունում, Զեկույց, 2007 աշխատանքներում՝ բերքահավաք, խոտհունձ, կենդանիների խնամք: Լեռնային բնակավայրերում նրանք նաև զբաղվում են հավաքողի գործունեությամբ՝ հավաքում են վայրի հատապտուղներ, բույսեր՝ շուկայում իրացնելու նպատակով:

Մասնագետների մի մասը գտնում է, որ երեխաների աշխատանքը մեզ մոտ տարածված երևույթ չէ, իսկ անչափահասների աշխատանքին վերաբերող օրենսդրությունը գրեթե անթերի է, անգամ նախատեսված են վարչական տույժեր խախտումների դեպքում: Յետևաբար, «Վստահաբար գործատուները երեխաների աշխատանքը չեն գրանցի, չեն ձևակերպի», եթե (ֆոկուս խմբից): Ավելին, Աշխատանքային տեսչության մասնագետների կարծիքով, «Եթե ստուգումներով չի հայտնաբերվել, ուրեմն խնդիրը չկա»: Զբաղվածության ոլորտի մասնագետների վկայությամբ, իրենք անչափահասների աշխատանքին և զբաղվածությանը վերաբերող որևէ գործառույթ չեն իրականացնում:

«Ես բազմաթիվ դեպքերի ականատեսմ եմ եղել, երբ խախտվել եմ աշխատանքային պայմանները կամ աշխատաժամանակը: Խնդիրը առկա է և բարձիթողի վիճակում է ու ոչ ոք դրանով չի զբաղվում»: ԶՏԿ-ի ներկայացուցիչների հետ հարցազրույցից

Ըստ որոշ փորձագետների, երեխաների աշխատուժի շահագործումը առկա է և փաստ է: Այդ խնդիրներից մի մասը բնորոշ է այն դեպքերին, երբ երեխաների աշխատանքը «Վերահսկվում է» օտար մեծերի կողմից. օրինակ երեխան երկաթ է հավաքում, սակայն նա անձանք չի տանում հանձնում հավաքած մետաղը, որ հնարավոր առավելագույնը վաստակի, նրա փոխարեն այդ հնարավորությունը օգտագործում է մեծահասակը, ու ավելի շատ է վաստակում: Յետազոտությունը ցույց տվեց, որ որոշ երեխաներ աշխատում են բավական ծանր պայմաններում: Արմավիրում և Արարատում նշում էին աշխատող երեխաների՝ արևահարվելու կոնկրետ դեպքերի մասին:

Ուշագրավ փաստեր

Երեխաները աշխատում են շուկաներում, ծանր բեռներ են փոխադրում կամ ամրայար են հավաքում կիսաքանդ տներից, որոնք կարող են փլվել ամեն վայրկյան: Շիրակի մարզ, ֆոկուս խումբ

Երեխան ձմռան ցրտին սառը ցրով մեքենա է լվանում, իր քաշից ծանր բեռներ է կրում, շնչում է ցեմենտի ու գաղի փոշին: Փորձագիտական հարցում, Աշտարակ

Անչափահասների աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007
Ըստ Երեխաների, վարձու աշխատանք կատարելու հիմնական պատճառը
(այդպես են ներկայացնում իրենք) ընտանիքին օգնելն է: Որոշ դեպքերում
Երեխան հանդիսանում է ընտանիքի միակ աշխատունակ անդամը և ստիպված
ինքն է հոգում ընտանիքի նվազագույն կարիքները: Այս Երեխաներն իրենց
աշխատած գումարը տալիս են ծնողներին.

**Սկզբում անտարից հատապտուղ էի հավաքում, որ վաճառեմ: 13տ-ից հետո
սկսեցի աշխատել շինարարությունում, որովհետև հիվանդ հորս համար պետք
էր դեղեր գնել, շատ դժվար էինք ապրում: Վաճառող, աշխատող Երեխա**

**«... ընկերներ, կարելի է ասել, չունեմ, քանի որ փող չունես՝ կարող են
«ձեռք առնել», ծաղրել: Մենք նորմալ տուն չունենք դրա համար էլ ես 8-րդ
դասարանից դուրս եկա, որպեսզի օգնեմ ծնողներիս մեր տունը սարքենք:»¹⁶
Գյունդի, 15 տ տղա**

Աշխատելու դրդապատճառներից մյուսը իրենց կարևորված զգալու
պահանջն է: Շրջապատում, բարեկամների մոտ և այլուր խրախուսվում է
Երեխայի աշխատելու հանգամանքը, ինչն էլ խթան է հանդիսանում Երեխայի
համար: Երեխան կարծես ներքուստ իրեն կայացած է զգուն:

Կան դեպքեր, երբ Երեխաները ստիպված են լինում ընտանիքի կարիքները
հոգալու համար դիմել նաև այլ միջոցների:

**Տղան Յ անգամ ուստիկանությանում հաշվառվել է մանր հանցագործություններ
կատարելու համար, որի միջոցով լուծել է ընտանիքի հացի խնդիրը, ուստի
նրան չենք ձերբակալել: Անչափահասների գծով տեսուչ**

Երեխաների մի մասը իրենց աշխատած գումարով գնում են իրենց
համար դպրոցական հագուստ և գրենական պարագաներ, վճարում իրենց
մասնագիտական կրթության համար: Դրանք այն Երեխաներն են, որոնք
աշխատում են, որպեսզի կարիքի դեպքում ստիպված չլինեն ծնողներից գումար
խնդրել:

Սյուս պատճառը՝ մասնագիտանալ ու հնարավորություն ստանալն է.
օրինակ՝ Վաճառողի բատրոնում աշխատող Երեխաների դեպքում շարժառիթը
ներասանություն սովորելն է, իսկ վարձատրվող գումարը միայն սիմվոլիկ
նշանակություն ունի:

Սակայն, պակաս կարևոր պատճառ չէ նաև ինքնուրույն ու անկախ
լինելու, գրպանում սեփական գումար ունենալու, հաճույքները բավարարելու

¹⁶ Ընտանիքը բնակվում էր կիսակառույց սեփական բնակարանում, որը միայն պատերը ուներ:

Անչափահասմերի աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում, Զեկույց, 2007
հնարավորություն ունենալը: Եվ ըստ այդմ, աշխատելու պատճառներից մեկը հենց սեփական գումար ունենալն է (ըստ մասնագետների), որն երբեմն օգտագործվում է ոչ ցանկալի նպատակներով.

Երեխան տեսմում է, որ փողը ուժ ունի, իսկ ժնողը չի կարողանում ո՛չ արգելել և ո՛չ էլ ապահովել նրան: Թիշ թվով երեխաներ կան, որ աշխատում են ընտանիքի համար: Ավելի շատ նրանք աշխատում են իրենք իրենց համար, իրենց գումարն ունենալու համար: Յետու այդ գումարը ծախսում են ծխախոտի ու խմիչքի վրա: Զբաղվածության ծառայություն

Երեխայի աշխատելու պատճառների վերը նշված տիպերից բացի հետազոտության ժամանակ բացահայտվեցին նաև «առանձնահատուկ» պատճառներ, ինչպիսիք են մոլեխաղերի մեջ ներգրավվելը կամ հասակակիցների ու «առանձին թաղային հեղինակությունների» կողմից ճնշումները: Ավելին, երբեմն այս առանձնահատուկ պատճառները ողբերգական հետևանքի են բերում¹⁷:

Իհարկե, եթե միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները կիրառենք Հայաստանի տնային տնտեսություններում երեխաների աշխատուժի կիրառման ձևերի գնահատման ժամանակ, ապա կստացվի, որ երեխաները խստորեն շահագործվում են ընտանիքներում և հարկավոր է մտածել շահագործման վերացման մասին: Սակայն հարկավոր է հաշվի առնել երկու կարևոր գործոն: Առաջինը ընտանիքների ապահովության ցածր մակարդակն է: Աղքատության և գործազրկության դեռևս պահպանվող չափերի պայմաններում ընտանիքները ստիպված են օգտագործել երեխաների աշխատուժը, որպեսզի գոյատևեն: Երկրորդ գործոնը մշակութային առանձնահատկությունն է: Մարդկանց մեծամասնությունը համոզված է, որ աշխատանքը դաստիարակչական լուրջ միջոց է և այն անպայման պետք է կիրառել երեխաներին դաստիարակելիս: Ողջ խնդիրը երեխաների զբաղվածության չափի ճանաչման մեջ է:

Ինչպես ցույց տվեց հետազոտությունը, երկրում որևէ կոնկրետ կառույց երեխայի աշխատանքի սոցիալական հիմնախնդրի կոնկրետ հասցեատերը չէ: Թվում է, թե բոլոր առկա և գործող կառույցները իրենց մանդատներին համապատասխան կոչված են, որ պետք է ոչ միայն մտահոգ լինեն (եթե այդպես է), այլ ունենան կոնկրետ պատասխանատվություն դրանով զբաղվելու, սակայն բոլոր այդ կառույցները ուստիկանության, երեխայի պաշտպանության

¹⁷ Սյունիքի մարզում վերջին մեկ տարում տեղի են ունեցել անչափահասմերի հնքնասպանության 5 դեպքեր, որից 3-ը վերաբերում է նշված պատճառին:

բաժինների, խնամակալության հանձնաժողովների, դպրոցների և այլ կառույցների առնչությունը այս հիմնախմբին կրում է հատվածային, չկանոնակարգված բնույթ: Նշված կառույցների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ դա բացատրվում է նրանց կողմից հիմնախմբի սոցիալական համատեքստի մասին ոչ բավարար իրազեկվածություն, դրա հետ աշխատելու հնարավորությունների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների պակասով: «Եսկ մի՞թե հնարավոր է որևէ բան անել, դա ընտանիքի խնդիրն է...» և կամ «... իսկ մենք ի՞նչ կարող ենք անել...»:

Այսպիսով, այն պաշտոնյաները, ովքեր իրենց պաշտոնական պարտականություններում առնչություն ունեն անչափահասների աշխատանքի հետ, բացառում են երևույթի առկայությունը, դրան հակառակ, ի պաշտոնե երևույթին չառնչվողները վկայակոչում են բազմաթիվ դեպքեր և բերում օրինակներ:

Եզրակացությունների և առաջարկությունների ամփոփում

Դետագուտությունը ցույց տվեց, որ երեխաների աշխատանքի մեջ ներգրավվելու համար առկա են մի շարք պատճառներ. աղքատությունը, ծնողների և երեխաների կողմից կրթության չկարևորումը, կազմակերպված զբաղմունքի պակասը, ընտանիքի կազմալուծվածությունը, դիսֆունկցիոնալությունը, հ(ատկապես՝ տնտեսական գործառույթի տեսակետից) մշակույթը, երեխաների ձգտումները՝ վաղ ինքնուրույնանալու, մեծանալու, հարստանալու և այլն:

Աղքատությունը թե նախադրյալ է, և թե գործոն երեխաների՝ աշխատանքի համար: Այն հավասարապես ամենաուժեղ խթանն է ինչպես գյուղական վայրերում, այնպես էլ քաղաքային. Երեխայի աշխատանքը իր և իր ընտանիքի գոյատևման այն մեխանիզմն է, որն ընտանիքը/երեխան գտել է՝ հուսահատվելով՝ պետության, համայնքային, սեփական սոցիալական կապիտալի, այլ աջակցության ակնկալիքից կամ տրամադրվող աջակցության չափի և իրենց իրական կարիքների անհամապատասխանությունից:

Երեխայի աշխատանքի, որպես սոցիալապես անցանկալի երևույթի կարգավորումը կապված է մի շարք դժվարությունների հետ. այն դժվար է արգելքի միջոցով վերահսկելի դարձնել՝ ամենից առաջ աղքատության պատճառով.

Երեխաների աշխատանքը ֆորմալ սեկտորում (գործատուների մոտ) քողարկված բնույթ ունի, քանի որ օրենքը արգելում է երեխայի աշխատանքը

Անշահման պահանջման պահանջման դրամականությունը, Զեկույց, 2007
կամ սահմանում է մի շարք սահմանափակումներ, որոնք խանգարում են
երեխային պաշտոնապես աշխատանքի ընդունել:

Երեխաների աշխատանքը տնային տնտեսությունում, «փակ դռների ետևում» հատկապես գյուղական վայրերում դժվար է տարրերակել. այն տատանվում է մասնակցությունից (որը քաջալերվում է սոցիալական նորմերով) մինչև շահագործում, որի ճանաչումը և ըստ այդմ, համապատասխան վերաբերմունքը բախվում է ընտանեկան նորմերի, իրավիճակին միջամտելու համար համապատասխան երաշխիքների անբավարարության և էթիկական բնույթի խնդիրների հետ: Գործող օրենսդրությունը ըստ Էության ազդեցություն չունի սոցիալական երևույթների վրա և չի կարողանում ապահովել երեխաների բարեկեցությունը և պաշտպանությունը¹⁸:

Եթե բացարձակ արգելքից օրենքը անցնի երեխայի աշխատանքի համատեքստի կանոնակարգմանը, ապա հնարավոր կլինի երեխաների աշխատանքը դուրս բերել ստվերից, հետևաբար դարձնել վերահսկելի: Օրենքը պետք է նախատեսի երեխաների պաշտպանությունը այն դեպքերում, եթե նրանց պարզապես հնարավոր չէ ետ պահել աշխատանքից (բայց նախ պետք է ճանաչել և ընդունել, որ կան այդ «անհրաժեշտաբար գոյություն ունեցող» դեպքերը):

Ի լրումն, օրենքը պետք ներառի սոցիալ-տնտեսական զարգացման արդի այլ առանձնահատկություններ (մասնավորապես ոչ ֆորմալ սեկտորի պարագան և երեխաների թույլատրի աշխատանքը՝ նախատեսելով պաշտպանության անհրաժեշտ միջոցներ):

ՀՀ օրենսդրությունը օգտվում է «վնասակար, վտանգավոր» տերմինից, սակայն հստակ չէ, թե որն է սահմանը «օգտակար» բնույթի աշխատանքների և «ոչ օգտակարի» միջև: Այս չլուծված խնդիրը ստեղծում է ոլորտի կարգավորման լուրջ բարդություններ:

Օրենսդրական գործող միջոցներով երեխայի իրավունքների ճանաչումը (մասնավորապես աշխատանքը տնային տնտեսությունում, տնայնագործությունը, մանր բիզնեսը, գյուղատնտեսական աշխատանքը) և

¹⁸ Յետազոտության տվյալներով, աշխատող երեխաների 1/3-ը, 7-14 տարիքային խմբում է, այսինքն՝ օրենքով թույլատրվող աշխատանքային տարիքից ներքև է, միաժամանակ, սա այն խումբն է, որն աշխատում է անհրաժեշտությունից դրվագ, ինչը նշանակում է, որ խնդրի «իրավական» բարգմանությունը կտրված է իրական սոցիալական պրակտիկայից:

Անշահահասմերի աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007
պայքարը տնտեսական, կրթական, մշակութային և պրակտիկայւմ ընդունված
սոցիալական չափումների դեմ, արդյունավետ է միայն ֆորմալ սեկտորում: Ոչ
ֆորմալ ոլորտները պահանջում են ճկուն մոտեցումներ և շահագրգիռ ուժերի
մորիլիզացում: Պետության կողմից սահմանված օրենսդրական, վարչական,
սոցիալական և կրթական չափանիշները երեխայի աշխատելու թույլատրելի
տարիքի, աշխատանքի տևողության, պայմանների և սանկցիաների վերաբերյալ
կարևոր նախադրյալներ են, սակայն դրանք պետք է վերանայվեն՝ ի նկատի
ունենալով սոցիալական հասունության վերաբերյալ գիտական
համապատասխան մեկնաբանությունները (որոշ երեխաներ ավելի վաղ կարող
են պատրաստ լինել ինքնուրույն գործունեության անցնելու, քան օրենքն է
նախատեսում):

Ի թիվս այլ տեղեկատվական բացերի, գոյություն ունի բաց նաև
կենսաթոշակային հիմնադրամի կողմից աշխատանքային տեսչության
ներկայացվող տեղեկատվության մեջ, ինչը դժվարացնում է գործատուների
հանդեպ վերահսկողությունը:

**Ամենամեծ բազր կապված է խնդիրը կարգավորող սուբյեկտների
մանդատավորման հետ.** (ո՞վ է կոնկրետ պտասխանատուն). Օրենսդրությունը
կարող է ազդել սոցիալական սովորական պրակտիկայի վրա, եթե դրա համար
որպես միջոց ընտրի դպրոցի և ընդհանրապես կրթության վերափոխումները՝
կրթությունը դարձնելով հնարավորինս գրավիչ և ընտանիքների սպասումներին
համապատասխան: Այս ուղղությամբ ջանքերն ավելի արդյունավետորեն
կերպով կարող են ազդել երեխաների աշխատանքի երևույթի կանխման և դրա
հետ կապված խնդիրների կարգավորման վրա, քան երեխայի աշխատանքն
արգելելու պարագայում: Երեխայի աշխատանքի դեմ պայքարը արդյունավետ
կարող է լինել,. եթե այն կազմի աղքատության հաղթահարման
ռազմավարության մաս: Երեխայի՝ աշխատելու պատճառների մեղմացմանն
ուղղված այսօրինակ ջանքերը սոցիալական մորիլիզացիայի տեսանկյունից
կարող են մեծ աջակցություն ստանալ երեխայի պաշտպանության համակարգի
տարբեր դերակատարների կողմից:

Այսպիսով, երեխաների աշխատանքի փաստի դեմ պայքարելու ճանապարհը
երկուսն են. կանխարգելում և վերահսկում:

Երեխայի աշխատանքի խնդրի կարգավորման ճանապարհը կարող է լինել.

Ի. արմատական այնպիսի ինստիտուտի, ինչպիսին կրթական համակարգն է, գործառման «Ծկունացումը», երեխաների կարիքների վրա վերջինիս ֆոկուսի տեղափոխումը: Ծկունացումը պետք է տեղի ունենա կրթության ներքին ռեսուրսների վերափոխումների, հարմարացումների միջոցով, զուգահեռաբար դպրոց ներմուծելով՝ արտաքին ռեսուրսներ՝ նորովի սոցիալական տեխնոլոգիաների կիրառման համար (սոցիալական մասնագետներ):

ա. «Մասնագիտացում» պատրվակի տակ դպրոց պետք է մտնեն նաև այն հետաքրքիր, այլընտրանքային նախաձեռնությունները, որոնք արդեն իսկ փորձարկվել են տարբեր հկ–ների կողմից, կենսունակ են և որոնք թույլ կտան երեխային պահել դպրոցում՝ շարունակելու կրթությունը կամ համատեղելու կրթությունը, մասնագիտանալու հնարավորություններն ու աշխատանքը: Բոլոր այս ռեսուրսների կառավարումը կարիք ունի գիտականորեն հիմնավորված մոտեցումների. անհրաժեշտ է ստեղծել մատչելի ու ճկուն կրթության հայեցակարգ և համապատասխան ռազմավարություն: Այսպիսով, դպրոցը կարիք կունենա «մերկապարանոց», ինքնանպատակ և կյանքից կտրված կրթության փոխարեն կամ դրա հետ միասին դառնալ համայնքի, մասնավորապես երեխաների կարիքների անուղղակի բավարարման կենտրոն, անցանկալի երևույթների վրա ազդող կարևոր գործոն:

Յենց դպրոցը կարող է դառնալ երեխայի աշխատատեղը. այսինքն դպրոցը կազմակերպի երեխաների կրթությանը զուգահեռ արհեստանոցներուն տարբեր հմտությունների ուսուցանումը, արտադրանք տալը և դրանով վաստակելը, այդպիսով գործընթացը կրերվի առավել վերահսկելի և կազմակերպված դաշտ¹⁹:

բ. Մյուս իրատեսական հնարավորությունը կապված է Զբաղվածության ծառայության հետ համագործակցության հետ, որի շնորհիվ կարելի է դպրոցական արձակուրդները օգտգործել՝ ներգրավելով դպրոցականներին հանրային ծրագրերում, ինչը թույլ կտա նրանց լինել զբաղված և վաստակել: Այլ խոսքով, աշխատանքի ինքնաբուխ գործընթացից անցում կատարել վերահսկող և կազմակերպված գործընթացի:

գ. Պարտադիր կրթության «պարտադրանքից» հրաժարվելը. Սա կարող է համարվել ռեգրես երկրի համար, սկայն պրակտիկայում այն կնշանակի կրթությունը մոտեցնել կյանքի իրական պահանջներին: Այն հանգամանքը, որ

¹⁹ Այստեղ ծագում են մի շարք խնդիրներ. կազմակերպչական, իրացման և այլն, սակայն դրանք տեխնիկական են և պահանջում են փորձագիտական աջակցություն:

քոլեջներում, ուսումնարաններում մասնագիտական կրթություն (և այլն) ստանալու պայմանը երեխայի ուժամյա կրթության վկայականն է, շատ երեխաների գոկում է այդ կրթությունը ստանալու հնարավորությունից: Այս ընթացակարգը վերանայման և ճկունացման կարիք ունի: Այլապես եթե ուժամյա կրթությունը պարտադիր է, ապա պետությունը պետք է համապատասխան երաշխիքներ և պայմաններ ստեղծի դրա համար այնպես, որ պարտադիր կրթությունից դուրս մնացողներ չլինեն:

դ. Երեխաների աշխատանքին անմիջականորեն առնչվող խնդիր է նրանց մասնագիտական կողմնորոշման հարցը. հետագա գործազրկությունից խուսափելու համար պետք է գրաղվել բարձր դասարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման խնդիրներով՝ վերլուծության ենթարկելով տեղի և դրսի փորձը այս ոլորտում և ամրագրելով այս գործառույթը Զբաղվածության ծառայության մանդատում:

II. Հասարակական կազմակերպությունների մոբիլիզացումը՝ ՁԼՄ –ների հետ միասին հանրության ուշադրությունը բևեռելու աշխատող երեխաների դեպքերի մեկնաբանությունների վրա: Վճարովի և տնային տնտեսություններում երեխաների աշխատանքի առնչությամբ ճանաչողության և ավելացման եթիկական բախումների խնդրի կարգավորման համար կարիք կա ձևավորել համապատասխան հասարակական վերաբերմունք՝ տարբերակելու երեխայի մասնակցությունը՝ չարաշահումից:

III ա. Երեխայի աշխատանքի հիմնախնդրի կարգավորման համար կոնկրետ պատասխանատունների առանձնացումը և նրանց մանդատավորումը: Եթե մանդատավորումը չամրապնդվի կանոնադրություններով և ընթացակարգերով, ապա խնդիրը դարձալ կմնա առանց հասցեատիրոջ. «բոլորինը և ոչ մեկինը՝ կոնկրետ»: Ըստ հետազոտության տվյալների, հասցեատերը կարող է դառնալ ԵԻՊ մարզային բաժինը, որը կմորիլիզացնի մնացած կարևոր դերակատարներին:

բ. Կոնկրետ և առանձին դեպքերի հետ աշխատանքը՝ համայնքային ինքնամոնիթորինգ՝ մասնագիտական ուժերի մոբիլիզացման միջոցով, ինչը կներառի աշխատող երեխաների վերաբերյալ տվյալների հավաքագրումից մինչև միջամտություն և հետագա վերահսկողության կազմակերպում:

գ. Նորովի տեխնոլոգիաների ներդնում. Կարելի է հատուկ «Թեժ գծի ծառայություն» գործարկել, որին կարողանան երեխաներն անվճար դիմել, եթե աշխատանքի հետ կապված պաշտպանության կարիքներ ունեն, կամ օգտվել գործող «Թեժ գիծ» ծառայությունից:

Աշխափահասների աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007 դ. Իրավիճակի տիրապետում. Նմանատիպ հետազոտություն կարևոր է իրականացնել պարբերաբար, 3-4 տարին մեկ անգամ՝ հասկանալու և կառավարելու համար առկա միտումները:

Ե. Քարտեզագրում. Ակնհայտ պահանջ է դարձել հանրապետությունում գործող սոցիալական ոլորտի տարաբնույթ ծառայությունների քարտեզագրումը և դրանց մոբիլիզացումը թե կանխարգելման և թե վերահսկման գործընթացներում. գործունեություն, որը կարող է կանոնակարգվել ԵԻՊԲ-ի կողմից:

IV. Ոլորտում «Օգտակար և վնասակար» աշխատանքի գաղափարների ներդնումը, կարող է լրջորեն փոխել իրավիճակը այն տեսակետից, որ գործատուները օրենքի պահանջով և հասարակական կարծիքի ճնշման տակ պարտավորված կլինեն հնարավորինս անվտանգ դարձնել երեխաների աշխատանքի պայմանները. (ի դեպ, ոչ միայն երեխաների): Այսպիսով, կարևոր խնդիր է «վնասակար» աշխատանքների ցանկը հստակեցնել սկսած նվազ վնասակարից մինչև առավելագույնս վնասակար, նշելով նաև տևողությունը և այլ կարևոր պարամետրեր:

V. Գործատու-պաշտպանության համակարգ երկխոսության զարգացում ա. Գործատուին տալ որոշ հարկային արտոնություններ, խրախուսել գործատուին՝ գրանցելու երեխայի աշխատանքը և ապահովելու նրա համար կրթության հնարավորություն՝ դիտարկելով գործատուին որպես ուսուցանող և դրա դիմաց տրամադրելով որոշակի փոխհատուցում: Այդպիսով, երեխան կստանա «վարպետանալու» և հետագա մոբիլության հնարավորություն:

թ. Տեղին և արդյունավետ միջամտություններ կազմակերպելու համար կարելի է նախատեսել երիտասարդ, անփորձ գործազուրկների համար վարպետ-գործատուի մոտ «աշակերտի» կարգավիճակով աշխատանքի ընդունելու տարբերակ, տրամադրել կրթաթոշակ, թույլ տալ, որ փորձ ձեռք կբերի և որոշ ժամանակից հետո անցնի աշխատանքի: Դա պիտի լինի կազմակերպված գործընթաց՝ որոշակի ծրագրի շրջանակներում, որոշակի ժամկետով, վերահսկվող պայմաններում:

VI. Աշխատանքի պետական տեսչության տարածքային ստորաբաժանումներում առանձնացնել տվյալ տարածքի երեխաների աշխատանքի հարցերով պատասխանատու տեսուչի, որի իրավասության մեջ կմտնի. տվյալ

Անշահմանմերի աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007
տարածքում աշխատող երեխաների մասին շահագրգիռ բոլոր
ծառայություններից (դպրոց, Զբաղվածության գործակալություն,
Ոստիկանություն, երեխաների իրավունքների պաշտպանության բաժին,
Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ, Սոցիալական
ծառայություն, անհրաժեշտության դեպքում Հարկային պետական ծառայություն,
և այլն) անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը եռամսյակային,
տարեկան հաշվետվությունների կազմումը և վերլուծությունը տվյալ
տարածաշրջանների երեխայի աշխատանքի իրավիճակի վերաբերյալ:
Այնուհետև կիրականացվի հանրապետական ամփոփում և կիրավիրվեն
շահագրգիռ կողմերի քննարկումներ՝ որոշելու հետագա քայլերը:

**VII. Երեխայի աշխատանքի հիմնախնդրի հետ աշխատող մասնագետների
կարողությունների զարգացում.** Ստանալով սոցիալական մասնագետի
լրացուցիչ հմտություններ, նրանք ի վիճակի կլինեն աշխատել առանձին
երեխաների դեպքերի հետ՝ որպես դրական ուղղորդող և միջնորդ երեխայի
(ընտանիքի) և գործատուի միջև:

Հավելվածներ

Հավելված 1 Հիմնական հասկացություններ

1. **Երեխաներ** – 18 տարին չլրացած անձինք (հետազոտվել են 7-18 տարեկանները (18-ը չլրացած)):
2. **Ոչ լրիվ ընտանիք** – ընտանիք, որտեղ երեխայի կամ երեխաների դաստիարակությանք և խնամքով զբաղվում է ծնողներից միայն մեկը՝ մայրը կամ հայրը (ընտանիքից բացակայում է ծնողներից (խնամակալներից) որևէ մեկը):

3. **Աշխատուժ կամ «ակտիվ բնակչություն»** - բոլոր մարդիկ, ովքեր համապատասխանում են աշխատանք ունեցողների և գործազուրկների չափանիշներին:
4. **Աշխատող երեխա-** տնտեսապես ակտիվ երեխաների խնբում աշխատող են համարվում այն երեխաները, որոնք հայտարարում են, որ աշխատանք ունեն՝ անկախ այն բանից նրանց վճարում են, թե ոչ և անկախ գործունեության տեսակից:
- Կոնկրետ այս հետազոտության մեջ հաշվի են առնվել.
 - նախորդ տարիներին կամ 12 ամիսների ընթացքում աշխատողները, անկախ աշխատանքի տևողությունից
 - անցած շաբաթվա ընթացքում գոնե 1 ժամ աշխատածները
 - վերջին 1 ամսում աշխատածները
 - ներկայումս աշխատողները
5. **Չբաղված երեխաներ-** նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում գեր մեկ ժամ կատարել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք՝ վարձատրության կամ գործունեությունից եկամուտ ստանալու ժամկետից անկախ, ժամանակավորապես բացակայել են աշխատանքից հիվանդության, հիվանդի խնամքի, ամենամյա արձակուրդի կամ հանգստյան օրերի, աշխատավայրից դուրս ուսուցման, վարչակազմի կամ գործատուի նախաձեռնությամբ հարկադիր վճարվող կամ չվճարվող արձակուրդում գտնվելու, գործադուլի պատճառով, առանց վարձատրության աշխատել են տնային տնտեսությունում:
6. **Ինքնազբաղվածներ** - անձինք, որոնք ինքնուրույնաբար կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ զբաղված են եկամտաբեր գործունեությամբ՝ առանց աշխատողների ներգրավման կամ եթե նույնիսկ ներգրավում են աշխատողներ, դա չի կրում մշտական բնույթ:
7. **Վարձու աշխատողներ** - անձինք, ովքեր աշխատում են կազմակերպության ղեկավարության կամ գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական կամ բնեղեն փոխատուցում՝ աշխատավարձի տեսքով:

8. **Տնային աշխատանքներ** - անհատական ծառայություններ են, որոնք չեն դիտվում որպես տնտեսական գործունեություն և եկամուտ ստանալու նպատակ չեն հետապնդում: Դրանք են՝ կերակուրի պատրաստումը, լվացքը, արդուկը, առօրյա գնումները, ընտանիքի կրտսեր և հիվանդ անդամների խնամքը, տան մաքրումը, սեփական ուժերով բնակարանի, լայն սպառնան առարկաների նորոգումը և այլն:
9. **Առանց վարձատրման աշխատող ընտանիքի անդամներ** - անձինք, որոնք աշխատում են ընտանիքի անդամին կամ ազգականին պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում) օժանդակելու, օգնելու նպատակով և չեն ստանում փոխհատուցում դրամական կամ բնեղեն տեսքով:
10. **Ոչ ֆորմալ հատվածում գրաղվածներ** - անձինք, որոնք հետազոտվող շաբաթում գրաղված են եղել որպես իրավաբանական անձ պետական գրանցում չունեցող կազմակերպությունում:
11. **Գործատուներ** - անձինք, որոնք հիմնականում-մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարում են սեփական կազմակերպությունը (բիզնեսը) և աշխատանքների համար մշտապես վարձում են մեկ կամ մի քանի աշխատողներ:
12. **Վտանգավոր աշխատանք** - վերաբերում է այնպիսի գործունեությանը, որն իր բնույթով կամ որևէ այլ հանգամանքներից ելնելով վնասում է երեխայի առողջությանը, անվտանգությանը և զարգացմանը (ԱՄԿ, 20022թ., էջ 20).
- այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքում երեխաները ենթարկվում են ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնությունների
 - ստորգետնյա, ստորջրյա, վտանգավոր բարձրություններում և սահմանափակ տարածքներում աշխատանքներ
 - վտանգավոր սարքերի, գործիքների և տեխնիկայի հետ աշխատանք կամ աշխատանք, որը ենթադրում է ծանր բեռների փոխադրում կամ ձեռքի աշխատանք
 - անառողջ միջավայրում աշխատանք, որը կարող է ենթարկել երեխաներին վտանգավոր պայմանների, ընթացքի, ջերմաստիճանի տատանումների, աղմուկի ազդեցության

Անշահահասմերի աշխատանքը Դայաստանի Դանրապետությունում, Զեկույց, 2007

- հատկապես դժվար պայմաններում աշխատանք, ինչպիսիք են երկարատև կամ գիշերային պայմաններում աշխատանքը, կամ աշխատանք, որտեղ երեխան չպատճառաբանված կերպով ենթարկվում է գործատուի քնահաճույքներին:

13.Երեխաների աշխատանքի վատագույն ձևերը- (ըստ ԱՄԿ N182 Կոնվենցիայի, ներառում են).

- ստրկության կամ նման պայմանների բոլոր տեսակները
- հարկադիր աշխատանքի ձևերը
- սեռական չարաշահումները
- անօրինական գործողությունները
- վտանգավոր աշխատանքները

Հավելված 2 Այյուսակներ

Այյուսակ 1 Ընտանիքում կանոնավոր աշխատող անդամների քանակը

Կանոնավոր աշխատող անդամների թիվը	Ընտանիքների թիվը	%
0	470	44,1
1	391	36,7
2	158	14,8
3	36	3,4
4	10	,9
5	1	,1
Ընդամենը	1066	100,0

Աղյուսակ 2 Տնային տնտեսությունների բաշխումը ըստ եկամտի աղբյուրների²⁰

Տնային տնտեսության եկամտի աղբյուրները	քանակը	%
Մշտական հաստիքով աշխատելու դիմաց ստացվող աշխատավարձ	575	53,9
Կարճաժամկետ աշխատանքների դիմաց ստացվող գումարներ	303	28,4
Սեփական ձեռնարկությունից ստացված շահույթ	51	4,8
Սեփականությունը վարձով տրամադրելուց ստացված վարձավճար	9	,8
Տոկոսադրույթներից ստացված եկամուտ	11	1,0
Ինքնազբաղվածությունից ստացված եկամուտ	120	11,3
Գյուղատնտեսությունից ստացված եկամուտ	299	28,0
Արտասահմանում գտնվող բարեկամներից ստացվող փոխանցումներ	232	21,8
Հայաստանում գտնվող բարեկամներից ստացվող փոխանցումներ	91	8,5
Նպաստներ, կենսաբոշակներ և այլ տեսակի թոշակներ	548	51,4
Անձնական իրերի վաճառքից ստացված գումարներ	31	2,9
Պարտքով վերցրած գումարներ	140	13,1
Օգնություն ապրանքի կամ մթերքի տեսքով	37	3,5
Այլ	18	1,7
Պատասխան չկա	1	,1
Ընդամենը	1066	100,0

Աղյուսակ 3 Աշխատող և չաշխատող երեխաների բաշխումը ըստ սերի

Սերը	Աշխատող երեխաներ %	Չաշխատող երեխաներ %
արական	84,5	51,8
հգական	15,5	48,2
Ընդամենը	100,0	100,0

Աղյուսակ 4 Տնային աշխատանքների ծևերը

Տնային աշխատանքների ծևերը	Անցյալ շաբաթ աշխատե՞լ է վճարի կամ փոխառուցման դիմաց
---------------------------	---

²⁰ պատասխանների գումարը 100 տոկոսից ավելին է, քանի որ հարցվողները նշում են 1-ից ավելի պատասխան/

	Այն %	Ոչ %	Ընդհանուր %
Ուսելիքի պատրաստում	8	11.2	11.1
Գնումների կատարում	50	57.5	57.3
Տան մնաքղում	20	49.7	48.7
Լվացք, արդուկ	12	17.4	17.2
Վերանորոգումներ	40	5.9	7.1
Չուր կամ փայտ կրել	26	14.7	15.1
Երեխաների խնամք	4	2.4	2.5
Դիվանողի, մեծի խնամք	0	1.5	1.4
Կենդանիների խնամք	28	13.8	14.3
Հողու, այգու մշակոն	60,0	26.3	27.5
Տան շինարարություն	6	1.5	1.6
Այլ մմանատիա աշխատանքներ	2	3.8	3.8
Պատասխան չկա	2	1.3	1.3
Ընդհանուր	100	100	100

Աղյուսակ 5 Վերջին 12 ամիսների ընթացքում աշխատելու հանգամանքը

Վերջին 12 ամիսների ընթացքում աշխատելու հանգամանքը	Անցյալ շաբաթ աշխատելու հանգամանքը			
	Այն %	Ոչ %	Պատասխան չկա %	Ընդհանուր %
Այն	93,0	1,3		4,7
Ոչ	5,6	98,7	100,0	95,3
Պատասխան չկա	1,4			1
Ընդհանուր	100,0	100,0	100,0	100,0

Աղյուսակ 6. Օրվա ընթացքում տնային աշխատանքի բաշխումը

Աշխատանքների հրականացնելու օրվա հատվածը	Քանակը	%
Առավոտյան	392	27.3
Երեկոյան	273	19.0
Կեսօրին	567	39.5
Ամբողջ օրը	267	18.6
Գիշերը	2	,1
Օրվա ընթացքում	49	3.4
Երբ ազատ է լինում	4	,3
Չգիտեմ	1	,1
Պատասխան չկա	57	4.0
Այլ	6	,4
Ընդամենը	1437	100.0

Աղյուսակ 7 Վարձատրության ձևերը

Վարձատրվելու ձևերը	Քանակը	%
Գանձարկդի մոտ ստորագրում է ցուցակը և ստանում	4	6.2
Ծնողները, ազգականներն են ստանում	10	15.4
Գործատուն կամ մեկ ուրիշը առձեռն փոխանցում են	43	66.2
Ծառայությունը մատուցելուց հետո ինքը վերցնում է իր մասը	2	3.1
Ոժվարանում է պատասխանել	1	1.5
Այլ ձևով	2	3.1
Պատասխան չկա	3	4.6
Ընդամենը	65	100
Հաճակարգի բացակայություն	1001	
Ընդամենը	1066	

Աղյուսակ 8 Երեխաների կողմից աշխատանքը կատարելու վայրը

Աշխատանքը կատարելու վայրը	Քանակը	%
Դաշտ, այգի, հողամաս, անտառ	21	32,3
Առևտութիւն որևէ օբյեկտ	11	16,9
Փողոց	10	15,4
Շինարարություն	9	13,8
Իր տանը	5	7,7
Ծառայություններ մատուցող որևէ հիմնարկ	5	7,7
Գրասենյակ	3	4,6
Ուրիշի տանը	2	3,1
Ընդամենը	65	107,7

Աղյուսակ 9 Մասնագիտական կրթությունը և աշխատանքը

Որևէ մասնագիտական կրթություն ստացե՞լ է կամ ստանու՞մ է	Անցյալ շաբաթ աշխատե՞լ է վճարի և փոխհատուցման դիմաց			
	Այո %	Ոչ %	Պատասխան չկա %	Ընդհանուր %
Այո	14.1	8.1		8.4
Ոչ	84.5	90.6	50	90.4
Պատասխան չկա	1.4	1.2	50	1.3
Ընդհանուր	100	100	100	100

Աղյուսակ 10 Դպրոց չհաճախելու պատճառները

Դպրոց չհաճախելու պատճառները	Անցյալ շաբաթ աշխատե՞լ է վճարի կամ փոխհատուցման դիմաց		
	Այո %	Ոչ %	Ընդհանուր %
Ընտանիքը ի վիճակի չէ հոգալու դպրոցի ծախսերը	10.7	5.4	6.1
Ի վիճակի չէ կրթական ծրագիրը հաղթահարել	0	3.4	3
Յետաքրքրված չէ ուսումնվ	7.1	2	2.6
Տարիքը փոքր է	0	3	2.6
Քաշմանդամությունը	0	2.5	2.2
Ընտանիքը դպրոցը չի արժեվորում	0	1.5	1.3
Աշխատում է վճարի դիմաց ընտանեկան բիզնեսում կամ ֆերմայում	3.6	1	1.3
Օգնում է տնտեսության աշխատանքներում	3.6	1	1.3
Յիշանդրություն	0	5	4
Պատասխան չկա	0	2.5	2.2
Այլ	0	1.5	1.3
Ընդհանուր	100	100	100

Աղյուսակ 11. Անցյալ կիսամյակում երեխաների՝ դասերից բացակայության քանակը

Անցյալ կիսամյակում բացակայությունների թիվը	քանակը	%
Ոչ մի անգամ	402	23,3
1-2անգամ	948	54,9
1 շաբաթ	261	15,1
Դամարյա 1 ամիս բացակայել են	89	5,2
Դասերի կեսը բաց են թողել	10	,6
Դամարյա դասի չի գնացել	1	,1
Դժվարանում է պատասխանել	1	,1
Պատասխան չկա	14	,8
Այլ	2	,1
Ընդամենը	1728	100


**Աղյուսակ 12. Երեխայի մոտ առողջական խնդիրների առաջացման պատճառները
(ըստ ծնողների)**

Վնասվածքի հիմնական պատճառը	քանակը	%
Չգիտեն	71	16,7
Աշխատանքը	19	4,5
Կյանքի վատ պայմանները	66	15,5
Խաղը, սպորտը	54	12,7
Ոչ մեկը	13	3,1
Վարակ	28	6,6
Մրսածություն	90	21,1
Թերսնումը	7	1,6
Վրար	4	,9
Այլ պատասխան	71	16,7
Պատասխան չկա	3	,7
Ընդամենը	426	100,0


Հավելված 3

Գծանկարներ


Գծանկար 1 Ուսումնասիրված տնտեսություններում ընտանիքների կազմը.



Գծանկար 2. Աշխատող և չաշխատող երեխաների համար վճառվածքների քանակը Վերջին 12 ամիսների ընթացքում



Գծանկար 3 Ծաբաթական օրերի ծանրաբեռնվածությունը



Հավելված 4

Ամփոփագրեր

**Աղյուսակ 1. Դարցվածների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը՝ ըստ հարցման
մեթոդների**

Հարցման մեթոդ	Հարցվողների տիպը կամ ոլորտը	Հարցվողների թիվը
Ստանդարտացված հարցազրույց տնային տնտեսություններում ա/ Տնտեսության և երեխայի մասին առավել իրազեկված անդամ. ընդհանուր՝ 1066 արական 175 իգական 841	գլխավոր ընտանիքի զափահաս զավակ քույր թոռ թռնուկի հարս մայր հայր այլ անդամներ	692 132 19 14 19 143 21 3 23
բ/ Աշխատող երեխա. ընդհանուր՝ 65	■ գյուղատնտեսություն ■ առևտուր ■ շինարարություն ■ տնայնագործություն ■ ծառայությունների ոլորտ ■ գրասենյակ ■ գործարան	27 21 11 5 7 3 2

Ֆոկուս մասնագետների ընդհանուր՝ 9 ընդհանուր՝ 107 արական՝ 39 իզական՝ 68	խումբ հետ.	<ul style="list-style-type: none"> ▪ մանկավարժ ▪ ԵԻՊԲ մասնագետ ▪ գյուղապետ ▪ ԱԳԲ ոստիկան ▪ ՀԿ-ի ներկայացուցիչ ▪ Հիվանդանոցի/պոլիկլինիկայի աշխատակից ▪ ԶԼՄ ▪ ԽՀ անդամ ▪ Իրավաբան-փորձագետ ▪ ՍԾՏԳ ▪ Եկեղեցի 	21 33 3 14 15 2 2 9 2 3 3
Ազատ հարցազրույց գործառուների հետ ընդհանուր՝ 17 արական՝ 15 իզական՝ 2		<ul style="list-style-type: none"> ▪ շինարարություն ▪ մշակույթ ▪ առևտուր ▪ թատրոն 	7 2 6 2
Ուղեղների մասնագետների ընդհանուր՝ 19 արական՝ 15 իզական՝ 14	գրոհ հետ²¹.	<ul style="list-style-type: none"> ▪ Զբաղվածության ոլորտ (գլխավոր մասնագետներ) ▪ Աշխատանքի տեսչություն ▪ Սոցիալական հարցերի նախարարություն (գլխավոր մասնագետներ, բաժնի պետեր) ▪ ԵՊԲ պետ ▪ ԱԳԲ պետի տեղակալ ▪ ՀԿ-ի ներկայացուցիչ ▪ Դպրոցի տնօրեն ▪ Ազգային վիճակագրական ծառայություն (գլխավոր մասնագետներ) 	2 1 2 2 2 2 7 1 2

²¹ Լրացուցիչ կիրառված մեթոդ

<p>Աշխատող երեխաների դեպքերի ուսումնասիրություն. ընդհանուր՝ 21 արական՝ 20 իգական՝ 1</p>	<ul style="list-style-type: none"> ▪ առևտուր ▪ գյուղատնտեսություն ▪ բեռնակրություն ▪ շինարարություն ▪ սպասարկում ▪ բանվորություն 	4 3 1 6 5 1
<p>Փորձագիտական հարցում²². ընդհանուր՝ 10 արական՝ 8 իգական՝ 2</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Աշխատանքի պետական տեսչություն ▪ ԶՏԳ ▪ Ազգային վիճակագրական ծառայություն 	4 5 1
<p>Ֆոկուս խումբ աշխատող երեխաների հետ ընդհանուր՝ 26 արական՝ 17 իգական՝ 9</p>	<ul style="list-style-type: none"> ▪ շինարարություն ▪ ամրալարերի վաճառք ▪ առևտուր ▪ սպասարկում ▪ գյուղատնտեսական աշխատանքներ (բերքահավաք) 	5 4 3 3 11

Հավելվածների ամփոփագիր

#	Հարցվածների տիպերը	թիվը
1	Տնային տնտեսություններ	1066
2	Աշխատող երեխա ²³	65+26+21
3	Մասնագետներ	107+19
4	Գործատուներ	17
Ընդամենը		1321

²³ Ֆոկուս խմբերը և ազատ հարցազրույցներին հրավիրվել են աշխատող երեխաներ, որոնք հայտնաբերվել են ծնագնդի մեթոդով, ի լրումն տնային տնտեսությունների հարցումների միջոցով հայտնաբերվածների:

Հավելված 5 Դեպքերի համառոտագրումներ և մեջբերումներ

Դեպք1:

Ապրում են 3-ով՝ մայրը, որը հիվանդ է, փոքր եղբայրը և ինքը: Տղան, 16տ է, աշխատում է Վանաձորի Տարոն թաղամասում՝ շինարարությունում, որտեղ ավտոլվացման կետ են սարքում: Աշխատում է դրսում: Օրեկան վաստակում են 1.500 դրամ: Որևէ պայմանագիր չի կնքվել իր և գործատուի միջև, միայն բանավոր պայմանավորվածություն է եղել իր և գործատուի միջև: Աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը 9-ին և վերջանում երեկոյան ժամը 9-ին: Աշխատանքը իր համար գտել էր փոքր եղբայրը, որը աշխատում է գազալցակայանում: Իր ասելով փոքր եղբայրը իրենից ավելի ճարպիկ է ու ավելի տեղեկանում, թե որտեղ ինչ գործ կա: Աշխատավարձը վճարվում է կանխիկ, ամիսը 1 անգամ: Ինքը աշխատավարձը վերցնում է 2 անգամ, քանի որ ընտանիքը գոյատևում է հիմնականում իր աշխատած գումարով: Աշխատանքի ընթացքում եղել է, որ վատ է զգացել, բայց գործատուին չի ասել, որովհետև մտածել է, եթե ինանան, որ հիվանդ է, աշխատանք չեն տա: Քանի որ հիմա դպրոցները սկսվել են, փոքր եղբայրը դասերից հետո է գնում աշխատելու: Ավտոմեքենաների ապակիներն են լվանում, յուրաքանչյուր

ավտոմեքենայի ապակիները լվանալու համար նրան վճարում են 100 դրամ: Գոհ է, որ իրեն աշխատանքի են վերցրել, իր ասելով. «Տեսել են, որ դժվար ենք ապրում, խղճացել են ու վերցրել աշխատանքի»: **Վաճածոր, 16 տ. տղա**

Դեպք 2:

«Երեխան աշխատում է կահույքագործության հիմնարկությունում, և մասնակցում է դռների ու պատուհանների պատրաստմանը, փայտ է սղոցում, բերնակրություն անում, օգնում վարպետներին: «Վարպետանում է կամաց կամաց» և արդեն ինքնուրույն իրենց տան համար 2 աթոռ է պատրաստել: Երեխան չափազանց գոհ է իր աշխատանքից: Աշխատանքը վարձատղվում է գործարքային սկզբունքով: Աշխատանքի ընդունելուց առաջ հիմնարկությունը պահանջել է ծնողների համաձայնության մասին գրություն, ինչպես նաև կնքել է պայմանագիր: Անսվա կտրվածքով երեխան վաստակում է 50-60 հազար դրամ: Իր աշխատանքով գնել է իրենց ձմեռվա վառելափայտը և կարտոֆիլը, ինչպես նաև ունի բազմաթիվ նպատակներ, որոնք կապում է իր աշխատանքի հետ և հույս ունի, որ մի քանի ամիս հետո իրեն ավելի բարձր կվարձատրեն: **Երևան, 16 տ. տղա**

Դեպք 3:

15 տարեկան երեխան աշխատում է իրենց տնից ոչ շատ հեռու գտնվող պեմզաբլոկի արտադրման մասնավոր արտադրամասում: Արտադրամասը դրսում է, ծածկ չունի, աշխատում են արևի տակ: 5 ամիս է, որ աշխատում է այդ արտադրամասում: Գործատուն ինքն էր նրան կանչել և գործ առաջարկել: Քանի որ նա 13 տարեկանից աշխատել է տարբեր տեղերում, Վանաձորում գիտեն իրեն և հաճախ, եթե որևէ գործ է լինում, իրենք՝ գործատուներն են առաջարկում: Աշխատում է առանց որևէ պայմանագրի, բանավոր համաձայնությամբ: Աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը 9-ին, և վերջանում երեկոյան ժամը 7-ին: Ընդմիջումը 1 ժամ է, ընդմիջնանը գալիս է տուն, տրամսպորտի գումար չի վճարում: Աշխատավարձը վճարվում է 15 օրը մեկ անգամ: Աշխատավարձը տալիս է մորը, այսուր են առնում, շաքարավազ, իր և մյուս երեխաների համար հագուստ են առնում: Նա չի ցանկանում կորցնել աշխատանքը, որովհետև իր նախկին աշխատանքը շատ ծանր է եղել, քան ներկայինս: Երբ 18տ լրանա, կգնա բանակ, որից հետո կմեկնի աշխատելու Ռուսաստնի Դաշնությունում:

Դեպք 4:

Աշխատելու նպատակով հայրը մեկնել էր Ռուսաստան, սակայն որևէ տեղեկություն չէր ուղարկում և իրենք ապրում էին ծայրահեղ աղքատության մեջ: Այդ ընթացքում երեխաները իրենց մայրիկի հետ հաճախ գնացել են դաշտեր՝ բանջար հավաքելու, քանի որ ուտելու այլ բան չունեին: Մի օր էլ երբ սուճկ է հանդիպել, հավաքել են և քանի որ 2 օր սոված էին մնացել իրենց տեղում կրակ արել՝ եփելու: Կերել են հիմնականում 2 քույրերը (ինքը չի կերել, որ քույրերը կուշտ լինեն), փոքր քրոջը բժիշկների միջամտությամբ հնարավոր եղավ փրկել, իսկ մեծը թունավորումից մահացավ: «...Ես որոշեցի, որ մեծանան երբեք աղքատ չպետք է լինեմ ու դրա համար էլ սկսեցի աշխատել 11 տարեկանից»: Վանաձոր, 14 տարեկան աշխատող տղա

Դեպք 5:

«Երկու եղբայրները աշխատում են «Սեմյա» սուրբի գործարանում որպես բանվորներ: Տղաներին աշխատանքի ընդունելուց գործատուն պահանջել է ծնողների համաձայնության մասին գրություն, ինչպես նաև կնքել է պայմանագիր: Իարցազրույզի անցկացման օրը լրանում էր տղաների 15, տարին և գործատուն յուրաքանչյուրին 5000-ական դրամ նվեր էր տվել, որով տղաներն իրենց համար հագուստ էին գնել:

Աշխատանքը տևում էր առավոտյան ժամը 9:00-ից մինչև 17:00-ն: Ամսական յուրաքանչյուրը ստանում է 50 000- ական դրամ, որը տալիս են ծնողներին և ծախսվում է ընտանիքի կարիքները հոգալու համար. քանի որ երեխաները նշում են, որ միայն իրենց հոր աշխատանքը չէր բավականացնում ընտանիքին: **Երևան**

Դեպք 6:

«... աշխատում է շինարարությունում, որպես բանվոր, կատարում է

բավականին ծանր աշխատանք՝ ծանր պարկեր է վերցնում, քարեր և այլն: Աշխատանքը կատարում բարձրության վրա, երեմն վախենում է ներքև նայել, հատկապես բարձր հարկերից: Աշխատանքը տևում է առավոտյան ժամը 9:00-ից մինչև 19:00-ն: Որևէ աշխատանքային պայմանագիր չունի կնքած: Ամսական ստանում է 90 000 դրամ, գումարը տալիս են ժամանակին: **Երևան**

Դեպք 7:

Սյունիքի մարզի Ագարակ գյուղում տիրող իրավիճակը յուրահատուկ է. գյուղը մոտ է գինվորական գորամասին, այնտեղ, տիրում են «գողական օրենքները» անշափահաս երեխաների փոխհարաբերություններում: Գոյություն ունի անշափահասների մի խումբ, որը մյուս երեխաներին պարտադրում է «հարկ» վճարել 300-800 ԱՄՆ դոլար: Ընդ որում, 3 նմանատիպ դեպքեր ավարտվել են երեխայի ինքնասպանությամբ: Վերոհիշյալ և հարակից գյուղերում չեն գործում ոչ մի տեսակի սոցիալ-հոգեբանական ծառայություններ: Ոստիկանությունը պարզապես անզոր է այս հարցում:

Մեջբերումներ

Վարքի պատճառով դպրոցից հեռացված 2 երեխաներ կան մեր գյուղում, որոնք շատ վատ համբավ ունեն: Նրանք փող են ուզել իմ տղայից, ստիպել են, որ գողանա և նրանց տա, անընդհատ անհանգստացրել են: Տղաս մի քանի օր աշխատեց սահմանի վրա, որը շատ անապահով էր: Այդ օրն էլ ընկել են հետևից, նա փախել է, փորձել է պաշտպանվել, և այդ դժբախտ դեպքը տեղի է ունեցել: Ժամանակի ընթացքում պարզ է դարձել, որ մեր հարևանի տղային և այս խումբը նեղել է, դարձյալ գումարներ է պահանջել, իսկ այդ տղայի եղբայրը, որպեսզի իր փոքր եղբորը հանգիստ թողնեն պահանջված 800 դոլարը հավաքում է սուսուփուս տանում-հասցնում դրամց: Մի օր այդ երեխայի մայրը պատմեց, որ վախենում է, որ երեխան էլ ինքնասպան կլինի, քանի որ հոգնել է այդ հաշիվներից: Սակայն վախից ընտանիքը ոստիկանություն չի դիմում: **հատված ծնողի հետ հարցազրույցից**

8-րդ դասարանում կրիվ արեցինք դպրոցի մի քանի տղաներով, իրար ծեծեցինք: Հետո մայրս գնաց ոստիկանություն ու բողոքեց, ինձ վերցրեցին հաշվառման: Անչափահասների տեսուչը գալիս էր դպրոց, ինձ կանչում էին դպրոցի տնօրենի մոտ: Ես դրանից վատ էի զգում, «կարծես խոշոր հանցագործ լինեի», ուսուցիչները հարմար առիթի դեպքում երեսով էին տալիս իմ արարքը, որոշեցի դուրս գալ դպրոցից և աշխատել, ինարավոր չեր մնալ դպրոցում այլևս: **Աշխատող երեխայի հետ հարցագրույց, Արմավիր**

Եզրիների շրջանում ընտանիք կազմում են 12 տարեկանից սկսած, և բնականաբար չեն շարունակում ուսումը, չնայած, որ գյուղում (**Ռյա Թազա**), կա 10-ամյա դպրոց: Ամուսնացող երեխաները 6-րդ դասարանից դուրս են գալիս ընտանիք պահելու համար: Դպրոցը շարունակում են միայն նրանք, ովքեր չեն ամուսնանում՝ հիմնականում տղաները:

Ֆոկուս խունք նասնագետների հետ

Լերմոնտովյում կրթությունը առաջնային տեղում չի գտնվում: Նախնարաջ գյուղը ծերացող է, կան թաղամասեր, որտեղ առհասարակ չկան անչափահաս երեխաներ, գյուղում քիչ չեն ընտանիքները, ում երեխաները դպրոց չեն հաճախում, ինչը պայմանավորված է ծնողների անտարբերությամբ, և նրանց կողմից կրթության թերագնահատմամբ: Ֆոկուս խունք

...Տղաս շատ խելացի երեխա էր, դպրոցում լավ էր սովորում: Նա (նկատի ունի ինքնասպանությունը) արվել է գումարի պատճառով (350-400 դոլարի մասին է խոսքը), որով ծնշում են գործադրել նրա վրա: Նա դպրոցից դուրս եկավ, կայարանում աշխատանք գտավ, երկու անգամ տվեց այդ գումարը, բայց երրորդ անգամ չկարողացավ, մեզ էլ բան չասեց, ամաչեց երևի... Ծնողի հետ հարցագրույցից

Դավելված 6

Աշխատանքային գործիքներ